Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

12-13(687-688)
20.05.2023
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԵՂՄՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

Մայիսի 12-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատուների կողմից ներկայացվել են արցախցիների կրթության իրավունքի վրա Արցախի շրջափակման ազդեցության հետևանքները: Այս մասին ֆեյսբուքի իր էջում գրառում է կատարել Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը.

«Հատկապես հիմա, երբ դպրոցն ավարտելուց հետո հարյուրավոր երիտասարդներ փորձում են հիմք դնել հետագա բարձրագույն կամ մասնագիտական կրթության, շրջափակման հետևանքով զրկված են Արցախից դուրս կրթություն ստանալու կամ մասնագիտություն ընտրելու, Արցախից դուրս միջբուհական քննություններին մասնակցելու հնարավորությունից: Նույնպիսի խնդիրների առաջ են կանգնած նաև շրջափակման հետևանքով Հայաստանի Հանրապետությունում մնացած մեր այն քաղաքացիները, ովքեր ցանկանում են կրթությունը շարունակել արցախյան բուհերում:

Խորհրդակցության ժամանակ քննարկվել են այս և մյուս խնդիրները, դրանց լուծման ճանապարհները, որոշում է կայացվել առաջիկայում քննարկումներ կազմակերպել Հայաստանի Հանրապետության կրթական ոլորտի գործընկերների հետ՝ ծագած խնդիրները լուծելու հնարավոր եղանակները, դրանցից առավել օպտիմալ ու արդյունավետ տարբերակները որոշելու նպատակով:

Արցախի Հանրապետության կառավարության կողմից ձեռնարկվելու են բոլոր միջոցները, ստեղծվելու են հնարավոր բոլոր պայմանները Արցախի երիտասարդության կրթության իրավունքի իրացման համար»:

ՆՈՐԱՅՐ ՄԿՐՏՉՅԱՆ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՎԱՏ ՉԵՆ, ԲԱՅՑ ՊԵՏՔ Է ՁԳՏԵԼ ԱՎԵԼԻՐԻՆ

Մայիսի 12-ին Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան հ. 1 հիմնական դպրոցի դահլիճում տեղի է ունեցավ 2022-2023 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների ամփոփման և մրցանակային տեղեր գրաված մասնակիցների պարգևատրման արարողությունը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը, ողջունելով ներկաներին, շնորհավորեց օլիմպիադային մասնակցած և մրցանակային տեղեր գրաված աշակերտներին:

«Օլիմպիադայի վերլուծության արդյունքները, սակայն, առաջ են բերում որոշ հարցեր: Մտահոգիչ է, որ «Ֆիզիկա» առարկայից օլիմպիադայի մասնակից չենք ունեցել: Կան դպրոցներ, որոնք քիչ թվով մասնակիցներ են ներկայացրել: Պետք է նշել, որ օլիմպիադան դպրոցը գնահատելու չափանիշներից մեկն է: Ուրախալի է, որ Մարտակերտի շրջանի Վաղուհաս համայնքի միջնակարգ դպրոցից 16 աշակերտ

մասնակցել է օլիմպիադային «Կենսաբանություն» և «Քիմիա» առարկաներից», - նշեց Ն. Մկրտչյանը:

Նախարարը բարձր գնահատեց ուսուցիչների կատարած աշխատանքը՝ շնորհավորելով և շնորհակալություն հայտնելով նրանց, միևնույն ժամանակ նշելով. «Արդյունքները վատ չեն, բայց պետք է ձգտել ավելիին»:

Վերջում կրկին արտահայտելով իր մտահոգությունները որոշ առարկաներից օլիմպիադայում մասնակիցներ չունենալու կապակցությամբ՝ Ն. Մկրտչյանն ընդգծեց, որ պետք է աշխատել այդ ուղղությամբ:

Օլիմպիադայի արդյունքների հանգամանալից վերլուծությամբ զեկուցումով հանդես եկավ ԱՀ ԿԳՄՍՆ կրթության և գիտության վարչության պետ Ռայա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԸ:

Ներկայացնում ենք այն:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արցախի դպրոցականների 2022-2023 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքների

«Կրթությունը սոսկ դպրոցի գործը չէ, դպրոցը տալիս է այդ կրթության բանալին, իսկ կրթությունը մարդու ողջ կյանքն է ...»

Լունաչարսկի

Կարևորելով դպրոցականների ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը՝ դպրոցականների առարկայական օլիմպիադաների նպատակը շարունակում է մնալ աշակերտների մեջ ազատ մտածողության ձևավորումը, աշխատասիրության և բարձր պատասխանատվության միջոցով ցանկալի վերջնարդյունքի հասնելը:

Կրթության համակարգում իրականացվող բոլոր բարեփոխումները մեկ նպատակ են հետապնդում՝ կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն իր գիտելիքներով ու կարողություններով գերազանցի նախորդ սերնդին:

Ուսումնառության ընթացքում դպրոցականների մեջ ձևավորված արժեքները լավագույնս դրսևորվում են ներդպրոցական, արտադպրոցական, միջդպրոցական, շրջանային կամ հանրապետական տարբեր միջոցառումներում ու մրցույթներում:

Ակնհայտ է, որ օլիմպիադայի նպատակն է նաև տաղանդավոր, շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաների հայտնաբերումը, ուսումնական առարկաների նկատմամբ նրանց հետաքրքրությունների զարգացումը, այդ առարկաներից խոր ու կայուն գիտելիքներ ստանալուն նպաստելը:

Ընդհանուր առմամբ ուսուցման նպատակն է խթանել աշակերտի մտածողությունը, կատարելագործել նրա ինքնուրույնությունը, հնարավորություն տալ պատկերավոր մտածելու, և որ ամենակարևորն է, այդ ամենը գրագետ ի ցույց դնել: Նման միտում ունեն նաև դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

ԱՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը նախապատրաստելու և անցկացնելու նպատակով յուրաքանչյուր տարի ստեղծվում են հանրապետական կազմկոմիտե և առարկայական հանձնաժողովներ, որոնց անվանական կազմը նախարարի հաստատմանն է ներկայացնում կրթության և գիտության վարչությունը: Կազմկոմիտեն մշակում է օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների իրականացման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը, ինչպես նաև վերահսկողության իրականացման, լուսաբանման, թափանցիկության և մասսայականության ապահովման մեխանիզմները՝ օլիմպիադայի ողջ ընթացքում պահպանելով նրանց հավասար հնարավորությունները, ապահովելով գործընթացի անաչառությունը: Այս տարին ևս բացառություն չէր:

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հոկտեմբերի 28-ի N 547/Մ հրամանի համաձայն՝ ս.թ. հունվարի 18-ից փետրվարի 9-ն ընկած ժամանակահատվածում Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում 16 առարկաներից (հայոց լեզու, հայ գրականություն, ռուսաց լեզու, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, պատմություն, աշխարհագրություն, քիմիա, կենսաբանություն, մաթեմատիկա, ֆիզիկա, ինֆորմատիկա, աստղագիտություն, հայոց եկեղեցու պատմություն, նախնական զինվորական պատրաստություն անցկացվեց Արցախի դպրոցականների 2022-2023 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը՝ Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլի ժամանակացույցի համապատասխան՝ յուրաքանչյուր առարկայի հատկացվելով առանձին օր: Առարկայական օլիմպիադայի 2-րդ փուլի շրջանային (քաղաքային) առաջադրանքները հումանիտար առարկաներից կազմել են նախարարության մասնագետները, իսկ բնագիտական առարկաներից տրամադրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը: Հանրապետական փուլի առաջադրանքները, ինչպես նախորդ տարիներին, բոլոր առարկաներից մեզ է տրամադրել ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը:

Շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինները օլիմպիադայի շրջանային (քաղաքային) փուլի արդյունքների ամփոփման հիման վրա հանրապետական փուլին մասնակցելու իրավունք են տվել 330 աշակերտի:

Բոլոր առարկաներից գրավոր աշխատանքների ստուգումները կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված առարկայական ստուգող հանձնաժողովների կողմից սկսվել են նույն օրը, անհրաժեշտության դեպքում՝ շարունակվել նաև հաջորդ օրը: Արդյունքները հանրապետական հանձնաժողովի կողմից տեղադրվել են նախարարության www.edu.nk.am կայքէջում: Օլիմպիադայի 11 մասնակիցներ բողոքարկման օրերին հանրապետական հանձնաժողովին են դիմել մաթեմատիկա, հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն և ՆԶՊ առարկաներից, որի արդյունքում ՆԶՊ առարկայի մեկ աշակերտի գրավոր աշխատանքի վերստուգումից հետո գնահատականը բարձրացվել է մեկ միավորով:

☞2

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Արցախի դպրոցականների 2022-2023 ուստարվա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքները

1 ☞ Ստորև ներկայացվում է մասնակիցների թվաքանակը՝ ըստ շրջաններից ստացված հայտերի.

Շրջանը /քաղաքը/	2022-2023
Ք. Ստեփանակերտ	149 մասնակից
Ասկերանի շրջան	50
Մարտակերտի շրջան	57
Մարտունու շրջան	54
Հադրութի շրջան	8
Շուշիի շրջան	11
Շահումյանի շրջան	1
Ընդամենը	330 մասնակից

Օլիմպիադայի ընթացքում եղանակային պայմանները և տրանսպորտային խնդիրներն օլիմպիադային մասնակցելու համար երաշխավորված մի խումբ աշակերտների բացակայության պատճառ դարձան: 16 աշակերտ չկարողացավ մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին: Ներկայացնենք շրջվարչակազմերի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների կողմից երաշխավորված աշակերտների ու նրանց փաստացի մասնակիցների թվաքանակը՝ ըստ առարկաների.

ՀՀ	Առարկան	2022-2023 ուստարի հայտով	2022-2023 ուստարի փաստացի
1	Հայոց լեզու	77	74
2	Հայ գրականություն	7	7
3	Ռուսաց լեզու	103	99
4	Անգլերեն	40	38
5	Ֆրանսերեն	2	2
6	Պատմություն	13	12
7	Աշխարհագրություն	11	10
8	Մաթեմատիկա	27	27
9	Քիմիա	8	6
10	Կենսաբանություն	17	15
11	ՀԵՊ	8	8
12	ՆԶՊ	17	16
13	Ֆիզիկա	-	-
14	Ինֆորմատիկա	-	-
15	Գերմաներեն	-	-
16	Աստղագիտություն	-	-
	Ընդամենը	330	314

Մասնակիցներ չունեցանք ֆիզիկա, ինֆորմատիկա, աստղագիտություն և գերմաներեն առարկաներից:

Բացակաների քանակական պատկերն ըստ շրջանների և առարկաների հետևյալն է.

ՀՀ	Առարկան	Ստեփանակերտ	Ասկերանի շրջան	Մարտակերտի շրջան	Մարտունու շրջան	Շուշիի շրջան	Հադրութի մ/դ	Շահումյանի շրջան	Ընդամենը
1	Հայոց լեզու	1	-	1	1	-	-	-	3
2	Հայ գրականություն	-	-	-	-	-	-	-	-
3	Ռուսաց լեզու	1	-	1	-	2	-	-	4
4	Անգլերեն	1	-	1	-	-	-	-	2
5	Ֆրանսերեն	-	-	-	-	-	-	-	-
6	Պատմություն	-	-	-	-	1	-	-	1
7	Հայոց եկեղեցու պատմություն	-	-	-	-	-	-	-	-
8	Մաթեմատիկա	-	-	-	-	-	-	-	-
9	Աշխարհագրություն	-	-	1	-	-	-	-	1
10	Կենսաբանություն	-	-	1	-	-	1	-	2
11	Նախնական զինվորական պատրաստություն	1	-	-	-	-	-	-	1
12	Քիմիա	-	-	1	1	-	-	-	2
13	Գերմաներեն	-	-	-	-	-	-	-	-
14	Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	-
15	Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-
16	Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-
	Ընդամենը	4	-	6	2	3	1	-	16

Օլիմպիադայի ընթացքում բացականեր չեն եղել հայ գրականություն, մաթեմատիկա, հայոց եկեղեցու պատմություն և ֆրանսերեն առարկաներից: Իսկ ըստ շրջանների՝ բացակա չունեցանք միայն Ասկերանի շրջանի օլիմպիական թիմից:

Օլիմպիադայի արդյունքների ամփոփումից հետո պարզվեց մի փաստ. վերջին 20 տարվա ընթացքում չի եղել դեպք, երբ մեկ աշակերտ մրցանակային 1-ին տեղ չգրավեր:

Ըստ առարկաների մրցանակային տեղերի և ակտիվ մասնակցության համար պարգևատրվողների քանակական պատկերն է՝

Առարկա	1-ին տեղ	2-րդ տեղ	3-րդ տեղ	ակտիվ մասնակից	Մրցանակային տեղ/ակտ. մասն.
Հայոց լեզվից	-	8	14	8	22/8
Ռուսաց լեզվից	-	-	1	2	1/2
Անգլերենից	-	1	5	1	6/1
Գերմաներենից	-	-	-	-	-
Պատմությունից	-	2	3	2	5/2
Հայոց եկեղեցու պատմությունից	-	-	2	3	2/3
Աշխարհագրությունից	-	-	-	1	-/1
Մաթեմատիկայից	-	3	2	5	5/5
Ֆիզիկայից	-	-	-	-	-
Նախնական զինվորական պատրաստությունից	-	1	3	4	4/5
Հայ գրականությունից	-	-	-	2	-/2
Ֆրանսերենից	-	1	-	-	1/-
Քիմիայից	-	-	-	1	-/1
Կենսաբանությունից	-	-	-	1	-/1
Ինֆորմատիկայից	-	-	-	-	-
Ընդամենը	-	16	30	31	46/31

Մրցանակային տեղեր չունեցանք հայ գրականություն, քիմիա, կենսաբանություն և աշխարհագրություն առարկաներից: Մրցանակային տեղերի մեծ մասը բաժին հասավ հայոց լեզու (22 մրցանակային տեղ), անգլերեն (6 մրցանակային տեղ), մաթեմատիկա (5 մրցանակային տեղ) և պատմություն (5 մրցանակային տեղ) առարկաներին:

Ստեփանակերտ քաղաքում գործող 14 դպրոցներից (12 հանրակրթական, ֆիզմաթ դպրոց և «Անանիա Շիրակացի» ճեմարան) օլիմպիադային տարբեր առարկաներից մասնակցել է149 աշակերտ: Այսպես՝

ՀՀ	Առարկան	Մ. մասն.	Ստեփ. N 1	Ստեփ. N 2	Ստեփ. N 3	Անտոնիա Սոսյան	Ստեփ. N 5	Ստեփ. N 6	Ստեփ. N 7	Ստեփ. N 8	Ստեփ. N 9	Ստեփ. N 10	Ստեփ. N 11	Ստեփ. N 12	Ֆիզմաթ	Շիրակացի	Ընդամենը
1	Հայոց լեզու	74	4	1	-	-	-	-	-	9	-	-	10	-	8	-	32
2	Հայ գրականություն	7	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
3	Ռուսաց լեզու	99	4	2	19	1	1	2	5	4	4	4	7	-	6	5	64
4	Անգլերեն	38	3	1	1	-	-	-	1	1	-	1	3	-	2	3	16
5	Ֆրանսերեն	2	-	1	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	2
6	Պատմություն	12	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
7	Հայոց եկեղեցու պատմություն	8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
8	Մաթեմատիկա	27	1	3	1	-	1	5	4	2	-	1	-	-	2	-	20
9	Աշխարհագրություն	10	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
10	Կենսաբանություն	15	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
11	Նախնական զինվորական պատրաստություն	16	-	-	-	-	1	-	3	-	3	-	2	1	-	-	10
12	Քիմիա	6	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
13	Գերմաներեն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
14	Ֆիզիկա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
15	Ինֆորմատիկա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
16	Աստղագիտություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	Ընդամենը	314	12	8	21	1	3	7	13	16	7	6	28	1	18	8	149

Նկատելի է մի բան, որ Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում բավարար հիմքերի վրա է ռուսաց լեզվի դրվածքը, բայց զարմանալին և ավելի ճիշտ՝ ցավալին այն է, որ մասնակից չունեցան պատմություն, հայոց եկեղեցու պատմություն, գերմաներեն, ֆիզիկա, ինֆորմատիկա և աստղագիտություն առարկաներից, իսկ հայ գրականություն, աշխարհագրություն և քիմիա առարկաներից ունեցան մեկական մասնակից: Այս փաստը, կարծում ենք, անհանգստանալու տեղիք է տալիս բոլորիս:

Ներկայացնենք նաև օլիմպիադային շրջաններից մասնակցություն ցուցաբերած դպրոցների մասին այսպիսի տեղեկություններ:

Ասկերանի շրջանի հանրակրթական 26 դպրոցներից օլիմպիադային մասնակցեց 10 դպրոց, որից ակտիվ էին Աս կերանի և Նորագյուղի միջնակարգ դպրոցները: Շրջանից օլիմպիադային մասնակիցներ չունեցան ֆիզիկա, ինֆորմատիկա, կենսաբանություն և աստղագիտություն առարկաներից:

ՀՀ	Դպրոցը	Մասնակիցների քանակը
1	Ասկերանի մ/դ	19
2	Նորագյուղի մ/դ	14
3	Խրամորթի մ/դ	1
4	Խնձրիստանի մ/դ	3
5	Իվանյանի մ/դ	5
6	Նախիջևանիկի մ/դ	1
7	Խաչենի մ/դ	1
8	Հարավի մ/դ	2
9	Խնածախի մ/դ	3
10	Խնապատի մ/դ	1
	Ընդամենը	50

Մարտակերտի շրջանի հանրակրթական 28 դպրոցներից օլիմպիադային մասնակցեց 13-ը: Նրանցից ակտիվ էին Մարտակերտի հ.1 միջնակարգ հոսքային և Վաղուհասի միջնակարգ դպրոցները: Շրջանը օլիմպիադային մասնակից չունեցավ ֆիզիկա, ինֆորմատիկա և աստղագիտություն առարկաներից, իսկ ՀԵՊ, ՆԶՊ և մաթեմատիկա առարկաներից օլիմպիադային մասնակցել են մեկական աշակերտներ:

ՀՀ	Դպրոցը	Մասնակիցների քանակը
1	Մարտակերտի հ. 1 մի/դ	14
2	Մարտակերտի հ. 2 հ/դ	1
3	Վ. Հոռաթաղի մ/դ	3
4	Հաթերքի մ/դ	9
5	Վաղուհասի մ/դ	16
6	Կոճողոտի մ/դ	2
7	Չլդրանի մ/դ	1
8	Առաջածորի մ/դ	2
9	Մաղավուզի մ/դ	3
10	Զագլիկի մ/դ	1
11	Դրմբոնի մ/դ	1
12	Հարությունագոմերի մ/դ	1
13	Վանքի մ/դ	3
14	Ակնաբերդի մ/դ (Շահումյանի շրջան)	1
	Ընդամենը	58

Մարտունու շրջանի հանրակրթական 31 դպրոցներից օլիմպիադային մասնակիցներ ունեցավ միայն 17 դպրոց: Նրանցից առավել ակտիվ էին Մարտունու հ. 1 և Ճարտարի հ.1 միջնակարգ հոսքային դպրոցները: Շրջանը մասնակիցներ չներկայացրեց ֆիզիկա, ինֆորմատիկա և աստղագիտություն առարկաներից:

ՀՀ	Դպրոցը	Մասնակիցների քանակը
1	Մարտունու հ. 1 մի/դ	17
2	Մարտունու հ. 2 հ/դ	1
3	Ճարտարի հ. 1 մի/դ	11
4	Ճարտարի հ. 2 հ/դ	1
5	Ճարտարի հ. 3 հ/դ	1
6	Սպիտակաշենի մ/դ	1
7	Բերդաշենի մ/դ	4
8	Կարմիր շուկայի մ/դ	3
9	Խնուշինակի մ/դ	3
10	Մաճկալաշենի մ/դ	2
11	Մուշկապատի մ/դ	1
12	Հերհերի մ/դ	1
13	Կոյխոգաշենի մ/դ	1
14	Սոսի մ/դ	3
15	Գիշու մ/դ	2
16	Աշանի մ/դ	1
17	Քերթի մ/դ	1
	Ընդամենը	54

Հանգամանքներից ելնելով՝ Շուշիի շրջանի հանրակրթական 6 դպրոցներից օլիմպիադային մասնակցեցին միայն Ստեփանակերտ քաղաքում գործող՝ Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ և Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված դպրոցները՝ համապատասխանաբար 4 և 7 աշակերտներով: Բոլոր 11 աշակերտները մասնակցել են հայոց լեզու, ռուսաց լեզու, հայ գրականություն և պատմություն առարկաներից:

ՀՀ	Դպրոցը	Մասնակիցների քանակը
1	Շուշիի Խ. Աբովյանի անվան մ/դ	7
2	Շուշիի Դ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված մ/դ	4
	Ընդամենը	11

Ելնելով վերոնշյալ փաստերից՝ ակնհայտ է, որ բնագիտական առարկաների դրվածքը հանրապետությունում գրեթե կաթվածահար վիճակում է, բայց և հումանիտար առարկաների արդյունքներից էլ նկատելի է, որ այստեղ ևս վիճակը, մեղմ ասած, բարվոք չէ: Ինչո՞վ բացատրել այն փաստը, որ հայ գրականություն առարկայից հայտագրվել է 7 աշակերտ. 1 հոգի Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցից, մնացածները՝ շրջաններից: Աշխարհագրություն առարկայի 10 մասնակցից 1 աշակերտ դարձյալ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցից էր, մնացածները՝ շրջաններից: Քիմիա առարկայի 6 մասնակցից 5-ը շրջաններից էր, 1-ը՝ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցից:

Կամ՝ ինչպե՞ս պատկերացնել, որ պատմություն, ՀԵՊ, ֆիզիկա, ինֆորմատիկա, գերմաներեն և աստղագիտություն առարկաներից Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներից օլիմպիադային ոչ մի աշակերտ չի հայտագրվել:

Տեղեկություններ ներկայացնենք Ստեփանակերտ քաղաքի և շրջանների համեմատաբար խոշոր դպրոցների մասնակիցների արդյունքների մասին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

• Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցը օլիմպիադային ունեցավ 12 մասնակից, որից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 2 աշակերտ՝ մաթեմատիկա և հայոց լեզու առարկաներից:

• Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոցից օլիմպիադային մասնակցած 8 աշակերտից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 մասնակից՝ մաթեմատիկա առարկայից:

• Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցել է 21 աշակերտ, որոնցից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ ռուսաց լեզու առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ դարձյալ ռուսաց լեզու առարկայից:

• Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցից օլիմպիադային մասնակցել է 3 աշակերտ, որոնցից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ մաթեմատիկա առարկայից:

• Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցից 7 աշակերտ է մասնակցել օլիմպիադային, որից ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ մաթեմատիկա առարկայից:

• Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցից օլիմպիադայի 13 մասնակցից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ ՆԶՊ առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 3 աշակերտ, 2-ը՝ ՆԶՊ և 1-ը՝ մաթեմատիկա առարկաներից:

• Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցից օլիմպիադային մասնակցել է 16 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է 4 աշակերտ, 2-ը՝ մաթեմատիկա, 2-ը՝ հայոց լեզու առարկաներից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից:

• Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի 7 մասնակցից մրցանակային տեղ է գրավել 1 աշակերտ՝ ՆԶՊ առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է դարձյալ 1 աշակերտ՝ նույն առարկայից:

• Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոցից օլիմպիադային մասնակցած 6 աշակերտից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ մաթեմատիկա առարկայից:

• Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցից օլիմպիադայի 28 մասնակցից մրցանակային տեղ գրավել է 7-ը, որից 5 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից, 1 աշակերտ՝ անգլերենից, 1-ը՝ ֆրանսերենից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 4 աշակերտ՝ հայ գրականություն, ռուսաց լեզու, քիմիա և ՆԶՊ առարկաներից:

• Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցից օլիմպիադային մասնակցել է 1 աշակերտ, որը մրցանակային տեղ է գրավել ՆԶՊ առարկայից:

• Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցից օլիմպիադայի 18 մասնակցից մրցանակային տեղ գրավել է 2 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 2 աշակերտ՝ դարձյալ հայոց լեզու առարկայից:

• Ասկերանի միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցել է 19 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է 2 աշակերտ՝ պատմություն և հայոց լեզու, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 2 աշակերտ՝ հայոց լեզու և անգլերեն առարկաներից:

• Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցից 13 աշակերտ է մասնակցել օլիմպիադային, որից մրցանակային տեղ գրավել է 2 աշակերտ՝ հայոց լեզու և անգլերեն առարկաներից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ աշխարհագրություն առարկայից:

• Մարտակերտի միջնակարգ դպրոցից մասնակցել է 14 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է 1 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից:

• Մարտակերտի շրջանի Հաթերքի միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցած 9 աշակերտից մրցանակային տեղ գրավել է 2-ը՝ հայոց լեզու առարկայից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ պատմություն առարկայից:

• Մարտունու հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցից օլիմպիադային մասնակցել է 14 աշակերտ, որից մրցանակային տեղ գրավել է 4 աշակերտ. 2-ը՝ հայոց լեզու, 2-ը՝ անգլերեն և պատմություն առարկաներից:

• Մարտունու շրջանի Ճարտարի հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցի 12 մասնակցից մրցանակային տեղ գրավել է 3 աշակերտ. 2-ը՝ հայոց լեզու, 1-ը՝ անգլերեն առարկաներից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ ՀԵՊ առարկայից:

• Շուշիի Դ. Ղազարյանի անվան մասնագիտացված երաժշտական դպրոցի օլիմպիադային մասնակցած 7 աշակերտից մրցանակային տեղ գրավել է 2 աշակերտ՝ հայոց լեզու և պատմություն առարկաներից, իսկ ակտիվ մասնակցության համար գովասանագրով պարգևատրվել է 1 աշակերտ՝ հայոց լեզու առարկայից:

• Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցից օլիմպիադային մասնակցած 4 աշակերտներից ոչ մեկը մրցանակային տեղ չի գրավել, 1 աշակերտ պատմություն առարկայից ակտիվ մասնակցության համար արժանացել է գովասանագրի:

Մրցանակային տեղերի և ակտիվ մասնակիցների թիվը ըստ շրջանների հետևյալն է.

	1-ին տ»ղ	2-րդ տ»ղ	3-րդ տ»ղ	ակտիվ մասնակից	2022-2023 մրց.տ./ակտ. մ.
ք.Ստեփանակերտ	-	9	13	17	22/17
Ասկերանի շրջան	-	2	4	3	6/3
Մարտակերտի շրջան	-	1	4	4	5/4
Մարտունու շրջան	-	3	8	5	11/5
Հադրութի մ/դ	-	-	-	-	-
Շուշիի շրջան	-	1	1	2	2/2
Շահումյանի շրջ. /Ակնաբերդի մ/դ/	-	-	-	-	-
Ընդամենը	-	16	30	31	46/31

Մրցանակային տեղերի քանակի առումով 1-ին տեղում է Մարտունու թիմը՝ 11 մրցանակային տեղ, որը կազմում է շրջանից օլիմպիադայի փաստացի մասնակիցների 21,6 %-ը, 2-րդ տեղում է Ստեփանակերտի թիմը՝ 22 մրցանակային տեղ, որը կազմում է փաստացի մասնակիցների 15,2 %-ը, 3-րդ տեղում է Ասկերանի թիմը՝ 6 մրցանակային տեղ՝ 12 %:

Առանձնացրել ենք օլիմպիադայի արդյունքներով տարբեր առարկաներից ամենաբարձր միավորներ վաստակած մասնակիցների անունները:

Այսպես.

հայոց լեզու առարկայից ամենաբարձր՝ 17,7 միավորով առաջատարն է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սլավա Սեյրանյանը.

հայ գրականություն առարկայից Մարտունու շրջանի Բերդաշենի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Լուսինե Ավանեսյանի հավաքած 14,5 միավորն ամենաբարձրն էր.

ռուսաց լեզու առարկայից ամենաբարձր՝ 15 միավորը վաստակել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Լոլիտա Սարգսյանը.

անգլերեն առարկայից ամենաբարձրը Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սլավա Սեյրանյանի վաստակած 17,35 միավորն էր.

ֆրանսերեն առարկայից ամենաբարձր՝ 17,5 միավորը վաստակել է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ալինա Ասրյանը.

պատմություն առարկայից Ասկերանի շրջանի Խնձրիստանի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Ժիրայր Դանիելյանի աշխատանքի 17,5 միավորը ամենաբարձրն էր.

ՀԵՊ առարկայից ամենաբարձր՝ 16 միավոր գնահատվեցին Մարտունու շրջանի Ճարտարի հ. 3 հիմնական և Խնուշինակի միջնակարգ դպրոցների 9-րդ դասարանի աշակերտուհիներ Էլինա Պողոսյանի և Մարիամ Ավետիսյանի աշխատանքները.

աշխարհագրություն առարկայից հպարտանալու առիթը բաժին է հասել Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցին՝ 12-րդ դասարանի աշակերտ Արամ Գալստյանի վաստակած 14 միավորի համար.

մաթեմատիկա առարկայից ամենաբարձր՝ 18 միավորը ոչ միայն մաթեմատիկա առարկայից, այլ նաև օլիմպիադայի ընդհանուր արդյունքներով միակ 18 միավորն էր, որը վաստակել է Ստեփանակերտի հ. 8 միջնակարգ հոսքային դպրոցի 5-րդ դասարանի աշակերտ Արման Օհանյանը.

քիմիա առարկայից ամենաբարձր՝ 13 միավոր գնահատվել է Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Բենիամին Հայրապետյանի աշխատանքը.

կենսաբանություն առարկայից դարձյալ ամենաբարձրը 13 միավորն էր, որը վաստակել է Մարտունու շրջանի Սոսի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Նարե Դադասյանը.

ՆԶՊ առարկայից Ստեփանակերտի հ. 9 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Սոֆյա Ավանեսյանին հաջողվեց վաստակել ամենաբարձր՝ 17 միավորը:

Այս տարի ևս կային դպրոցականներ (7 աշակերտ), որոնք օլիմպիադային մասնակցեցին 2 և ավելի առարկաներից: Նրանցից Ասկերանի շրջանի Նորագյուղի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Էլեն Ղահրամանյանը և՛ հայոց լեզվից, և՛ անգլերենից արժանացավ 3-րդ կարգի դիպլոմների, Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սլավա Սեյրանյանը և՛ հայոց լեզու, և՛ անգլերեն առարկաներից արժանացավ 2-րդ կարգի դիպլոմների, իսկ ռուսաց լեզվից ակտիվ մասնակցության համար արժանացավ գովասանագրի:

Օլիմպիադայի հանրապետական կազմկոմիտեի կողմից փետրվարի 17-ից մինչև մայիսի 15-ը ՀՀ-ում կայանալիք եզրափակիչ փուլին մասնակցելու համար երաշխավորվել է 56 աշակերտ:

Օլիմպիադայի եզրափակիչ փուլին մասնակցած աշակերտների քանակը՝ ըստ առարկաների.

ՀՀ	Առարկան	Հայոց լեզու	Հայ գրականություն	Ռուսաց լեզու	Անգլերեն	Ֆրանսերեն	Պատմություն	Հայոց պատմություն	Մաթեմատիկա	Աշխարհագրություն	Կենսաբանություն	Քիմիա	ՆԶՊ	Ընդամենը
1	Աշակերտների քանակը	6	5	6	5	1	5	5	10	4	1	1	7	56

Կապված Արցախում ստեղծված իրավիճակի հետ՝ այդ փուլը ևս կազմակերպվել է մեզ մոտ՝ Ստեփանակերտում, և օլիմպիադայի եզրափակիչ փուլի ՀՀ կազմկոմիտեի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն աշակերտների գրավոր աշխատանքները էլեկտրոնային տարբերակով ուղարկվել են Հայաստանի Հանրապետություն: Ուրախությամբ նշենք, որ մեր աշակերտները կարողացան պատվով դուրս գալ այս պայքարից նույնպես:

56 մասնակցից 23-ը արժանացավ մրցանակային տեղերի և գովասանագրերի. 2 աշակերտ արժանացավ 2-րդ, 7 աշակերտ՝ 3-րդ մրցանակային տեղերի և 14 աշակերտ՝ գովասանագրերի:

Այս փուլում ևս Սլավա Սեյրանյանը գերազանց հանդես եկավ և անգլերենից արժանացավ 2-րդ, ռուսաց լեզվից՝ 3-րդ մրցանակային տեղերի, իսկ հայոց լեզվից ակտիվ մասնակցության համար արժանացավ գովասանագրի:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ամփոփելով եզրափակիչ փուլի արդյունքները, նախարարի 2023 թվականի ապրիլի 14-ի N 379-Ա հրամանով հաղթողներին (դիպլոմակիրներին) նշանակել է անվանական կրթաթոշակ մեկ տարի ժամկետով.

- առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 10 000 դրամ,

- երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 7 500 դրամ,

- երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական 5 000 դրամ:

Օլիմպիադայի եզրափակիչ փուլում դիպլոմների արժանացած 9 մասնակիցները ևս կօգտվեն այդ արտոնությունից: Նրանք են՝

1. Սեյրանյան Սլավա-Ստեփանակերտի հ. 11 ա/դ, 11-րդ դաս. - II կարգ, III կարգ
2. Բաբայան Մարիաննա - Ստեփանակերտի հ. 3 մ/դ, 10-րդ դաս. - II կարգ
3. Գասպարյան Անի - Մարտակերտի հ. 1 մ/դ, 12-րդ դաս. - II կարգ
4. Պետրոսյան Արգիշտի - Ստեփանակերտի հ. 10 հ/դ, 5-րդ դաս. - III կարգ
5. Խաչատրյան Ռուդիկ - Ստեփանակերտի հ. 5 հ/դ, 5-րդ դաս. - III կարգ
6. Գալստյան Արամ - Ասկերանի շրջանի Նորագյուղի մ/դ, 12-րդ դաս. - III կարգ
7. Բախշիյան Կարինե - Ասկերանի մ/դ, 9-րդ դաս.- III կարգ
8. Այդինյան Նարինե - Ճարտարի հ. 1 մ/դ, 10-րդ դաս. - III կարգ
9. Սաֆարյան Տիգրան - Ստեփանակերտի հ. 3 մ/դ, 10-րդ դաս.- III կարգ

Սիրելի՛ դպրոցականներ, մեզ համար շատ կարևոր է Արցախում կիրթ, բանիմաց սերունդ ունենալը: Համոզված ենք, որ այս ուսումնական տարվա առարկայական օլիմպիադան գիտելիքի ճանապարհով ձեզ մեկ քայլ ևս առաջ տարավ՝ շնորհիվ իրենց գործին անմնացորդ նվիրված բանիմաց ուսուցիչների:

Սիրելի՛ մանկավարժներ, դուք մեր երկրի ամենապատասխանատու բանակն եք, քանզի դուք եք կրթում ու դաստիարակում ապագա մանկավարժին ու բժշկին, իրավաբանին ու գիտնականին, գեներալին ու զինվորին, այսինքն՝դուք եք հղկում մեր ապագան կերտողներին:

Սիրելի՛ դպրոցականներ, մենք հպարտանում ենք ձեզնով, ձեր հաջողությունները գրավականն են այն բանի, որ դուք եք շենացնելու մեր հայրենի երկիրը, կերտելու նրա վառ ապագան: Պատգամում ենք Ձեզ, որ մշտապես հիշեք Լունաչարսկու հետևյալ տողերը.

«Կրթության շնորհիվ ձեռք բերված գիտելիքը
մարդուն դարձնում է ազատ ու հպարտ:
Կյանքում պետք է ձգտել առաջ անցնել
ոչ թե ուրիշներից, այլ ինքդ քեզնից»:

ՔՆՆԱՇՐՋԱՆ

ԴԻՄՈՐԴՆԵՐԸ ՀԱՅՏԱԳՐՎԵԼ ԵՆ

Ավարտվել է 2023-2024 ուսումնական տարվա բուհերի ընդունելության, մասնագիտությունների ընտրության և ընդունելության քննությունների համար դիմորդների հայտագրումը: Ի՞նչ է ցույց տալիս վիճակագրությունը. դիմորդներն ի՞նչ մասնագիտություններ են նախընտրել և ո՞ր բուհերում, շրջափակման պայմաններում ինչպե՞ս են կազմակերպվելու ներբուհական քննությունները: Հետաքրքրող այս հարցերով դիմեցինք ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոն:

ԸՍՏ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանի տեղեկատվությամբ՝ հայտագրվել է 572 դիմորդ, որից 374-ը դիմել է Արցախի, իսկ 198-ը՝ հայաստանյան բուհեր ընդունվելու համար, որից է՝ 101-ը՝ Արցախին հատկացված, իսկ 97-ը՝ ոչ նպատակային տեղերի համար:

Արցախի պետական համալսարան ընդունվելու համար հայտագրվել է 274 դիմորդ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան՝ 31, «Գրիգոր Նարեկացի» համալսարան՝ 18, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան՝ 51:

ԱրՊՀ միայն «Իրավագիտություն» և «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների համար է, որ նախատեսված 30-ական տեղերի համար համապատասխանաբար հայտագրվել է 48 և 38 դիմորդ: Մյուս մասնագիտություններում դիմորդների թիվը կամ քիչ է, կամ չեն հայտագրվել: Այսպես՝ «Աշխարհագրություն» մասնագիտության համար ընդհանրապես չեն հայտագրվել, «Մաթեմատիկա և ֆիզիկա»՝ 2 հոգի, «Կենսաբանություն և քիմիա»՝ 9, ՆԶՊ՝ 4, «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»-ն, որը միշտ մեծ քանակ էր ապահովում, այս տարի այստեղ 10 հոգի է հայտագրվել:

ՀՀ բուհերից, ինչպես միշտ, ամենաշատ դիմորդները Երևանի Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանի համար են. 45 հոգի՝ 25 տեղի համար (10 անվճար, 15 վճարովի):

Արցախի նպատակային տեղերով ԵՊՀ հայտագրվածների թիվը մեծ է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունում. 7 հոգի՝ 4 տեղի համար, «Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն»-ում՝ 4 դիմորդ՝ 2 տեղի համար, «Տեղեկատվական անվտանգություն»՝ 3 տեղի համար՝ 5 հոգի, «Միջազգային հարաբերություններ»՝ 2 տեղ՝ 4 հոգի»:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում Արցախին հատկացված 8 տեղի համար հայտագրվել է 3 դիմորդ, որից 2-ը՝ «Լոգոպեդիա», 1-ը՝ «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության համար: Դիմորդ չի հայտագրվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար, չնայած կարևոր «Ագրոէկոլոգիա», «Անտառային տնտեսություն», «Բնակավայրերի կանաչապատում» մասնագիտություններին:

Մյուս բուհերում հատկացված 1-2 տեղերի համար դիմորդները հայտագրվել են:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԵՐԸ

Առաջին քննությունը հունիսի 9-ին է՝ «Քիմիա» և «Ռուսաց լեզու» առարկաներից:

Հունիսի 13-ին՝ անգլերեն լեզու:

Հունիսի 16-ին՝ «Մաթեմատիկա»:

Հունիսի 20-ին՝ «Հայոց լեզու, հայ գրականություն»:

Հունիսի 23-ին՝ «Կենսաբանություն»:

Հունիսի 27-ին՝ «Հայոց պատմություն» և «Ֆիզիկա»:

ՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

ԱՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատվել են քննական կենտրոնները: Միասնական քննությունների համար կստեղծվի 5 կենտրոն Ստեփանակերտի հ. 1, 2, 6, 7, 8 դպրոցներում:

Լինելու են նաև 29 քննական կենտրոններ՝ 9-րդ դասարանների կենտրոնացված քննությունների համար. 9-ը՝ Ստեփանակերտում, 6-ը՝ Մարտունու շրջանում, 9-ը՝ Մարտակերտի շրջանում, 4-ը՝ Ասկերանի շրջանում, 1-ը՝ Շահումյանի շրջանի Ակնաբերդում: Քննական կենտրոնների կահավորման աշխատանքները կսկսվեն մայիսի 26-27-ից՝ վերջին զանգից հետո:

Առաջին կենտրոնացված քննությունը լինելու է հունիսի 5-ին հայոց լեզվից:

ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Ներբուհական քննությունները, որոնք արվեստի և ֆիզիկական պատրաստություն բնագավառների համար են, դիմորդները ըստ կարգի հանձնում են տվյալ բուհում: Արցախից կա 7 դիմորդ, որոնք պետք է ներբուհական քննություն հանձնեն Երևանում. 2-ը՝ կոնսերվատորիա, 5-ը՝ ճարտարապետաշինարարական համալսարան ընդունվելու համար: Շրջափակման պայմաններում, բնականաբար, անհնար է դիմորդների ներկայանալը Երևան: Յու. Քարամյանը տեղեկացրեց, որ այդ հարցը քննարկվել է ԱՀ կառավարությունում և մի շարք տարբերակներից ընտրվել է Արցախում նրանց քննությունների կազմակերպումը: Կկազմվեն հանձնաժողովներ՝ համաձայնեցվելով ՀՀ ԿԳՄՍՆ-ի և համապատասխան բուհերի հետ: Քննության ամբողջ ընթացքը կտեսաձայնագրվի և գնահատականներով կուղարկվի համապատասխան բուհ: Յու. Քարամյանի խոսքով՝ խնդիր չի լինի, ամեն ինչ կախված է ճիշտ կազմակերպումից. Արցախում էլ կան համապատասխան մասնագետներ, որոնք կարող են բարձր մակարդակով և անաչառ անցկացնել քննությունները:

ՆՈՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Շուշիի տեխնոլոգիական համալսարանում նախատեսվում է սեպտեմբերի 1-ից բացել նոր մասնագիտություն՝ թռչող սարքերի ավիացիոն սարքավորումներ (այդ մասնագիտությունն այս տարվանից նաև մտցված է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան և Արցախին հատկացված է մեկ տեղ, հայտագրվել է 2 դիմորդ): Քանի որ ավելի ուշ է կայացվել այդ որոշումը, չկան հայտագրված դիմորդներ և նոր հայտագրում էլ չի լինի: «Բայց դա կարևոր մասնագիտություն է մեր երկրի համար: Ընդունելության կարգում կկատարվեն որոշ փոփոխություններ, որպեսզի դրական միավորներով դիմորդները, եթե ցանկություն ունեն, ընդունվեն այդ բաժին»,- տեղեկացրեց Յու. Քարամյանը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԶՈՐ ԲԱՆԱԿԻՆ ԶԻՆՎՈՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐԱՆՈՐ ՆՎԻՐՅԱԼՆԵՐ

Արցախի դպրոցներում այս օրերին անցկացվում են Այբուբենի տոնին նվիրված հետաքրքիր միջոցառումներ: Ասել է թե՝ Մաշտոցյան հզոր բանակին զինվորագրվում են նորանոր նվիրյալներ, որոնք այսուհետ ոչ միայն կկարողանան վարժ կարդալ ու գրել ոսկեղենիկ հայերենով, այլև նրանցից յուրաքանչյուրը կդառնա Մեծն Մաշտոցի դեսպանը: Ապրես հայրենիքում, թե այլուր, եթե դու հայ ես, պետք է իմանաս հայոց այբուբենը, քանզի մայրենի լեզվի իմացությամբ է հաստատվում ազգային պատկանելությունը: Էլ ի՞նչ հայ, եթե չի խոսում ու կարդում իր մոր աղոթած լեզվով:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ.8 միջնակարգ հոսքային դպրոցում անցկացված Այբուբենի տոնը համաքաղաքային բնույթ էր կրում. ներկա էին Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Թ. Ղարախանյանը, տարրական դասարանների քաղաքային մեթոդմիավորման նախագահները, ծնողներ, հյուրեր:

Անտեսելով Արցախի շրջափակմամբ պայմանավորված բոլոր դժվարությունները՝ դասավար Լիանա Ծատրյանը կազմակերպեց հետաքրքիր միջոցառում՝ ներառելով դասարանի բոլոր աշակերտներին: Այն սկսվեց երգով, որով աշակերտները ողջունեցին ներկաներին, ապա նրանք արտասանեցին բանաստեղծություններ՝ նվիրված առաջին ուսուցչին, դպրոցին, մայրիկին, հայրենիքին: Մանկական անկեղծ շուրթերով լավագույն արժեքները նոր շունչ ու իմաստ ստացան:

Երեխաների մոտ վառ արտահայտված և հղկված էր բանավոր խոսքը՝ ոսկեղենիկ մայրենին՝ իր պերճանքով ու համեստությամբ: Միջոցառումը համեմված էր երգով, պարով ու հումորով, որը ուժ էր փոխանցում մեծերին՝ դիմագրավելու օրավուր աճող մարտահրավերներին:

Փոքրիկ բեմականացմամբ Արցախի բարբառով ներկայացվեց շրջափակումը, նրա ստեղծած դժվարությունները, որին երեխաները հումորով արձագանքեցին: Եվ սա՛ է հաջողությունը, և սա՛ է հաղթանակի նախապայմանը:

Այդ օրը առաջին դասարանցիները ոչ միայն հրաժեշտ տվեցին Այբբենարանին՝ դրանով փաստելով, որ արդեն գրաճանաչ են և նրանց է հասել Մեսրոպ Մաշտոցի վառած ջահը, որ իրենց ձեռքերում ունեն հզոր զենք՝ քայլելու կյանքի ոլորապտույտ ճանապարհներով, այլև արդեն հայրենաճանաչ են: Նրանք իրենց խոսքում փառաբանեցին Արցախը՝ իրենց տունը և խոստացան երբեք չլքել այն:

Հմուտ դասվարի կատարած աշխատանքն անգնահատելի է: Նա ոչ միայն ջանք ու եռանդ չի խնայել երեխաներին տառաճանաչ դարձնելու, կրթելու, դաստիարակելու համար, այլև կազմակերպել է բովանդակալից և օրինակելի միջոցառում, որում ասելիքը շատ էր, անելիքը՝ հստակ նախանշված: Անտեսել չենք կարող նաև տեխնիկական մեծ աշխատանքը. ամբողջ միջոցառման ընթացքում երեխաների ելույթներիին զուգընթաց էկրանին սահում էին նրանց առօրյան արտացոլող, հայրենի բնաշխարհի պատկերները:

Շնորհավորելով սաներին՝ Լ. Ծատրյանն ասաց. «Արդեն դրված է ձեր ուսումնառության առաջին և ամենակարևոր հիմնաքարը. դուք արդեն տիրապետում եք մեսրոպյան ոսկեղենիկ այբուբենին, ձեռք եք բերել այն հրաշագույն բանալին, որով կարող եք բացել գիտության ցանկացած դուռ»:

Հիրավի, նաև գաղափարական ուսուցչության ձեռքին է Արցախի գալիքը:

Դպրոցի տնօրեն Լ. Գևորգյանը և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի պետ Թ. Ղարախանյանը շնորհավորեցին երեխաներին և բարձր գնահատեցին դասվարի աշխատանքը՝ տառաճանաչության յուրահատուկ քննությունը հաջող հանձնելու համար:

Այո, կիրթ ու հայրենասեր սերունդն է փրկելու մեր վաղվա օրը:

Սեփ. լրատվություն

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻՑ

Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ.1 միջնակարգ հոսքային և Մ.Մաշտոցի անվան հ. 2 հիմնական դպրոցների հիմքի վրա ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից անց է կացվել մեթոդական կոնֆերանս ռուսաց լեզվից:

Մասնակցել են ԱՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ռուսաց լեզվի բաժնի աշխատանքների համակարգող Գայանե Աթանեսյանը, Արցախի ռուսական համայնքի ղեկավար Ալեքսանդր Բորդովը և ռուսական համայնքի հոգևոր առաջնորդ հայր Դմիտրին, Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վահրամ Հակոբյանը:

Հրավիրված էին Մարտունու շրջանի Քերթի, Սոսի, Ճարտարի հ. 1, հ. 2 և հ. 3, Խնուշինակի, Ննգու, Գիշու, Քարահունջի դպրոցների և արհեստագործական ուսումնարանի ռուսաց լեզվի ուսուցիչները:

Բաց դասերից հետո տեղի է ունեցել ակտիվ քննարկում, որի ընթացքում կատարվել են կարևոր եզրահանգումներ:

Ռուսական համայնքի կողմից բաց դասեր անցկացրած ուսուցիչները պարգևատրվել են շնորհակալական նամակներով:

Կոնֆերանսն ամփոփվել է Մարտունու արհեստագործական ուսումնարանի ռուսաց լեզվի մասնագետ Սուսաննա Ավետիսյանի կազմակերպած գրական-գեղարվեստական ցերեկույթով: Աշակերտները ռուսաց լեզվի երկամսյա բանավոր դասընթացներին ակտիվ մասնակցելու համար Մարտունու շրջվարչակազմի ղեկավար Հ. Հայրումյանի կողմից ստացել են հավաստագրեր:

Հետդարձի ճանապարհին պատվիրակությունը Վ. Հակոբյանի ուղեկցությամբ այցելել է Ամարասի վանական համալիր և Կոլխոզաշենում գործող՝ ԽՍՀՄ հերոս, հրետանու գեներալ-գնդապետ Միքայել Պարսեղովի տուն-թանգարան:

«Ամարաս» թերթ

ԳԻՏԱԺՈՂՈՎ

ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էթնիկ զտումները եղել են Ադրբեջանի պետական քաղաքականության անկյունաքարերից մեկը՝ իր հիմնադրման պահից: Արցախահայությունը դրա դրսևորումները զգացել ու տեսել է պարբերաբար՝ 1920-ական թվականներին, Մեծ Հայրենականի տարիներին, ԽՍՀՄ գոյության ողջ ժամանակահատվածում, որի վերջաբանը դարձան Սումգայիթում, Բաքվում հայկական ջարդերն ու տխրահռչակ «Կոլցո»-ն: Արդեն ավելի քան 5 ամիս շարունակվող Արցախի շրջափակումն էլ այդ քաղաքականության բաղադրիչներից մեկն է: Հենց այս թեմաներին էր նվիրված մայիսի 11-ին «Գրիգոր Նարեկացի» համալսարանում տեղի ունեցած գիտաժողովը՝ «Արցախում էթնիկ զտման Ադրբեջանի քաղաքականությունը» խորագրով, որին ներկա էին նաև ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը, նախարարի տեղակալներ Հասմիկ Մինասյանը, Լեռնիկ Հովհաննիսյանը, ԱՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Դավիթ Բաբայանը:

Գիտաժողովը մեկնարկեց ծաղիկների խոնարհումով և լռության րոպեով՝ ի հիշատակ բուհի ռեկտոր Վարդան Հակոբյանի և Արցախյան պատերազմների նահատակների:

ԳՆՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Սևակ Հակոբյանը, ողջունելով ներկաներին, մաղթեց արդյունավետ աշխատանք և քննարկումներ. «Նման միջոցառում առանց համալսարանի հիմնադիր ռեկտոր Վարդան Հակոբյանի՝ առաջին անգամ ենք կազմակերպում: Նրա ներդրած ավանդույթներն ու մոտեցումներն անկասկած կշարունակվեն, և այն նպատակներն ու ձգտումները, որոնք ընկած են համալսարանի ստեղծման ու զարգացման հիմքում, առաջիկայում ևս պետք է պահպանվեն և ունենան դրական զարգացում»:

ԱՀ ԿԳՄՍ նախարար Նորայր Մկրտչյանը կարևորեց նման միջոցառումների կազմակերպումը: «Գիտաժողովի խորագիրն իսկ փաստում է քննարկվող թեմայի կարևորությունն ու արդիականությունը: Վերջին շրջանում տեղի ունեցած քաղաքական գործընթացները միանգամայն նոր մարտահրավերների առաջ են կանգնեցրել մեր հանրությանը: Քաղաքակիրթ աշխարհի համակ ուշադրության պայմաններում Ադրբեջանը, նվաճելով մեր հայրենիքի նշանակալից հատվածը, աննախադեպ մասշտաբների հասցնելով հայատյացության քաղաքականությունն ու քարոզչությունը, զուգահեռաբար ձեռնամուխ է եղել նաև հայկական պատմամշակութային ժառանգության բացահայտ ոչնչացման քաղաքականությանը, ինչն էլ ավելի է խորացնում հակամարտությունը և ընդգծում Արցախի Հանրապետության անկախության կարգավիճակի լուծման հրատապությունը: Ստեղծված պայմաններում առավել մեծ է թե՛ հայ քաղաքական գործիչների, թե՛ մտավորականության դերը մեր ժողովրդին անվտանգ, ճիշտ ճանապարհով առաջնորդելու, դրանով իսկ բազում փորձություններ հաղթահարած մեր հայրենիքի պահպանումն ու պաշտպանությունը երաշխավորելու: Ի վերջո, մեր պատմության հերոսական էջերը մեզ մատնացույց են անում, որ անգամ ծայրահեղ իրավիճակներում մեր ժողովուրդը ոչ միայն չի ընկճվել, այլև կարողացել է իր մեջ ուժ գտնել, ինքնակազմակերպվել և անհաջողություններն ու ժամանակավոր նահանջները վերածել հաղթանակների: Այդ ամենը ներկա ժամանակներում նույնպես ոչ միայն հնարավոր է, այլև կարևոր ու պարտադիր: Եվ որպեսզի նորից ու նորից կարողանանք հասնել մեր բաղձալի հաղթանակներին ու ազգային նոր վերածննդին, մենք պետք է կարողանանք մեկտեղել հայ մտավոր ներուժը: Մենք պարտավոր ենք վերջապես նորից ու նորից միավորվել մեր ազգային նպատակի շուրջ, այն նպատակի, որ մեզ բոլորիս կուղեկցի դեպի հայրենիքի հզորացման միջոցով մեր ազգային իղձերի իրագործմանը: Համոզված եմ, որ գիտագործնական համաժողովը, որը միտված է Արցախում Ադրբեջանի էթնիկ զտման քաղաքականության բուն նպատակների բացահայտմանը, քննարկմանն ու համապատասխան եզրահանգումների կայացմանը, կարևոր քայլ կհանդիսանա նաև մեր գործնական ծրագրերի կազմման ու իրականացման ուղղությամբ: Իրողություն է, որ ներկայում հսկայական գործ ունենք կատարելու կանխատեսելի լուսավոր ապագայի համար»,- ասել է նախարարը:

Գիտաժողովում զեկուցումներով հանդես եկան ԳՆՀ իրավագիտության ամբիոնի վարիչ, ԱՀ վաստակավոր իրավաբան Վլադիմիր Հովսեփյանը («Ցեղասպանության ուրվականը Բերձորի (Լաչինի) միջանցքում»), ԱՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով խորհրդական, պատմական գիտությունների դոկտոր Դավիթ Բաբայանը («Խորհրդային շրջանում Ադրբեջանի խտրական քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ՝ որպես Բաքվի քաղաքականության հայելի ներկայիս ժամանակաշրջանում»), ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը («Մշակույթի ժառանգության պահպանման վտանգները 44-օրյա պատերազմից հետո»), իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, ԱՀ վաստակավոր իրավաբան Գրետա Արզումանյանը («ԼՂ Ինքնավար Մարզի իրավակիրառ պրակտիկան Խորհրդային Ադրբեջանի հակահայ դրսևորումների լույսի ներքո»), ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Նունե Սարումյանը («Ադրբեջանի հայահալած քաղաքականության դրսևորումները ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական և հասարակական քաղաքական կյանքում»), իրավագիտության ամբիոնի դասախոս, ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի իրավաբանական բաժնի պետ Սոնա Համբարձումյանը («Արցախի Հանրապետությունում Ադրբեջանի հակահայ քաղաքականության հետևանքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման անհնարինությունն ու նոր սպառնալիքները»), իրավագիտության ամբիոնի դասախոս, ԱՀ ոստիկանության շտաբի իրավաբանական բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Նորա Միրզոյանը («Ադրբեջանի կողմից ապրիլյան քառօրյա և 44 օրյա պատերազմների ժամանակ կատարված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը»), «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության կենտրոնի ղեկավար Հովիկ Ավանեսովը («Մշակութային ցեղասպանությունը՝ որպես Թուրքայի և Ադրբեջանի հայատյաց քաղաքականության բաղադրիչ»), իրավագիտության ամբիոնի դասախոս, ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ Իրինա Զաքարյանը («Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով գյուղատնտեսության ոլորտում ստեղծված իրավիճակը և դրա հաղթահարման ուղիները»), «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի Կովկասագիտության կենտրոնի աշխատակից Էլեն Իսրայելյանը («2020թ. Արցախի դեմ սանձազերծված լայնածավալ պատերազմը՝ որպես Հայոց ցեղասպանության անպատժելիության հետևանք»), իրավագիտության բաժնի բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի Անի Բալուղյանը («Արցախը Հայաստանին միացնող ճանապարհի շրջափակման վերաբերյալ ՄԱԿ-ի միջազգային քրեական դատարանի որոշումը»):

Վերջում ԳՆՀ ռեկտոր Սևակ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց գիտաժողովի կազմակերպիչներին, մասնակիցներին և հավաստագրեր հանձնեց զեկուցողներին:

Գիտաժողովի զեկուցումները կտպագրվեն առանձին գրքով:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ»

«Մեսրոպ Մաշտոց» հմալսարանի Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնած «Կրթությունը 21-րդ դարում» խորագրով գիտաժողովը մեկնարկեց խոնարհումի և լռության րոպեով:

Գիտաժողովին բացման խոսքով հանդես եկավ բուհի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը: Նա կարևորել ու արդիական է համարել բոլոր ժամանակներում կրթված ու գիտակից երիտասարդություն ունենալը: Կրթված լինելու գրավականը որակյալ ուսումն է:

Գիտաժողովի մասնակից Աստղիկ Գրիգորյանը «Տեղեկատվական տեխնոլոգիաների դերն Արցախի տնտեության մեջ» թեմայի շրջանակում պարզել և հետազոտել է այն հիմնախնդիրները, որոնք առկա են Արցախում: Ուսումնասիրության արդյունքում եկել է այն եզրակացության, որ պետք է կարևորել միջազգային կապերի ստեղծումը, ինչպես նաև տարբեր նախագծերի ստեղծման անհրաժեշտությունն ու շարունակական համագործակցությունը:

ՄՄՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ Մարիա Հակոբյանը իր ելույթում նշել է, որ կրթությունն ամենահզոր զենքն է, որով երիտասարդները կարող են փոխել աշխարհը. «Եթե ունենանք բանիմաց, խելացի և ուժեղ ուսանողություն, կունենանք նաև հզոր երկիր»:

Գիտաժողովն ընդգրկում էր պատմություն, իրավագիտություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ, արևելագիտություն, տնտեսագիտություն, մանկավարժություն, սոցիոլոգիա, հոգեբանություն, բանասիրություն, լրագրություն ոլորտները: Շուրջ 70 ուսանողների մասնակցությամբ գիտաժողովում քննարկվել են տարածաշրջանի հումանիտար, տնտեսական, սոցիալ-քաղաքական զարգացման արդիական հարցերը:

Բուհի պրոռեկտոր Ալիսա Բաղդասարյանն ասաց, որ այս իրավիճակում կրթությունը շատ կարևոր է հատկապես ուսանողների համար. «Հենց նրանց զբաղվածությունը, նրանց հետաքրքրությունները, հիմնախնդիրն ընկալելու ձևաչափերը հաշվի առնելով՝ որոշեցինք կազմակերպել «Կրթությունը 21-րդ դարում» խորագրով գիտաժողով, որտեղ ուսանողները հանդես կգան և՛ հիմնախնդիրների բացահայտմամբ, և՛ միաժամանակ իրենց առաջարկությունները կանեն ու կհասկանան, որ իսկապես լուրջ խնդիրներ ունենք, և դրանք պետք է որոշակիորեն լուծումներ ստանան»:

Ներկա ժամանակներում կրթություն ստանալու հնարավորությունները մեծացել են, և բոլորն իրավունք ունեն սովորելու: ՄՄՀ կովկասագիտության կենտրոնի ղեկավար Հովիկ Ավանեսովի խոսքով՝ հատկապես շրջափակման իրավիճակում և պատերազմական գոտում գտնվող պետությունների համար կրթությունն առավել կարևոր նշանակություն ունի: «Զարգացած և կայուն պետություն ունենալու համար մենք անհրաժեշտություն ունենք կրթված և որակյալ մանագետներ ունենալու: Դրա հնարավորությունը տալիս է միայն կրթական համակարգը»,- ասաց Հ. Ավանեսովը՝ հավելելով, որ ամենակարևորն այն է, որ գիտաժողովի շրջանակում ուսանողներն արդիական թեմաներ են ընտրել, որոնք տարբեր խնդիրներ են արտացոլում: Այս ամենը թույլ կտա ավելի կատարելագործել աշխատանքները և օգտագործել տարբեր հարթակներում, հատկապես որ կան թեմաներ, որոնք կիրառական նշանակություն ունեն:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվել են մասնախմբային նիստերում: Իսկ լավագույն հոդվածների հեղինակներն արժանացել են պատվոգրերի:

Վեհանուշ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՍԵՐՈՒՆԴ

ԱՐՑԱ՛Խ, ՄԵՐ ՍԻՐՏ

Սերը հայրենիքի հանդեպ կիսատ-պռատություն չի ճանաչում. ով նրա համար չի անում ամեն ինչ, չի անում ոչինչ, ով նրան ամեն ինչ չի տալիս, նա մերժում է նրան ամեն ինչ:

Այս խոսքերի կարևորության ըմբռնումով, ժողովրդին հույսով ու հավատով զինելու անհրաժեշտության գիտակցումով, մեր հայրենիքի բարօրության համար ամբողջ հոգով աղոթք հղելով առ Աստված՝ ապրիլի 15-ին Սոսի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հերթական ռազմահայրենասիրական միջոցառումը՝ «Արցա՛խ, մեր սիրտ» խորագրով:

Հիրավի, հայրենիքը և մենք լծորդված ենք իրար, ինչպես հոգի և մարմին, ինչպես նպատակ և միջոց. նա գերագույն նպատակն է, մենք՝ միջոցը:

Խորագրի վեհ գաղափարը հարազատ է յուրաքանչյուրիս սրտին և մտքին. չէ՞ որ բոլորս գիտենք, որ Արցախը մեր սիրտն է, մենք՝ Արցախի: Նա մեր ապրելու, արարելու, արմատները մայր հողում ավելի ամրացնելու և խորացնելու առհավատչյան է, իսկ մենք՝ նրան ապրեցնողը, շեն ու կանգուն պահողը, նրա սրտի բաբախող զարկերը, առանց որոնց ուղղակի կդադարի լինել երկիրն այս սուրբ:

Հայրենիքը մենք ենք՝ ես ու դու, ու քանի կանք մենք, վառ է նաև հայրենիքի կանթեղը:

Միջոցառմանը ներկա էին համայնքի ղեկավար Հ. Գրիգորյանը, գյուղի, հայրենիքի համար նահատակված քաջորդիների մայրեր, հարազատներ, դպրոցի ուսուցչական կոլեկտիվը, աշակերտներ, համագյուղացիներ: Միջոցառումը բացվեց ՄԿԱԳՏՏ Ս. Ավետիսյանի ոգեցունց խոսքով. «…Ժամանակն արտացոլում է մեր արդարացի պայքարն ու պահանջները: Եվ ոչ մի օտար ուժ, ոչ մի ռազմական միություն չի կարող սասանել մեր անկոտրում ոգին: Մենք ենք այս հողի տերը, մեր պապերն այստեղ են ապրել ու սերնդեսերունդ ավանդել մեզ Աստծուց օրհնված, կռվախնձոր դարձած այս փոքրիկ լեռնաշխարհը, ուր ամեն մի քար հերոսական ասք է պահում իր մեջ ու պատմում սերնդեսերունդ, մշակում դիմակայելու և պայքարելու ոգի»:

Հնչեցին մեր սրտի զարկերն ազդարարող օրհներգի ելևէջները. բոլորս ոտքի կանգնած, ձեռքներս կրծքերիս սեղմած, կարծես ուժ առնելով հայրենիքի հանդեպ սրտում հրդեհված սիրուց և կարծես մեր սիրտը սփոփելով՝ երգում էինք՝ «Ազա՜տ ու անկա՜խ Արցախ…»: Բայց մեղեդին այս ավելի աղոթք էր, քան երգ, սպասումներով ու երազներով լեցուն աղոթք…

Այն, ինչ բոլորիս հոգում ու սրտում է, այս միջոցառման ընթացքում հնչեց դպրոցի սաների շուրթերից՝ ասմունքի տեսքով, հուզեց հայրենասիրական երգերի ելևէջներով, արտահայտվեց պարերի շարժումներում, ապրումներն ու սպասելիքները բեմականացվեցին բեմադրության մեջ:

«Ցավոք, հայրենասիրությունն ու հայրենանվիրությունը շատ ու շատ անգամ պետք է ապացուցվեն զենքով, ու որ ամենացավալին է՝ արյամբ… Հայրենիքի ազատության ու անկախության համար պայքար պետք է մղվեր, և այդ պայքարից՝ արցախյան երեք պատերազմներից անմասն չմնացին սոսեցիները:

2020թ. սեպտեմբերի 27-ին անորոշության ու անտերության մեջ Հայոց աշխարհի վրա թախիծ ու վիշտ էր իջել. մթնշաղի մեջ գուժական լուրերը տնից տուն էին անցնում, փողոցից փողոց, դիրքից դիրք, գյուղից գյուղ: Շուրջ երկու ամիս տևած կռվում ընկան տղերքը, մարեցին հազարավոր լույսեր… Նրանք սովորական զոհեր չեն, այլ սուրբ նահատակներ, որոնց հիշատակի առջև պետք է խոնարհվեն ոչ միայն մեր ժամանակակիցները, այլև գալիք սերունդները: Նրանց անունները պետք է փոխանցվեն գալիքին, որպեսզի սերունդները հոգու կրակ առնեն նրանց շիրիմներից, նրանց հերոսական ճանապարհից…»,- հչեց միջոցառման ընթացքում, ապա մեկ րոպե լռությամբ հարգեցինք մեր հերոս տղաների վառ հիշատակը:

Հավատարիմ մնալով մեր պատմական անցյալին, մեր ազգային ինքնությանը, փառաբանելով մեր պատմության հաղթական էջերը, ապավինելով լուսավոր ու պայծառ գալիքին՝ դպրոցահասակները ներկայացրին, թե ով ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում.

Ղարաբաղցի ենք.
Հին ենք, թե նոր ենք,
Այն թթենին ենք,
Որ ցանկացել են պոկել, գլխատել,
արմատից հատել,
Բայց մեր արմատը ձգել ենք հողում,
Այլևս ոչ մի հողմից չենք դողում,
Հարուստ ենք, այո՛, հարուստ ենք երգով,
Հարուստ ենք բերքով,
Հարուստ ենք մեր կուռ-կառուցյալ ձեռքով
Եվ… պատմությա՛մբ մեր:

Հայ լինելն առաջին հերթին առաքելություն է, մարդկային և անմարդկային, հնարավոր և անհնար բոլոր փորձությունների միջով քաղաքակրթության ջահը տանելու և դրանով մարդկային տեսանելի հորիզոնն ընդարձակելու առաքելություն: Սա մի ճանապարհ է, որն ավարտ չունի, քանի դեռ չի ավարտվել հորիզոնն ինքը:

Պատվո՛վ ու փառքո՛վ հաղթահարենք այս քարքարոտ, բայց հերոսական ուղին, որովհետև մենք, որ «ժառանգել ենք մեր նախնիներից նրանց մեծ հոգին, նրանց սերն անբիծ, որ ամրացել ենք այս ժայռերի մեջ», մի բռունցք պիտի դառնանք և հաստատենք «մեր կամքը անբեկ, հասակը՝ անթեք»:

Այս մի բուռ քարեղեն հողում,
Դեռ ինչքան ջանք է հարկավոր,
Որ պահենք հացը հոգևոր…

Առանց հայրենիքի մարդը ժամանակի ու տարածության պատահականություններին ու քմահաճույքներին մատնված ավազահատիկ է, առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին:

Այս տագնապալի ու պատասխանատու ժամանակաշրջանում խիզախություն ու կորով եմ մաղթում մեզ, որ հաղթահարենք բոլոր զրկանքներն ու դժվարությունները: Մեր բազկին՝ ուժ, մտքին՝ աչալրջություն: Թող հայրենյաց սահմաններում արշալույսները միշտ խաղաղ բացվեն:

Հավատանք ու սպասենք մեր հաղթանակած ու պանծալի ապագային.

Չի մնալու Արցախը մեր՝
Գերի ընկած մշուշին,
Հայ զինվորը ետ կբերի
Թե՛ Հադրութը, թե՛ Շուշին…

Հրանուշ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Սոսի միջնակարգ դպրոցի
փոխտնօրեն

ՆՈՐՈՎԻ ԸՆԹԵՐՑԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Մարտակերտի Վլ. Բալայանի անվան հ. 1 միջնակարգ հոսքային դպրոցում հերթական միջոցառումը, որ կազմակերպվել էր դպրոցի պատմության ուսուցչուհի Լիլիթ Մովսիսյանի կողմից, նվիրված էր Արցախի գոյատևման պայքարին՝ սկսած Շարժման օրերից մինչ այսօր, որն իր մեջ կրում էր Մայիսյան եռատոնի խորհուրդը:

Արցախի օրհներգով սկսվեց միջոցառումը, որին հաջորդեց ուսուցչուհու ելույթը.

«Հաղթանակներ խորհրդանշող օրը դիմավորում ենք կորստի մեծ ցավով, սակայն՝ մեր հայրենիքում ապրելու, արարելու անկոտրում մեծ կամքով բռունցքված:

...Մեր օրերում անհրաժեշտ է նորովի արժևորել մեր հաղթանակների դերն ու նշանակությունը՝ դրանց խորհուրդը դարձնելով նոր սերնդի համար ոգեկոչման, ոգեշնչման աղբյուր, որը կարող է հիմք հանդիսանալ գալիք հաղթանակների համար»:

Շուտով Մարտակերտի մշակույթի տան բեմում երևացին 10-րդ բնագիտական հոսքի և 11-րդ «բ» դասարանի շնորհաշատ աշակերտները: Ուղղակի խոսքեր չէին, որ հնչեցրին նրանք, այստեղ պատմություն կար, հայրենիքի սեր, այն պաշտպանելու, փայփայելու, հայկական պահելու ձգտում.

«Այն ծանր օրերին ոչ մի նախադրյալ չկար, որ մեր երկիրը կփրկվեր, ավելին՝ կհաղթեր թշնամուն Սարդարապատում ու դեռ բանակ ու պետություն կկերտեր, բայց եղավ, հաղթեցինք, հիմա ճիշտ ժամանակն է, որ նորովի ընթերցենք մեր նորագույն պատմությունը»:

«Ես ուզում եմ պատմությունը ճանաչել իր ողջ ողբերգականությամբ ու վեհությամբ, միայն ա՛յդ դեպքում մենք կարող ենք ճիշտ ընկալել այսօրվա խնդիրները... Մենք պիտի ստեղծենք այնպիսի հայրենիք, որ թշնամին սարսափի, իսկ «բարեկամ» կոչվածները ստիպված լինեն մեր ընկերությունը փնտրել...»:

«Մենք պետք է ստեղծենք հոգևոր հայրենիք, որը նվաճելի չէ բացարձակ: Երբ թրքությունը այսօր կաշվից դուրս է գալիս՝ սրբելու մեր ազգային հետքերը մեր իսկ հայրենիքում, ես չգիտեմ՝ լացե՞լ, թե՞ ծիծաղել նրա անհատակ տգիտության վրա, քանի որ նա չի կարող սպանել նաև հայ ժողովրդի պատմական հիշողությունը...»:

«Մեր ժողովրդին վիճակված է եղել անընդհատ գոյամարտել օտար ավարառուների և նվաճողների դեմ: Ցավալի է, երբ մարդ ի ծնե և ի բնե ապրում է աշխարհաքաղաքական մի տարածաշրջանում, ուր գայլերի ու բորենիների հոշոտման վտանգին է թողնված»:

«Հայ ժողովրդի զինված պայքարի արտահայտություններից է ֆիդայական շարժումը, որը տվել է ազատաբաղձ քաջորդիների մի մեծ համաստեղություն: Օտարել նրանց հայոց պատմությունից, նշանակում է՝ գունազրկել նրանց հազարամյա պատմությունը»:

«Միշտ էլ մեծ տերությունները իրենց տնտեսական և քաղաքական շահերին զոհաբերել են հայկական հարցը: Այսօր էլ չի փոխվել աշխարհը, չի փոխվել և մեծ պետությունների քաղաքականությունը»:

«Այսօր էլ մեր հասարակությունը կրկին բավականին ծանր վիճակում է, սակայն մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է անել առավելագույնը՝ բարոյահոգեբանորեն անկումը բացառելու համար»:

«Մեր պատմության մեջ նշանակալից երևույթ է կամավորական շարժումը հայ ժողովրդին բնաջնջումից փրկելու համար: Մեծ էր նրանց դերը թե՛ հայկական բանակի կազմավորման հարցում, թե՛ հաղթանակի...»:

«Հայ ազգային-ազատագրական շարժումները միշտ եղել են արդարացի ու սրբազան պայքարի գործունեության արդյունքը հաղթանակով պսակելու նվիրական նպատակ»:

«Ցավի ու մորմոքի մի պատմություն է պատերազմի բովով անցած մեր հերոս տղաների ու աղջիկների այսօրվա կյանքը: Ծանր ու թեթև վիրավորներին բուժելը, հաշմանդամ դարձած ազատամարտիկներին հոգատարությամբ շրջապատելը, զոհվածների ընտանիքների հոգացողությունը»:

«Մենք դեռ աշխարհին մեր հաղթական խոսքը կասենք: Մենք կզորանանք՝ ի հեճուկս մեր ոսոխների, մենք դեռ կհրավիրենք ողջ աշխարհից բարի հյուրերի, և ոչ ոք հայկական խնջույքից քաղցած չի գնա»:

Սերնդի լավատեսական խոսքերը համեմված էին երգ ու պարով, ապրելու, արարելու ձգտումով, հայրենիքը պաշտպանելու վճռականությամբ...

Դպրոցի տնօրեն Ռուզաննա Հարությունյանի շնորհակալական գոհացուցիչ խոսքն ուղղված էր աշակերտներին և ուսուցչուհուն, որով եզրափակվեց միջոցառումը:

Մնում է ասել՝ գալիքը փրկելու, երկիրը պաշտպանելու համար ունենք առողջ ուժ, որը պետք է շարժման մեջ դնել՝ հանուն այն հայրենիքի, որին նվիրաբերվեցին հազարավոր կյանքեր:

Նատաշա ՊՈՂՈՍՅԱՆԻ
ֆեյսբուքյան էջից

ԱԶԳԱՊԱՏՈՒՄ

ՄԻԱՅՆ ՀԱՅԸ ՉԷ, ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ ԵՎՍ ԲՈՂՈՔ ՈՒՆԻ

Քաղաքակրթություն՝ թաղված թթենիների տակ...

Անցել են շատ տարիներ, շատ, հարյուր հիսուն և ավելի տարիներ, և հայոց պատմության խոցող ու դաժան դրվագներով անվերջակետ տեսաժապավենը՝ այլևս նաև մեր իսկ իրական մաշկից, մեր հոգու ու սրտի ցավերից բխող ու նկարվող ժապավենը՝ նորօրյա իր զարհուրելի պատկերներով, ցույց է տալիս, մեզ իրական վկա դարձնում, թե ինչպես է կորսվել Հայոց Հայրենիքը այնօր, և ինչպես է սողալով կորչում, անհետանում, օտարին բաժին դառնում մի քրիստոնյա փոքրիկ սուրբ աշխարհ, ժողովրդիս, ազգիս, մեզ համար ՄԵԾ, շատ Մեծ Աշխարհը: Հարյուր հիսուն տարվա իրական, ակնառու, շոշափելի ոճրագործության փաստերի հիմքերով մի ողջ ժողովրդի կյանքի, մարդկային անպատմելի ապրումների անվերջակետ Ժապավեն, որի վերջն ու ավարտը չեն ուրվագծվում իր տեսակով եզակի տեսասկավառակի անհաշվելի շերտաշարում: Տեսասկավառակ, որ բովանդակում է մի ողջ ժողովրդի երեքհազարամյա կենսագրությունը: Ազգի կենսագրություն, որի անունն է Պայքար, ազգանունը՝ Կռիվ, անունը՝ Մահ, անունը՝ Կյանք, անունը՝ ազգի գեների հավերժության իրավունքի համար մշտապես ու անդադրում մղված ու մղվող պայքար, որի հաղթական, բաղձալի ավարտի նշմարները մշուշների մեջ են, հորիզոնի չերևացող հեռուներում: Իսկ մեր հորիզոնն այսօր անսանձ կրակների, բոցերի մեջ է: Եվ Հույսը, հույսն այն է, թե հրե կրակներից ու բոցալի կաթսայից նորից պիտի ելնի, ծնվի Ոգեղեն Հայի մի նոր Կերտվածք, մի նոր, ավելի խիզախ Հայկ, ավելի խիզախ Տարոնների ու Տիգրանների, Փիրումյանների կուռ շարք, որ կարթնացնի, քաջալերանքի կոչ կանի իր Գերդաստանին, Հայոց Ածուի շարքերին, նրա ձեռքը սրի հետ կտա նոր ԲԱՀ ու ԳՐԻՉ և նոր ՈՒԽՏ-ի մատյան՝ երկիրը չթողնելու, երկրում ապրելու և այն զորացնելու: Եվ այսօր, հենց այսօր, հենց հիմա՛ թող ծնվի այդ Հայկը, այն Հայկը, որն իր ռունգերի մեջ զգում է ՀԱՅ Աղխի հառնումը նահատակությունից ու մահից: Հաբեթանց ՏԱՆ-ը, Թորգոմի որդուն, նրա ծոռներին ՍԱ է բաժին հանվել և ասվել, որ ՆՐԱՆ, հենց նրան՝ Հայկին է բաժին տալիս լեռների մեջ ծվարած այս ՀՈՂ-ն ու նրա գոյության պայքարը, որ Հայոց Հայրենիքն է սա, որ նրա որդիները կռվող են ու դիմացկուն, որ նրանք քուն ու դադար չեն ունենա իրենց Բաժին արված Օրրանը հավերժ պահելու համար:

Եվ ասվել է՝ Պահեցե՛ք երկիրը ձեր ու շատացե՛ք: Այսօր ժամ՝ լինել-չլինելու, ժամ՝ ոգու արթնացումի, ժամ՝ Ազգային ոգու նոր կռման ու նոր հառնումի:

Չէ, հոգնել, երկնչել չկա, իմ հա՛յ ժողովուրդ, հոգնել չկա, քանզի մաքառումով ու պայքարով Հայի ԱՆՈՒՆ-ը պահե՛լն է մեր Ազգային դափնին, Ազգերի բազմագույն շքերթի մեջ մեր Գույնն ու Որակը՝ազգայինի Որակի նշանով: Այսօր, վաղը, թե անագան ամենից անհաս Լուսապսակին, ազգերի հարատևման ամենաանհաս թագուգահին հասնելու կարողությունն ու ունակությունն է մեր նախապապերից մեզ բաժին հանվել՝ Նոյից, Հաբեթից ու Թորգոմից՝ փոխանցվել ՀԱՅԿ-ին: Էն գլխից, ի վերուստ. Դաժան որոշում ու Վճիռ ժողովրդիս, ազգիս համար, բայց անգին ու լույսի մաքրության որոշում:

…Եվ արդեն քանի՜ հազարամյակ. ու մենք հլու, խոնարհ ծառան ենք Ի վերուստ մեզ տրված այդ որոշման, որ ունի հպարտ ու անհաս մի վսեմ ԱՆՈՒՆ՝ Հայ ու Հայաստան: Խարբերդցի հայ, Շուշեցի հայ, Հադրութցի հայ, Մարաղայի հայ, Մշեցի հայ, Ուտիք աշխարհի հայ…, Կորսված հայրենիքի բոլոր անկյունների հայեր, նույն ցավ ու դավի կրող, նույն ձեռագրով հոշոտված, առանց բնօրրանի մնացած հայեր…

Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ այսպես դասավորվեցին իրողությունները՝ մի քայլ առաջ, տասը քայլ՝ հետ: Այսպես եղավ հարյուր հիսուն տարիներ առաջ և այսօր, որ այսչափ խելք ունենալով, չունեցանք խելքի այն չափաբաժինը, որ Նրա՝ ավարառուի Ձեռագրին լավագույնս տիրապետեինք ու ավելի հաղթական, վայելուչ Ձեռագրով պատասխանեինք: Եղավ այսպես, քանզի հայրենապաշտության ձեռագիրը մեր շատ խայտաբղետ էր, ազգային թույլ ներդաշնակությամբ. խելոքները շատ էին, իսկ բոլորը միասին՝ նվիրյալների շարքերի կողքին՝ նաև անկարգ, նյութապաշտ շարքերով: Եվ սա՛ է ճշմարտությունը Վասակից ու Մերուժանից, ռես Ավեից ու Մխիթարի գլխին սուր քաշած ստահակներից մինչև այսօր: Արծաթն ու շահը, փառքն ու աթոռակռիվը սպանում, ոչնչացնում են քո մեջ ապրող երբեմնի հերոսին, երբեմնի ազգապաշտին, երբեմնի ազնիվ հային:

Եվ մի՞թե բանականությանը հասու չէ կամ դժվար է գիտակցել, թե որն է անցողիկը, որն է մնայունը. չէ՞ որ դժվար չէ յուրացնել ամենից տարրական գոյաբանաձևը. Մարդը մահկանացու է, նրա արած-թողածը՝ մնայունը:

…Ավա՜ղ հավասարվեցին, նույն հավասար հարթակին հայտնվեցին դար առաջ թուրքահպատակ՝ ազատության տենչով լեցուն, կուռ շարքերով մարտնչած, ավա՜ղ ապարդյուն ընկած հայդուկ-նվիրյալ՝ հարյուրհարյուր Գևորգ, Անդրանիկ, Չաուշ տղաների և Հայրենիք ազատագրած, հաղթանակի բերկրանքն ու վայելքը ժողովրդին, ազգին ընծա բերած Արցախյան Գոյամարտի տղաների դափնիները: Ընկան ցեխի, մրի մեջ, մրոտվեցին, նրանց կերտած խիզախումի պատվանդանն ընկավ, որի երբեմնի անչափելի խորությունն ու շքեղ բարձրությունը դարձավ լոկ Հուշ, Հուշապատում, հարթակ, որ վսեմ իրողությունից, բարձունքից իջավ հատակ: Ընկավ մի հզոր բերդ՝ դառնալով վերացական երեք կամ հինգ դասագրքային միտք:

Եվ տնքում է հողը Հայոց, լացում, մռնչում է հողը Հայոց՝ մեր անցյալ բոլոր սերունդների, քաջարի տղաների, ծեր ու մանկանց, հայոց որդոց ու մայրերի մարմիններով, նրանց արյամբ Ժայռ ու Բերդ, Ամրոց դարձած հողը հայրենի: Ո՜վ գիտե, գուցե ճշմարտություն է, որ հողը հիշողություն ունի, ո՜վ գիտե, բայց մեր դեպքում՝ այո: Մեր հողը հիշողություն ունի. ճակատագրի բերումով հայիս ազգային գեներն արյամբ մայր հողին շաղախվել, այնքա՜ն են շատացել հայրենի հողի մեջ... Հիշողություն, որ մարմնավորվել, Շունչ ու Լեզու առած, խոսում, աղաղակում է իր ինքնության, իր պատկանելության, իր գոյության, իր պայքարի մասին: Հարյուր և ավելի տարիներ Հայիս պայքարը չգտավ իր ցանկալի հանգրվանը, չգտավ այդ պայքարի շարքերում հաճախ աննկատ ու հաճախ էլ անտարբեր վկաների մեղքով: Իրենց՝ ազգային որակ փչացնող տեղերը գտան արծաթասերն ու փառամոլը, եսապաշտն ու մատնիչը…

Եվ նվիրյալների կամքով ու արյամբ բարձունքին հասած բերդերը երերացին ու ընկան: Միստիկ, վերացական է հնչում: Բայց մեր հողը, Հայոց հողը հիշողություն ունի: Մարդկային ու ազգային սխալներից հոգնած ու բզկտված մայր հողի միջից ցասումն է ելել, անթաղ մանչերի, մայրերի հայոց, երբեք չփակված ու բաց մնացած աչքերից նրանց՝ ցասումն է ելել… Հողիս լեզուն էլ դա՛ է. նա այդպես է դիմում աշխարհին: Իսկ որտե՞ղ են տերերը իմ: Եվ՝ Ո՜վ Անքննելի… Մարդկային մտքի ծայրերով ի՜նչ մտքեր ասես որ չեն անցնում: Չէ, չի նսեմանում միտքս, այն իրական, իրապես է դատում: Հարյուր տարի անց տնքում, աղաղակում է էրգրիս հողը տանջահար: Այլևս վառված, մեր հին ոստան Վանի մոխրացած այգեստաններից, տանջահար բանաստեղծ Մահարու օրրան այգեստաններից, կրակե լեզուները ՄԱՅՈ գետն անցնելով հիմա էլ եկե՜լ-հասել են Գտչավանք ու Դիզափայտ, վառվում, մոխրանո՜ւմ են մեր ծննդավայր, մեզ սնած ու օրորած հայոց մարտնչող Արևելքի այգեստանները… Եվ այսօր Տիգրանակերտի Սուրբ Կիրակոս եկեղեցում փրկություն գտած էրգրիս զարկվածների աղաղակները, նրանց լուռ տնքոցները ծուլվեցի՜ն-միախառնվեցին իմ Հադրութի, իմ Շուշիի, Իմ Մարաղայի, Մեծ Գետի, մեր կողմի կորսված Երևելիների ու Մայրերի, Հողվորի, Գրչի, մշակի ու մարտերում դեռ բաց աչքերով ընկած Տղաների հառաչին ու նրանց վերջին ակնթարթներին, վերջին մտքերին՝ նրանց անքննելի՝ ավելի խորացնելով Ազգային ցավի օվկիանոսը: Կիսված մի մարմին և զույգ արյունակից եղբայրներ՝ կորսված ու կռվող, իսկ ցավը նույնն է, իսկ ցավը մեկն է երկուսի համար, որ Երկիրն ապրի, որ Հայը ապրի: Տակավին ցավերի մեջ Գետի այս կողմից մեր ձայնն էլ հասավ էրգրին՝ Մհերի դռանը՝ թե որ կբացվի: Ճչում ու աղաղակում է Հայոց Աշխարհը և ուզում է հիշեցնել ու մատնանշել քաղաքակրթության մի չքնաղ օրրանի, մի չքնաղ աշխարհի մասին, մեռած մի էրգրի և իր կյանքի ու գոյատևման համար մաքառող ու մարտնչող մեր Երկրի մասին:

Եվ լսո՞ւմ է Աշխարհը: Այո՛, մենք տեսնում և լսում ենք, որ Աշխարհը և՛ լսում է, և՛ տեսնում, բայց այդ Աշխարհն ավելի շատ իր գործերով է զբաղված, իր օգուտներն է ուզում քաղել բոլոր հնարավոր հնարներով, բոլոր տեղերում, անգամ կրակների միջից, որտեղ Աստծո արարած իր տեսակն է մահանում և մեռնողից էլ է ուզում օգուտ քաղել… Համոզվել, համոզվել ենք, որ սա է աշխարհիս Կարգը, որ դարիս մարդասիրությունը միայն կոչեր են, միայն գեղեցիկ շարադրված բառեր, լավագույն դեպքում՝ կարեկցանք, հուսադրում: Սրանից այն կողմ գործում է միայն քո Սուր եղունգի, քո հուժկու Սրի և քո Միաբանության օրենքը… Ու թե այդպես չէ. ո՞ւր է մեծանուն ու մեծատուն այրեր աշխարհին տված, աշխարհի իմաստնությունը մեծ չափաբաժնով ավելացրած մտքի շտեմարան Վարուժանի ու Մեծարենցի, աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանի, Անրի Վերնոյի, մեծ նկարիչ Արշիլ Գորկու, այլևս վառված ու մոխրացած այգեստաններում իր մանկությունն ըմբոշխնած մի հրաշք հայ մանուկի՝ մինչև աքսորավայրեր դառը կյանքի մրուրը մինչև վերջին ումպ տեսած ու դատարկած բանաստեղծի, բոլոր գալիք սերունդների համար դաս ու դասագիրք Արամ Մանուկյանի և քանի՜-քանի մեծանունների էրգիրը Հայոց: Մեծանուններ, որ քայլել, խայտանքով վազել են Մուշի, Խարբերդի, Կարինի, Բրգնիկի ու Բագառիճի ճամփաներով, խմել Վանի բերդի տակ հայերեն գլգլացող վարար աղբյուրից, որի ջրերն այսօր հոսո՜ւմ-հոսում, բայց այգեստաններին չեն հասնում… Այգեպանը մահացել, Այգեստանները այրվել-մոխրացել են արդեն, իսկ Հողը այնքան ջերմ է, այնքան տաք, որ Հողի հիշողությունը չի լռում: Չի լռում: Հայոց Հողի հիշողությունը բողոքում է…

Իսկ գուցե իր մեծ, բայց բզկտված ու բզկտվող՝ իր մյուս այս մեր ԿԵՍ-ի համա՞ր է բողոքում և իր անկատար վճիռը որպես դրոշ պարզում մեզ: Հայրենի հողս տեսավ լռել, այսօր էլ շարունակում է լռել Աշխարհը արյունակից, ազգակից, հարազատ եղբոր ցավերին անտարբեր ու անհաղորդ: Ժայթքել ու չի հանդարտվում, ձայն տալով մեզ, Աշխարհին՝ թե ով է տերն իր, թե ինչու օտար ոտնահետքերից հեծում ու անտեր է մնացել: Էրգրիս հողը իր ցասումն է պարզել մեզ, որպես հրաման և իր ապրածի հիշեցում: Ապրել հայրենի հողի վրա և այն երբեք չլքել, չթողնել: Որ չկրկնվի մեծ ոճիրից մազապուրծ փրկված խարբերդցի այն վերջին վկայի՝ միլիոնի մեջ մեկ հայի պատմությունը, որը Խարբերդի իրենց թթենիների տակ թուրքի սվիններից սվինահարված իր հասակակից, իր փողոցի ու բակի ընկեր-տղաներից դիզված կույտի տակ նրանց արյունից արյունլվա, բայց փրկված, օվկիանոսի այն կողմը հասած և հազարների հետ 108 տարեկանում իր մահկանացուն կնքած Մեծ Ոճիրի վերջին վկաներից էր, ում ապրած 108 տարիները ունեին մեկ անուն՝ Հայրենիքի կարոտ և այդ տարիքում աչքերից խո՜ւրծ-խուրծ գլորվող արցունքներ... Նրանց թթենիների տակ թաղվեց հինավուրց մի ժողովրդի քաղաքակրթություն: Եվ նրա աղիողորմ արտասուքները հեռավոր Ֆրեզնոյից արյան երակներով եկան խառնվեցին իրենց տան բազմոցին նստած իմ Թալիշի, Իմ Հադրութի, Իմ Զրաբերդի, Իմ Մարաղայի թթենիների տակ ընկած, խոշտանգված, անօգնական մեծերի ու փոքրերի սառած արտասուքներին: Բառերով չեն սիրում Հայրենիքը, բառերով չի ստացվում փրկել Հայրենիքը, չի ստացվում պաշտպանել: Ոչ մի պետություն ուրիշի փրկության համար չի զոհել իրեն և չի զոհելու: Դու ու քո ԱՐՄԱՏ-ը պետք է կենսունակ լինեք, իսկ կենսունակությունը հանուն Ազգային Գոյի անդադրում աշխատանքն է, քրտինքն ու նվիրումը:

…Եվ մարդկային մտքի ու ձեռքի հզորության հատուցման ԺԱՄ-ի մասին չպետք է դադարել մտածել: Ավելին՝ մտածելը, միայն մտածելը սին է ու խաբկանք, գործե՛լ ու գործե՛լ, առա՛ջ նայել, շատանա՛լ, շատանա՛լ ու զորանա՛լ է պետք. ՀԶՈՐԱՆԱԼ՝ ՄԵԾ խոսքը ՄԵԾ գործ դարձնելով: Իսկ հզորանալու համար պարզապես պետք է լինենք բարոյական արժանիքներով տոգորված, խմորված, առաքինի, ազնիվ ու հայրենապաշտ հայեր, մեր հողի վրա, Հայրենի հողի վրա ապրելով, իրապես գործով սիրելով ու պահելով Հայրենի օջախները: Եվ ինչքան ճիշտ է ասված Մեծն Ազգապաշտի կողմից. «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ և կործանվում դրա պակասից»: Եվ կյանքը մեր քանիցս է ցույց տվել, որ ուրիշ ասելիք չկա, հարյուր անգամ փորձության ենթարկվելուց հետո՛ էլ: Ճիշտ է ասված՝ Հայրենիքն ապրում է, երբ դու նրա գրկումն ես, քո գոյությամբ, քո արարումով է ապրում քո պապենական ՏՈՒՆԸ, որի սյուների, օճորքի առաջ դու մեծ պարտավորություն, քո ծննդյան օրից քեզ տրված հրամանն ունես: Եզակի իրավիճակ, որի դեպքում հրամանը չի քննարկվում: Հարյուր և ավելի տարիներ առաջ ժողովրդիս տեսած ու ապրած արյունոտ ապրիլը, նույն լինել-չլինելու օրհասական մարտահրավերներով նորից եկել՝ ուղտի պես ոչ թե չոքել, կանգնե՜լ է մեր դռանը…

Չհուսահատվե՛նք, գոտեպնդվե՛նք, սերունդներին ամենօրյա աշխատանքով ու քարոզչությամբ ոգևորե՛նք ու չմոռանա՛նք, որ մեր ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻ ծանրակշիռ հուշասկավառակը հաղթությունների, խիզախումի դրվագներով լեցուն իր զույգն ունի՝ Հերոսական, աննկուն, ազգային-համաժողովրդական ոգու դրսևորումների ծանրակշիռ Հուշապատում-պատմասկավառակը, որի ամեն մի էջ ի զորու է ամբողջական-դարակազմիկ ու դարակերտ ՍԵՐՈՒՆԴՆԵՐ տանել իր հետևից…

Ուրեմն՝ առանց ակնթարթ ու րոպե կորցնելու՝ ի գո՛րծ, ի գո՛րծ:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 դպրոցի տնօրեն

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Օրացուցային տարվա չորրորդ ամիսը թուրքերը սկով ներկեցին, Աստված հանդուրժեց: Գուցե թե փորձ արեց պարզել այն ակունքները, որոնցից հայ ժողովուրդն ըմպում է անմահության կաթիլները և որպես փյունիկ հառնում մոխիրներից: Աստված փորձեց և համոզվեց հայի դիմացկունության, տոկունության, ապրելու կամքի, անխորտակելի ոգու, արարելու ուժի մեջ:

Ամեն ժողովուրդ գուցե թե իր հաղթանակների, տոների ամիսն ունի: Մերը մայիսն է... Բոլոր 12 ամիսներից մեզ համար առավել հարազատը: Մենք՝ հայերս, ավելի շատ արյուն ենք թափել, բայց ուրիշ է մայիսին թափած արյան գինը: 451 թվի մայիսի 26... Տղմուտ գետի ափին՝ Ավարայրում դրված էր հայ ժողովրդի լինել-չլինելու, հավատին տեր մնալու հարցը: Ժողովուրդը ելավ Ավարայրի դաշտ, զարկեց ու զարկվեց, ոգեշնչեց նահատակվելու ելած իշխանին, ռամիկին, փափկասուն տիկնանց և բոլորին, բոլորին: «Մահ իմացյալ անմահություն է»,- լսեց իշխան, շինական, գոտեպնդվեց, զարկին զա՜րկ առավել, և փրկվեց Աշխարհը հայոց, և ժողովուրդը հավատաց՝ ուժը հավաքականության մեջ է:

1918 թվի մայիսի 21-28: Սարդարապատի, Ղարաքիլիսիայի, Բաշ Ապարանի մատույցներում կրկին անգամ որոշվում էր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը: Թուրքերի յաթաղանին դեռ չէր չորացել 1915 թվի անմեղ զոհերի արյունը: Հայկական հարցը լուծելու բարբարոս տարբերակ ընտրած թուրքը վերստին ուրվագծել էր «Մեծ Թուրան» պետության ուրվականը, որը մշուշել էր արևախում ցեղի և՛ խիղճ, և՛ միտք, և՛ հոգի: Հայ ժողովուրդը դարեր շարունակ հանուն ազատության, հանուն հայրենիքի պայքարի հուրը ժառանգել է Հայկ Նահապետից՝ դեռևս իր կազմավորման արշալույսին: Այդ օրհասական օրերին 7 օր շարունակ Արարատյան դաշտի եկեղեցիների զանգերի ղողանջները ժողովրդին հանուն հայրենիքի սրբազան պատերազմի կոչ էին անում: Պատերազմի բովում թրծված զորահրամանատարներ Նազարբեկյանի, Սիլիկյանի, Դանիել-Բեկ Փիրումյանի և այլոց ելույթները զորքին հավատ էին ներշնչում հաղթանակի հանդեպ: Հայոց կաթողիկոսը՝ Գևորգ Դ Տփղիսեցին (Սուրենյանց - 1911-1930), Զավեն և Մեսրոպ եպիսկոպոսները կոչ էին անում չերկնչել թշնամու առաջ: Սարդարապատի, Բաշ-Ապարանի համար մարտնչողների առջև մարտական կոչով հանդես եկավ ղարաբաղցի Գարեգին Հովսեփյանը: (Գ. Հովսեփյանը ավարտել է Գևորգյան ճեմարանը, Բեռլինի, Հալեպի, Լայպցիգի համալսարանները, դասավանդել է Գևորգյան ճեմարանում, Ալեքսանդրապոլի, Երևանի համալսարաններում: Կյանքի վերջին տարիներին Մեծի տան Կիլիկիո կաթողիկոսն էր):

Խիստ հատկանշական է այն փաստը, որ հայկական զորքերի և աշխարհազորայիններ ի շարքերում թուրք բարբարոսների դեմ հերոսաբար մարտնչում էին տարբեր ազգերի ներկայացուցիչներ՝ եզդիներ, գերմանացիներ, ֆրանսիացիներ, էստոնացիներ..., տարբեր կուսակցությունների՝ ՀՅԴ, բոլշևիկյան ներկայացուցիչներ՝ մի կողմ դնելով իրենց քաղաքական պայքարի տարաբնույթ լինելը:

Կողք կողքի մարտնչում էին թուրքերի դեմ անուն հանած շատ անձնավորություններ՝ գրող Ակսել Բակունցը, Հովհաննես Բաղրամյանը (ԽՍՀՄ մարշալ), Արտակ Վարդանյանը (գեներալ-գնդապետ), Արարատ Ղարիբյանը (լեզվաբան, ակադեմիկոս), Ղուկաս Ղուկասյանը և շատ հանրահայտ անձնավորություններ: Առանձին դրվատանքի էին արժանի Պողոս-Բեկ Փիրումյանի հրամանատարությամբ գործող ղարաբաղցի զինվորները: Նրանք անձնվիրաբար և տոկուն մարտնչելու օրինակ էին ցույց տալիս:

«Ես մինչև այժմ էլ չեմ կարող մոռանալ,- Սարդարապատում մարտնչող ղարաբաղցիների մասին,- գրել է մարշալ Բաղրամյանը,- թե ինչպես ծայրահեղ անբարենպաստ պայմաններում էին մարտնչում նրանք: Ղարաբաղցիներն անձնվիրաբար հարձակվում էին հակառակորդի՝ թվում է, թե անմատչելի բարձունքների վերածված դիրքերի վրա: Ես մեծ համակրանքով լցվեցի դեպի ղարաբաղցի մարտիկները՝ մարտերում նրանց ցուցաբերած խիզախության, ինքնազոհության համար»:

Բռունցքվեց հայ ժողովուրդը, ապավինեց սեփական բազկի ուժին: Բիբլիական Արարատի հովանու ներքո ապրելու իրավունքը ի վերուստ հային էր տրված: Եվ տոկաց ժողովուրդը հայոց, դիմացավ, հավատաց, ապագային նայեց ապրելու հույսով և հաղթեց: Հաղթեց թուրքին ու, հավերժի ճամփորդ իր ցուպը ձեռքին, շարունակեց տեր կանգնել ապրելու իր իրավունքին: Ժողովուրդը մեկ անգամ ևս զգաց իր կորստյան վտանգը ու այն կանխելու համար միասնության, մեկ բռունցք դառնալու անհրաժեշտությունը: Սարդարապատի ճակատամարտը հայ ժողովրդի պատմության ամենափառավոր էջերից մեկը դարձավ: Այդ հերոսամարտի մասնակիցները միջազգային և ներքին բարդ ու խճճված իրադրության պայմաններում ապահովեցին Հայաստանի առաջին հանրապետության ծնունդը: Հենց պատերազմի օրերին՝ մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը հայտարարեց իր լուծարման մասին: Ադրբեջանը և Վրաստանը հայտարարեցին իրենց անկախության մասին: Հայոց ազգային խորհուրդն իր հերթին 1918թ. մայիսի 28-ը հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման օր:

Չնայած մայիսյան հերոսամարտերին, այնուհանդերձ, մահացու վտանգը արևելահայության գլխից լիովին չէր վերացել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր հաշտություն կնքել Թուրքիայի հետ և փոքր-ինչ դադար առնել: Հենց Հայաստանի անկախության օր Մայիսի 28-ին Հայոց Ազգային խորհուրդը պատվիրակություն ուղարկեց Բաթում Ալ.Խատիսյանի գլխավորությամբ: Բաթումի հաշտության պայմանագիրը կնքվեց հունիսի 4-ին: Բաթումի պայմանագրով Թուրքիային են անցնում Արևմտյան Հայաստանը և Արևելյան Հայաստանից Կարսի մարզը և 5 գավառ: Հայաստանի Հանրապետությունը ստեղծվում էր ընդամենը 11 հազար քառակուսի կիլոմետր տարածության վրա: Չնայած պայմանագիրը շատ ծանր էր Հայաստանի համար, բայց այն անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթ էր: Թուրքիան առաջինը ճանաչեց Հայաստանի անկախությունը: Այդ մասին Խատիսյանը իր ուղարկած նամակում գրել է. «Մենք կբերենք վատ հաշտության պայմանագիր, բայց կբերենք նաև անկախ Հայաստան, տուն, բույն, որտեղ կռվում է ժողովրդական միտքը: Այս բոլորը կկապի, կմիավորի, կբարձրացնի ոգին, իսկ դա կարևոր է: Ես հավատում եմ մեր պետությանը»:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց Գերմանիայի ու նրա դաշնակիցների պարտությամբ: Թուրքիան իր զորքերը դուրս բերեց գրաված տարածքներից:

Առաջին հանրապետությունը աշխատում էր աշխարհաքաղաքական լուրջ փոփոխությունների, ներքաղաքական խորացող ճգնաժամի պայմաններում: Քեմալական Թուրքիան շարունակում է լուրջ վտանգ ներկայացնել երիտասարդ Հայաստանի Հանրապետության համար: Ակնհայտ լարվածություն կար քաղաքական կուսակցությունների, քաղաքական գործիչների, զինվորական հրամանատարների միջև: Նրանցից շատերը հեռացան Հայաստանից: Թուրքիայի դրդմամբ Հայաստանի շատ շրջաններում զինված բախումներ սկսվեցին տեղի ադրբեջանցիների և հայերի միջև: 1920թ. սեպտեմբերին սկսվեց հայ-թուրքական պատերազմ, որը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի համար: Հայկական բանակը առանց լուրջ դիմադրության հանձնեց Կարսը: «Հայաստանի ճիչերը և օգնության աղաղակները ոչ մի տեղից՝ ո՛չ «մարդասիրական» Եվրոպայից, և ո՛չ էլ «հեղափոխական» Մոսկվայից արձագանք չգտան»,- գրել է Հայաստանի առաջին հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը: Նրա բանակցությունները բոլշևիկյան Ռուսաստանի հետ ավարտվեցին նրանով, որ Հայաստանում հռչակվեցին խորհրդային կարգեր: Խորհրդային 70 տարիների ընթացքում Հայաստանը աննախադեպ զարգացման առաջընթաց արձանագրեց արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, բոլոր-բոլոր բնագավառներում: Հայ ժողովուրդն իրեն անթառամ փառքով պսակեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Երկրորդ աշխարհամարտ, 1428 երկար ու ձիգ օրեր: Պատերազմ, որ հիմքերից ցնցեց քաղաքակիրթ աշխարհը: Հայ ժողովուրդը բազում փառավոր էջեր գրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի տարեգրության մեջ՝ սկսած շարքային զինվորից մինչև ռազմաճակատի հրամանատարներ, գեներալներ: Պատերազմի մասնակից հայ մարտիկների ու սպաների թիվը հասել է 671 հազարի, որից զոհվել է 367 հազարը (տարբեր աղբյուրներում, այդ թվում և դասագրքերում տարբեր թվեր են շահարկվում, ստույգը նշածս թվերն են): Հետաքրքիր է այն փաստը, որ Ադրբեջանից Հայրենական պատերազմին մասնակցել է 67 հազարով քիչ մարդ, քան հայ ժողովրդի տված զոհերն են:

Հայ ժողովրդի ծոցից ելել են 4 մարշալ և 1 նավատորմի ծովակալ, շուրջ 70 գեներալ. մարշալները և շուրջ 30 գեներալ ղարաբաղցիներ էին, այն դեպքում, երբ ամենաբարձր զինվորական կոչումը ադրբեջանցուն շնորհվել է 1965թ,՝ գեներալ-գնդապետի աստիճան: Ղարաբաղից Հայրենական պատերազմին մասնակցել են 45 հազար մարդ, զոհվել՝ 23 հազար, հերոսները՝ 21, որից 1-ը՝ կրկնակի, Փառքի շքանշանի երեք աստիճանի ասպետ՝ 5 հոգի, հերոսների թիվը՝ 108:

78 տարիներ են մեզ բաժանում մայիսյան կարմրաշունչ օրից, երբ լռեցին թնդանոթները: Մայիսի 9-ը դարձավ ամենացանկալի տոն օրը: Եվ որքան տարիները մեզ հեռացնում են Մեծ Հայրենականում տարած հաղթանակից, և նոսրանում են այդ հաղթանակը կռողների շարքերը, այնքան ավելի ենք համոզվում, որ միայն հայրենիքի նկատմամբ անսահման սերը կարող է ծնել հերոսություն ու անձնազոհություն: Եվ այդ հերոսությունն ու անձնազոհությունը իբրև ժառանգություն փոխանցվեց Մեծ Հայրենականի հաղթանակը կռած հերոսների որդիներին ու թոռներին, որոնք Արցախյան գոյապայքարի տարիներին իրենց հայրենասիրությամբ գերազանցեցին հայրերին ու պապերին:

Մայիսի 9-ին էր, երբ թուրքը ծնկի չոքեց Շուշիի պարիսպների տակ, և այն Եռատոնի կարգավիճակով (Արցախի պաշտպանության բանակի օր) մտավ ու ամրապնդվեց մեր էության մեջ:

Շուշիի ներկայիս կարգավիճակը մեզ պարտադրում է մեկ անգամ ևս հետ նայել մեր անցած ուղուն, դասեր քաղել պատմության էջերից, գոտեպնդվել ոգով և ապագայի նկատմամբ լավատեսությամբ:

Երիցս իրավացի է Նժդեհը. «Հաղթում է այն կողմը, որ վստահ է ոչ թե իր սպառազեն բռունցքին, այլ իր ներազեն ոգու գերազանցությանը: Երկաթե զենքերի դեմ հեշտ է վահան գտնել, բայց ո՛չ նաև ոգու զենքերի դեմ, որ քոնը պիտի լինի, հայ զորական, անպարտելի է մնում միայն այն դրոշակը, որ պարզվում է ցեղի անունով և ցեղի համար»:

Տարվա 12 ամիսներից թերևս մայիսն է, որ մենք իրավամբ կարող ենք անվանել հաղթանակների ամիս: Հենց մայիսին տեղի ունեցած պատմական հաղթանակներն այնքան հարազատ են մեր հոգուն, որ արժանի են ազգային տոն օրեր կոչվելու:

Ի հավերժացումն Սարդարապատում տարած հաղթանակի (այս տարի լրանում է 105-ամյակը), ի փառս պատերազմի դաշտում զոհված նահատակների և Առաջին հանրապետության ծննդի, 2005թ. մայիսին կազմակերպվեց շուրջպար Արագածի փեշերին, որին մասնակցեց շուրջ 160 հազար մարդ: Խորհրդանիշն էր՝ լինել միաբան, ունենալ միասնական կամք, ինչն այսօր շատ ավելի անհրաժեշտ է մեր ժողովրդին: Դա միաժամանակ սերունդների շուրջպար էր: Ձեռք ձեռքի տված՝ պարում էին պապ ու թոռ, հայր ու որդի, դպրոցական և ուսուցիչ: Պարողների հոգիներում մի միտք էր ծլարձակում. «Այնքան պիտի պարենք Արագածի փեշերին, որ հերթը հասնի Մասիսին»:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշան

ԱՆՁՆՎԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐՈՍՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Մայիսի 9-ը լոկ տոն չէ, այն մշտական հիշեցումն է այն մասին, որ անհնար թվացողը միշտ էլ կարելի է հնարավոր դարձնել, եթե կան բավարար կամք ու անսահման անձնվիրություն, եթե կա ըմբռնում, որ դա է միակ ելքը: 1992-ին Շուշին գրոհողները իրենց օրինակով ապացուցեցին դա եւ դաս թողեցին եկող սերունդների համար:

Շուշին ազատագրող ազգային հերոսներից է «Ոսկե արծիվ» շքանշանակիր Աշոտ Խաչատուրյանը: Ծնվել է 1966թ. հուլիսի 16-ին Ստեփանակերտում: Ավարտել է քաղաքի հ. 1 միջնակարգ դպրոցը: Երեք



տարի տեւողությամբ զինվորական ծառայությունն անցնելով Իժեւսկ քաղաքում՝ վերադարձել է Արցախ ու միացել Արցախյան շարժմանը, կամավորագրվել ֆիդայական ջոկատում: 1990թ. ԿՊՇ 3-րդ վաշտի հրամանատարն էր, միաժամանակ զբաղվում էր հետախուզությամբ: 1992թ. Աշոտ Խաչատուրյանը՝ Սեւ Աշոտը, Սղնախի ուղղությամբ օպերացիայի պատրաստման համար պատասխանատու, հետախույզ, հանդուգն դիվերսիաների եւ Հադրութի շրջանում մարտերի մասնակից էր: Շուշիի ազատագրման օպերացիայի նախօրեին նա գնաց Գլխավոր շտաբ եւ օգնություն ու խորհուրդ հարցրեց՝ ասելով. «Թո՛ղ հրամայեն, եւ մենք կմտնենք Շուշի ու կմասնակցենք ազատագրական մարտերին՝ անգամ կնքելով մեր մահկանացուն: Ես իմ տղաների վրա վստահ եմ, ինչպես ինքս ինձ վրա»: Որպես ուղղություններից մեկի հրամանատար՝ նա մասնակցեց Քիրսի ռազմական դիրքերը գրավելու եւ Լաչին-Շուշի ռազմական ճանապարհը վերահսկողության տակ վերցնելու գործողություններին, որից հետո իրականացվեց «Հարսանիք լեռներում» ռազմագործողությունը, ինչի շնորհիվ ազատագրվեց հայոց հինավուրց բերդաքաղաք Շուշին: Տասնամյակներ թշնամու գերության տակ գտնվող՝ կիսաավերված Սուրբ Ղազանչեցոցի վրա ծածանվեց հայոց հաղթական եռագույնը: Շուշիի ազատագրումն Արցախյան առաջին պատերազմում բեկումնային նշանակություն ունեցավ եւ նախանշեց հետագա հաղթանակների ուղին, Արցախի համար սա նաեւ պաշարման օղակը ճեղքելու հույս էր:

1997թ. Աշոտ Խաչատուրյանը տեղափոխվեց Երեւան, որտեղ մտավ ծառայության: Ամուսնացած էր, ունեցավ երկու որդի: Աշոտ Խաչատուրյանն իր մարտական ծառայության ընթացքում կարեւոր ու ռազմավարական նշանակություն ունեցող գործողություններ ու առաջադրանքներ է կատարել, որոնց մասին նշելը նպատակահարմար չէ՝ անվտանգության նկատառումներից ելնելով: 1988-1994թթ. պատերազմում ձեռք բերած հիվանդությունների հետեւանքով մահացել է 2009 թվականին: Կինն ու որդիները վերադարձել են Արցախ:

Ավագ որդին՝ Հայկ Խաչատուրյանը, «EFC» ֆեդերացիայի գլխավոր մարզիչն է, ինչպես նաեւ տաղանդավոր մարզիկ է, քիք-բոքսինգ, թաեքվոնդո եւ մուայթայ մարզաձեւերում ունի ձեռքբերումներ, պրոֆեսիոնալ մրցաշարերի է մասնակցել ու հաղթել: Մասնակցել է քառօրյա եւ 44-օրյա պատերազմներին: Հոր խրատները սրտում եւ վերազատագրման հույսով՝ ոչ թե խոսքով, այլ գործով ապացուցելու համոզմունքով է ՀԱՅԿ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԸ ապրում ու արարում, մարզվում ու մարզում սերունդ: Նրա հետ մեր ունեցած հարցազրույցը բովանդակալից էր:

- Հա՛յկ, ինչպիսի՞ն էր Ձեր հայրը:

- Իմ հուշերում հայրս մնացել է այնպիսին, ինչպիսին գիտեն նրան մարտական ընկերները, մտերիմները ու հարազատները. անվախ, համարձակ, չնահանջող, հաստատակամ ու նպատակասլաց, սկսածը ավարտին հասցնող, հայրենանվեր անձնավորություն, որն ազգային գաղափարները վեր էր դասում անձնական շահից եւ արյուն ու կյանք չէր խնայի այդ գաղափարներն ի կատար ածելու համար: Հայրս նաեւ առանձնանում էր թշնամու հանդեպ անողորմ, դաժան ու հանդուգն վերաբերմունքով ու գործողություններով, ինչն էլ ոսոխի ահ ու սարսափի պատճառ էր դարձել: Մարտական ընկերները պատմում են, որ հորս գլխի համար մեծ պարգեւավճար էր խոստացել թշնամին, բայց նրանց չի հաջողվել դա անել:

- Ինքներդ պատերազմների մասնակից եք, օգնե՞լ են, արդյոք, հայրական խրատները պատերազմի ծանր պահերին:

- Միշտ առաջնորդվել եմ ու շարունակում եմ առաջնորդվել նրանից ինձ փոխանցված խրատներով ու օրինակով: Տասնչորս տարեկան էի, երբ հայրս մահացավ: Տասնչորս տարին էլ է բավական նրա վեհ կերպարը հասկանալու, նրա կատարած գործերը վերլուծել կարողանալու համար: Իսկ շատ բաներ էլ նրա մասին իմացել եմ ավելի հասուն տարիքում՝ շփվելով նրա մարտական ընկերների հետ: Ոգեւորված լինելով նրա այն գաղափարով, որ հայրենիքի փրկությունը վեր է ամեն ինչից, ու կյանքն անգամ չպետք է խնայել հայրենիքի ազատության համար, ինքս էլ ունեցել եմ եւ ունեմ այդ համոզմունքը. մարտական խնդիրը կատարելիս նահանջ չկա, որքան էլ դժվար լինի ու խոչընդոտներով լեցուն ճանապարհը: Հայրս եւ նրա նման նվիրյալները շատ էին Արցախյան առաջին պատերազմի ժամանակ: Նվիրված էին իրենց հայրենամետ գաղափարներին, կոչվում էին գաղափարի մարտիկներ: 90-ականներին գրեթե բոլորն էին մարտիկներ, հատուկենտ մարդիկ էին, որ կռիվ չէին գնում: Ամոթ էր կռվին չմասնակցելը: Կար միասնություն, կարգապահություն, ընդհանուր նպատակ ու գաղափար: Մասնակիցը լինելով ապրիլյան ու 2020թ. աշնանային պատերազմներին՝ շատ բան եմ տեսել, նկատել ու այնպիսի բաների միջով անցել, որ ինձ պետք են եկել հենց իմ հոր ու նրա մարտական ընկերների խրատներն ու խորհուրդները:

- 2020 թվականի պատերազմից հետո Շուշին կրկին գերության մեջ է հայտնվել: 1992-ից 31 տարի անց Շուշին դարձյալ վիրավոր ու ավերված սպասում է իր զավակներին. ի՞նչ պետք է անենք: Ազատագրում լինելո՞ւ է:

- Մեզ պետք են հայրենիքի շահերը սպասարկող, առողջ դատող ու արդար առաջնորդներ, որոնք ոչ թե խոսքով, այլ գործով կարող են ցույց տալ, որ մենք ենք տերը մեր երկրի: Մենք պետք է ավելի շատ գնահատանք տանք Շուշին ազատագրած ու ողջ մնացած մեր լեգեոնդներին եւ սերունդների համար նրանցից օրինակ վերցնելու, պատմությունից դասեր քաղելու ավելի շատ հնարավորություններ ստեղծենք: Մեր խնդիրը մեր մեջ այդպիսի նվիրյալներ ձեւավորելն է՝ տեղանքին լավ ծանոթ, մարտական ու ռազմական գիտելիքների տեր, բարձր մարտական ոգով, վայրագ թշնամու անմարդկային գործողություններին համարժեք պատասխան տալու ընդունակ, հոգեպես կոփված մարտիկներ, որոնք նահանջելու ընդունակ չեն: Այդ դեպքում ազատագրում հնարավոր է:

- 44-օրյա պատերազմից հետո շատերի մոտ կա Մայիսյան եռատոնի հետ կապված ոչ միանշանակ մոտեցում. Շուշիի ազատագրման օրը նշե՞լ, թե ոչ, շնորհավորե՞լ, թե ոչ, Ձեր մոտեցումն ինչպիսի՞ն է:

- Մայիսի 9-ը փաստ է, որը չեղարկման ենթակա չէ: Տոնն իր խորհուրդը չի կորցրել: Պատահական չէ, որ նշում ենք Եռատոն՝ Հայրենական Մեծ պատերազմում հաղթանակի, Բանակի կազմավորման եւ Շուշիի ազատագրման տոն: Ես հիմնվում եմ մի շատ կարեւոր ու լուրջ փաստի վրա՝ մեր տղաները 31 տարի առաջ ինչ որ արել են, այդ արածի շնորհիվ ենք մենք ապրել ու արարել մեր հողում: Օրը նշել՝ չի նշանակում տոնախմբություն կազմակերպել: Իմ մոտեցմամբ Մայիսի 9-ը լավ առիթ է՝ կրկին համախմբվելու Շուշին ազատագրած ու հաղթանակ կերտած մեր հերոսների շուրջ, վերլուծել նրանց կատարած գործերը ու դասեր քաղել: Մենք ունենք օրինակելի կերպարներ, ինչպիսին է Սամվել Բաբայանը եւ ուրիշներ, որոնց կատարածը անհերքելի փաստ է մեր պատմության մեջ:

- Հա՛յկ, քիք-բոքսինգ մարզաձեւի մարզիչ եք եւ միաժամանակ մարտական պատրաստության դասընթացներ եք վարում քաղաքացիների համար, ի՞նչ սկզբունքների եք ավելի շատ ուշադրություն դարձնում:

- Ներկայում պարապում եմ քիք-բոքսինգ կրտսեր տարիքի մարզիկների հետ: Դա միտված է Արցախում սպորտն ավելի զարգացնելուն ու մեր ֆեդերացիայի կրտսեր մարզիկներին նախապատրաստելու այդ մարզաձեւով տարբեր մրցաշարերի մասնակցելուն եւ Արցախի անունը բարձր պահելուն: Դրան զուգահեռ վարում եմ մարտական պատրաստության եռամսյա դասընթացներ, որոնք ընդգրկում են 16 եւ բարձր տարիքի մարդկանց: Առաջնային սկզբունք է, որ թանկ է յուրաքանչյուր քաղաքացու կյանքը: Լեռնային Ղարաբաղում ապրող ցանկացած մարդ, առավել եւս՝ տղամարդ, պետք է լինի մարտունակ, բոլորն էլ պետք է գոնե տարրական գիտելիքներ ունենան: Իմ կողմից մատուցվող հմտություններն ու հնարքները համապատասխանում են լավ մարտիկ պատրաստելուն: Շեշտը դրված է մարզվողների մարտականությունը բարձրացնելու վրա: Դրա մեջ մտնում են ֆիզիկական պատրաստություն, այսինքն՝ ուժեղ, կոփված մարմին, մոտիկ մարտ վարելու հնարքներ եւ տեխնիկա, կոտրող, ծալող հնարքներ, սառը զենքի՝ դանակի հետ աշխատելու հնարքներ, հրազեն կիրառելու եւ դրանից պաշտպանվելու պատրաստություն, քաղաքացիական պաշտպանության հմտություններ. ինչպես գործել օդային տագնապի ժամանակ, բաց տարածքում ինչպես կարողանալ ճիշտ կողմնորոշվել, օգտվել կողմնացույցից, ինչպես նաեւ 21-րդ դարի տեխնոլոգիաները կարողանալ նպատակային օգտագործել եւ այլն: Այս ամենը մատուցվում է փուլ առ փուլ, համապատասխան պատրաստություն ստանալուց հետո: Ուշադրություն է դարձվում ոչ թե նրա վրա, որ մատուցվի ծրագիրը կատարելու նպատակով, այլ բանին, որ մարզվողը կարողանա սովորել ու ճիշտ կատարել հանձնարարվածը: Ձինվորի կյանքը առաջնային արժեք է: Պետք է լավ պատրաստել, թույլ չտալ, որ մեր հայրենակիցները անպատրաստ ուղարկվեն մարտադաշտ: Կարեւոր սկզբունք է կարգապահության սահմանումն ու պահպանումը, իհարկե, սեփական օրինակ ցույց տալով: Պետք է դաստիարակել այնպիսի սերունդ, որի հետ չեն համարձակվի կռվել: Պետք է կարողանանք տերը մնալ մեր հողերի, մեր հայրենիքի եւ մեր հայրերի հաղթական ոգով շարունակենք ապրել ու արարել մեր հողում՝ կերտելով նոր հաղթանակների օրեր:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՅԲՈՒԲԵՆԻ ՏՈՆԸ ՀԱԴՐՈՒԹԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Ապրիլի 19-ին Հադրութի միջնակարգ դպրոցում տիրող տոնական տրամադրության առիթն առաջին դասարանցիների «Հրաժեշտ Այբբենարանին» միջոցառումն էր, որին ներկա էին ուսուցիչներ, ծնողներ և աշակերտներ:

Միջոցառումը սկսվեց դասվար Արևիկ Բաբայանի ելույթով. «Այսօր մեզ համար տոն է, Այբուբենի տոնը փառավոր: Մեր հրաշք բալիկները դարձան գրաճանաչ՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները: Այբբենարանը այն փոքրիկ պատուհանն է, որով յուրաքանչյուր աշակերտ կարող է ներս թափանցել գիտելիքների աշխարհ: Ճիշտ է այն թևավոր խոսքը, որ դասվարը Այբբենարանի էջանշանն է, որ ցույց է տալիս յուրաքանչյուր տառ: Արցախյան այս իրավիճակով համոզվեցինք, որ պետք է աշակերտներին զինել ամենահզոր զենքով՝ գիտելիքով: Անտեսելով ներկայիս իրավիճակի պատճառները՝ ես ինքս հոգուս ամենանուրբ թելերով կապվել եմ իմ 14 սաներին ու, չխնայելով ջանք ու եռանդ, աշխատել եմ դարձնել տառաճանաչ: Այսօր նրանք ճանաչում են Մաշտոցյան 39 զինվորներին, այն զինվորներին, որ ոչ ոք չի կարող նրանց ո՛չ տապալել, ո՛չ կործանել և ո՛չ էլ թալանել»:

Այնուհետև խոսքը տրվեց փոքրիկներին: Նրանք վարժ ու արտահայտիչ ասմունքեցին, պարեցին, երգեցին երգեր՝ նվիրված հայոց գրերին:

Առաջին դասարանցիներին շնորհավորեց դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն Ս. Ղուլյանը՝ մաղթելով, որ Արցախ աշխարհում տիրի խաղաղություն, և նրանք կարողանան հասնել իրենց նպատակներին: Ծնողկոմիտեի նախագահ Սաթենիկ Սարգսյանն էլ իր և բոլոր ծնողների անունից շնորհակալություն հայտնեց դասվար Ա.Բաբայանին, որ նրանց փոքրիկներն արդեն տառաճանաչ են, կարողանում են միմյանց հետ հաղորդակցվել, գրել ու կարդալ մեսրոպատառ գրերով:

Իսկ ես մեր փոքրիկներին ցանկանում եմ նորանոր հաջողություններ ուսման ասպարեզում: Թող դեպի գիտելիքներ տանող ճանապարհը նրանց համար լինի հարթ ու հաղթական:

Արեգա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՂՂԻ ԵՎ ԲԱԶՄԱՆԻՍՏԻ ՀԱՏՄԱՆ ԿԵՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամփոփագիր: Հոդվածում լուծվում են մի շարք խնդիրներ ուղղի և բազմանիստի հատման կետերի կառուցման վերաբերյալ, որոնք կարող են հետաքրքրել դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչներին:

Խնդիր 1. Տրված է $ABCDA'B'C'D'$ խորանարդը և նրա երկու զուգահեռ նիստերին երկու կետեր՝ M և N: Կառուցել այդ կետերով անցնող ուղղի և խորանարդի նիստերի հարթությունների հետ հատման կետերը, / գծ. 1/:



Գծ. 1

Լուծում: Նախ կառուցենք M և N կետերի օրթոգոնալ պրոյեկցիաները խորանարդի հիմքի հարթության վրա՝ M'-ը և N'-ը: Այնուհետև MM' և NN' զուգահեռ ուղիղներով անցնող հարթությունը , / գծագրում այդ հարթությունը ներկված է / : MN ուղղի վրա նշված 6 կետերից յուրաքանչյուրը հանդիսանում է խորանարդի համապատասխան նիստի հետ հատման կետ, որոնց թիվը 6 է:

Խնդիր 2. Բուրգի երկու կողմնային նիստերին տրված են երկու կետեր՝ M և N, որոնց պրոյեկցիաները հիմքի հարթության վրա M' և N' կետերն են: Տարված է ուղիղ, որն անցնում է M և N կետերով: Կառուցել MN ուղղի և բուրգի նիստերի հատման կետերը:

Լուծում: Կառուցենք MN ուղղի հետքը հիմքի հաթության վրա, կստանանք 3 կետը: MN ուղղի և բուրգի BSC նիստի հետ հատման կետը նշանակված է 1 թվով: Այսպիսով, MN ուղղի վրա ստացանք 3 կետեր, որոնք համընկնում են եռանկյուն բուրգի կողմնային նիստերի թվի հետ, /գծ. 2/:

Խնդիր 3. Բուրգի CSD նիստում տրված է M կետը, իսկ ASB նիստում՝ N կետը: Այդ երկու կետերով տարված է MN ուղիղը: Կառուցել այդ ուղղի և բուրգի նիստերի հետ հատման կետերը:

Լուծում: Կառուցենք այդ կետերի պրոյեկցիան հիմքի հարթության վրա, կստանանք M' և N' կետերը: Կառուցենք $M'N' \cap AD = \{4\}$: Քանի որ MN-ի պրոյեկցիան $M'N'$ է, ապա այդ ուղիղների հատման կետը կհանդիսանա 5 կետը: Այսպիսով, MN ուղիղը քառանկյուն բուրգի բոլոր 5 նիստերի հետ հատվում է, /գծ. 3/:

Խնդիր 4. Տրված է հնգանկյուն պրիզմա: Նրա $AEE'A'$ և $CDD'C'$ նիստերի վրա՝ երկու կետեր՝ M և N: Այդ կետերով տարված է ուղիղ: Կառուցել այդ ուղղի և պրիզմայի հարթությունների հատման կետերը:

Լուծում: Կառուցենք այդ ուղղի օրթոգոնալ պրոյեկցիան հիմքի հարթության վրա: Կստանանք KM' ուղիղը:

$D'E' \cap MN = \{7\}$; $D'M_{\circ} \cap MN = \{T\}$; $BA \cap M'N' = \{K\}$: K կետում կանգնեցնենք ուղղահայաց պրիզմայի հիմքի հարթությանը, կստանանք $K6$ ուղիղը: Այսպիսով, MN ուղղի վրա ստացանք 7 կետեր, որոնք համապատասխանում են բազմանիստի հատույթի կետերի հատման կետերի թվի հետ, / գծ. 4/:



Գծ. 2 Գծ. 3

Խնդիր 5. Տրված է $ABCDE$ հիմքով S գագաթով հատած բուրգը: Եվ երկու նիստերին՝ ASB և DSE երկու կետեր՝ M և N: Կառուցել այդ կետերով անցնող ուղղի և բուրգի նիստերի հատման կետերը, / գծ. 5/:

Լուծում: M և N կետերը պրոյեկտենք բուրգի S գագաթից հիմքի հարթության վրա, կստանանք M' և N' կետերը:

$MN \cap M'N' = \{3\}$:

$CD \cap M'N' = \{6'\}$;

$S6' \cap MN = \{6\}$;

$CB \cap N'M' = \{S'\}$;

$EA \cap N'M' = \{7\}$;

$S7' \cap NM = \{7\}$;

$S5' \cap NM = \{5\}$:



Գծ. 4

Էլ ավելի գծագիրը տառերով և թվերով չծանրաբեռնելու համար առանց մանրամասնելու գրենք, որ 4 կետը ստանալու համար տանում ենք բուրգի վերին հիմքում ուղիղ և ստանում MN ուղղի 4 կետը:Այսպիսով, կառուցեցինք MN ուղղի հատման բոլոր 7 կետերը բուրգի նիստերի հետ, /գծ. 5/:



Գծ. 5

Օգտագործված գրականություն

1.Ф. Ф. Лысенко, С. Ю. Кулабухова, Математика. Сечения многогранников. Легион, Ростов-на-Дону. 2016

2.Е. В. Потаскуев. Опорные задачи по геометрии. Издательство «Экзамен», Москва, 2017

Ռուդիկ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱրՊՀ մաթեմատիկայի եւ ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր, Մ. գ. թ.

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Ասկերանի շրջանի Նորագյուղի Վ. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ բնագիտական առարկաներին նվիրված միջոցառում: Այն կազմակերպվել էր դպրոցի բնագիտական մեթոդմիավորման մասնախմբի ուսուցիչների կողմից՝ մասնախմբի նախագահ Ա. Գրիգորյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ:

Միջոցառումն առանձնահատուկ էր նրանով, որ շատ հետաքրքիր ու բազմաբովանդակ էր: Մեր խելացի աշակերտները ներկայացրին աշխարհագրական վիկտորինաներ, գիտական հետաքրքիր փաստեր ու տվյալներ, կատարեցին փորձեր կենսաբանություն, քիմիա և ֆիզիկա առարկաներից, ցուցադրեցին փոքրիկ ներկայացումներ աշխարհի հայտնի գիտական հայտնագործությունների մասին և այլն: Եվ մենք մեր աշակերտների մեջ տեսանք ապագա բժիշկների, գիտնականների, մաթեմատիկոսների, աշխարհագրագետների ու աստղագետների: Հաջողություն մաղթենք նրանց իրենց ընտրած ճանապարհին:

Հուսանք, որ նման միջոցառումներ հաճախակի կկազմակերպվեն մեր դպրոցում, որովհետև դրանք հետաքրքրություն ու սեր են առաջացնում երիտասարդ սերնդի մեջ բնագիտական առարկաների նկատմամբ, որն էլ շատ կարևոր ու անհրաժեշտ է մեր երկրի կրթության և գիտության զարգացման համար:

Շնորհակալություն կազմակերպիչներին ու մեր սիրելի աշակերտներին մեզ հագեցած օր պարգևելու համար:

Նորագյուղի միջնակարգ դպրոց

ՕՐԱԽՆԴԻՐ

ՄԱՐԶԱԿԱՆԻՑ ԴԵՊԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ. ԺԱՄԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Ուրախալի է, որ սպորտային պարապմունքներին զուգահեռ Արցախում թափ է առնում նաեւ քաղաքացիներին մարտական պատրաստություն սովորեցնելու գործընթացը: Շարունակական լինելով, անշուշտ, գործընթացն անցնելու է զարգացման փուլերն ու դառնալու է մասսայական, արդի: Կարեւորելով մարտական պատրաստության դերն ու նշանակությունը, ակտիվորեն մասնակցելով կազմակերպվող դասընթացներին՝ ավելի ենք ամրանալու, կարողանալու ենք ճիշտ գնահատել եւ օգտագործել մեր ներուժը, ավելի ամուր ենք կառչելու մեր հողին ու արժանապատվորեն ենք պայքարելու մեր հողում ապրելու համար:

Հետեւողական լինելով, որ Արցախում զարգացած լինեն ոչ միայն տարբեր մարզաձեւեր, այլեւ հնարավորություն ստեղծելով քաղաքացիների համար, նաեւ մարտական պատրաստություն անցնել, մարզադպրոցների մարզիչների կողմից արդեն իսկ մշակվում է քաղաքացիների մարտունակությունը բարձրացնելուն միտված դասընթացների ծրագիր, իսկ որոշ ֆեդերացիաներում գործում են մարտական պատրաստության խմբեր:

Շարունակաբար հարցազրույցներ վարելով տարբեր մարզաձեւերի մեր մարզիչների հետ՝ ակնհայտ է դառնում, որ նրանց ուժն ու ոգին, մարզական բարձր ձեռքբերումները չեն ավարտվում միայն մարզադահլիճում կամ ռինգում, այլ ցայտուն դրսեւորում են ստանում նաեւ ռազմադաշտում կամ քաղաքացիական պաշտպանություն ցուցաբերելու ժամանակ: Պատերազմներով անցած գրեթե բոլոր մարզիչներն էլ խոսում են այն մասին, որ այնպիսի իրավիճակներում են հայտնվել, երբ կյանքի ու մահվան պայքարը կարող էր հօգուտ մահվան ավարտվեր, եթե խելացի չգործեին կամ չունենային մարզական ու մարտական հմտություններ:

Ուրեմն, պետք է ազգը կոփել, ամբողջ բնակչությամբ դառնալ պաշտպաններ մեր հողին ու հայրենիքին՝ ողջ մնալով: Այդ նպատակին հասնելու համար միայն սպորտը բավական չէ: Սպորտը այլ բան է, մարտական պատրաստությունը՝ այլ: Ուստի մարզական պատրաստությանը զուգահեռ մարզիչները սկսում են նաեւ մարտական պատրաստության դասընթացներ վարել՝ իրենց գիտելիքներով ու փորձով կիսվելով, օգնելով մարդկանց, որ էքստրեմալ իրավիճակներում կարողանան ճիշտ գործել, իրար օգնել եւ ողջ մնալ: Անհրաժեշտ են ուժեղ, խելացի, մարտական պատրաստություն անցած փորձառու մարդիկ՝ ոչ միայն զինծառայողների, սպաների ու հրամանատարների շարքերում, այլեւ հասարակ քաղաքացիների շրջանում:

Դասընթացներին ընդգրկվելու համար տարիքային կտրուկ սահմանափակում չկա: Կարող են, եւ անհրաժեշտ է, որ բոլոր քաղաքացիները, անկախ տարիքից ու մասնագիտությունից, դիմեն հաճախելու համար: Թանկ է յուրաքանչյուր քաղաքացու կյանքը: Բոլորն էլ պետք է կարողանան ունենալ գոնե տարրական գիտելիքներ՝ ինքնապաշտպանության ու ողջ մնալու հմտությունների մասով:

Ընթերցողները կարող են կարծել, թե մարտական պատրաստության հմտությունները յուրացնելը դժվար է կամ ոչ բոլորին է հարմար: Իհարկե, ոչ ոք չի վիճում դրա հետ: Բայց պետք է հաշվի առնել, որ «մարտական պատրաստություն» հասկացությունը ներառում է լայն շրջանակ: Ամեն դեպքում սովորել ցանկացողները եւ դրա կարեւորությունը նշանավորողները, անշուշտ, գտնում են յուրացնելու հմտությունների եւ անելիքների իրենց բաժինը՝ նույնիսկ մարտական պատրաստության լայնամասշտաբ լինելու պարագայում:

Պրոֆեսիոնալ մարտական պատրաստությունը ներառում է մի շարք ուղղություններ, որոնցից մեկը մարտական հատուկ պատրաստությունն է, որը հաշվի է առնված ինչպես քաղաքացիական անձանց, այնպես էլ անվտանգության ոլորտի համագործակիցների համար: Սովորողներին առաջարկվում է մի քանի դասընթացների ընտրություն, որոնք ընդգրկում են տակտիկական հրաձգություն տարբեր զինատեսակներից. դանակով մարտ, ինքնապաշտպանություն եւ ողջ մնալու հմտություններ անսովոր կամ էքստրեմալ վիճակներում: Իսկ որոշ դասընթացներ անցնում են թվարկվածի համադրությամբ:

Մարտական պատրաստությունը ներառում է մերձակա մարտ վարելու համակարգ, որտեղ սովորեցնում են ինչպես հակամարտել զինված կամ անզեն հակառակորդի հետ եւ էքստրեմալ իրավիճակներում ճիշտ որոշումներ կայացնել: Տակտիկան մարտական պատրաստության անբաժանելի մասերից է, որն իրենից ներկայացնում է կարճ հեռավորության վրա մարտ վարելու թեորիա ու պրակտիկա: Դանակային մարտը ներառում է դանակով մարտ վարելու կամ պաշտպանվելու թեորիա ու պրակտիկա, ընդ որում, հրազենային զենք ունեցող հակառակորդի դեմ: Տակտիկական հրաձգության (ատրճանակ, հրացան) դասընթացների ժամանակ ցուցադրում են ու պատմում, թե ինչպես վարվել զենքի հետ, ինչպես կրակել թաքստոցից, ինչ անել, եթե հակառակորդից շատ մոտ հեռավորության վրա ես եւ այլն: Առանձին ուշադրություն է դարձվում սովորողների բարոյահոգեբանական վիճակի վրա, տարվում է համապատասխան աշխատանք՝ յուրաքանչյուր սովորողի մոտ ձեւավորելու մարտական բարձր ոգի, մարտունակության բարձր մակարդակ: Սկզբունքորեն կարեւորություն է տրվում ոչ թե նրան, որ այս ամենը մատուցվի ծրագիրը կատարելու նպատակով, այլ այն բանին, որ դասընթացների մասնակիցները կարողանան սովորել, յուրացնել ու ճիշտ կատարել հանձնարարվածը:

Բնականաբար, միայն մարզադահլիճը չի կարող բավարար լինել մարտական պատրաստության բոլոր կետերի կատարման համար: Հնարավորություն է ստեղծվում, որ սովորողները մարզումներին մասնակցեն հնարավորինս իրականությանը մոտ՝ բնական պայմաններում, կարողանան կողմնորոշվել բաց տարածքում, սովորեն օգտվել կողմնացույցից, իմանան ինչ անել օդային տագնապի ժամանակ, օգտվեն հրաձգարաններից ու վարժասարքերից:

Առաջիկայում հնարավորություն ենք ունենալու ներկա գտնվել մարտական պատրաստության դասընթացներից որեւէ մեկին, տեղում ծանոթանալ քաղաքացիների մարտական պատրաստության ընթացքին, զրուցելու մարզիչների եւ սովորողների հետ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՆԴ՝ ՀԱՎԵՐԺ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում մայիսյան հաղթանակների կապակցությամբ անցկացվեց ձևով ու բովանդակությամբ ինքնատիպ արիության դաս: «Անունդ՝ հավերժ մեր սրտերում» խորագրով միջոցառումը նվիրված էր 44-օրյա պատերազմում դպրոցի զոհված շրջանավարտների անունով դասասենյակների հանդիսավոր անվանակոչմանը: Ներկա էին ԱՀ ԿԳՄՍՆ և քաղաքապետարանի ներկայացուցիչներ, քաղաքապետը, զոհված քաջամարտիկների ծնողներ, հարազատներ, մարտական ընկերներ, այլք: Միջոցառման նախաձեռնող՝ դպրոցի մանկապատանեկան աշխատանքների կազմակերպման գծով տնօրենի տեղակալ Կարինե Աբրահամյանը բացման իր խոսքում նշեց, որ դասասենյակների հանդիսավոր անվանակոչումը կրթօջախի հերոս շրջանավարտների անունով կմտնի դպրոցի տարեգրության Ոսկե հուշամատյան, քանզի այն կդառնա հայրենանվեր պատգամ սերունդներին՝ նրանց անունները միշտ հիշել բարձր ու հպարտորեն, կիսատ թողած գործը շարունակել արժանապատվորեն:

Մեկ րոպե լռությամբ ներկաները հոտնկայս հարգեցին վասն հայրենյաց նահատակվածների հիշատակը: Ապա հնչեց Արցախի օրհներգը՝ յուրաքանչյուրի սրտում առաջացնելով նույն փափագը. «Փառավոր օրհնե՛րգ մեր սուրբ հայրենիքի, դեռ դարեդար հնչես դու այսօր շրջափակված ու վիրավոր, սակայն կանգուն ու հզոր, միշտ ամուր ու անսասան Արցախում՝ շնորհիվ քո քաջ որդիների, մեկ բռունցք դարձած ժողովրդի, միշտ բարձունքում հերոս տղաների: Ոտքի՛, Արցա՛խ...»:

Դաս-միջոցառումն սկսվում է նրա ղեկավար Կ. Աբրահամյանի կողմից «ներկա-բացակա» անելով:

Աբրահամյան Էդուարդ Իլյայի

- Ներկա՛ եմ, կրթօջա՛խ իմ հարազատ:

Ալլահվերդյան Լեոնիդ Զոնիկի

- Ներկա՛ եմ, դու իմ սո՛ւրբ բնօրրան:

Բաբայան Արմեն Կամոյի

- Ներկա՛ եմ, մեզ անձնուրաց ու հայրենանվեր առաքելություն պատգամած սո՛ւրբ օջախ:

Դալլաքյան Աշոտ Ռուբենի

- Ներկա՛ եմ, ազա՛տ ու անկա՛խ իմ Արցախ:

.....

* * *

44-օրյա պատերազմում զոհված բոլոր 22 հերոսները ներկա են՝ շնորհիվ իրենց մարմնավորող հայրենիքի վաղվա պաշտպանների, որոնք հաստատում են, որ նրանք միշտ մեզ հետ են, մեր կողքին, միշտ ներկա են, ու նրանց երբեք բացակա չենք դնի…

Ապա տղաներին միանում են աղջիկները՝ ցույց տալով, որ նախորդ մեր պատերազմներում հայ կանայք եղել են տղամարդկանց կողքին, ու այդպես էլ կլինի միշտ: Հրեղեն խոսքին հաջորդում են երգը, պարը, նվագը: Բոլորը մի բանի մասին են խոսում.

- Մեր անունն Արցախ է, մենք չենք հանձնվում: Ոտքի՛, Արցա՛խ, հաղթակա՛ն Արցախ, կանգո՛ւն, հպա՛րտ ու հզո՛ր Արցախ, եղել ես, կաս ու միշտ կլինես, հայկակա՛ն Արցախ, մեր սո՛ւրբ հայրենիք Արցախ: Պատանիների ու պարմանուհիների ելույթների յուրօրինակ ընդհանրացում-գնահատականն է դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանի խոսքը,

- Բոլորս վկա, ականատեսը եղանք, թե մեր այսօրվա լույս սերունդը ինչպիսի դաս մատուցեց մեզ: Սիրելի՛ ուստրեր, դուստրեր, մեր լո՛ւյս տղաներ, երբե՛ք չվհատվեք: Այն հերոսապատումը, որ գրեցին մեր տղաները 44-օրյա դաժան պատերազմի ժամանակ, այսօր էջ առ էջ դուք մատուցեցիք մեզ: Մատուցեցիք, որ հավերժության մեջ, ակնթարթների մեջ, ողջ պատմության ընթացքում չպետք է մոռացվեն նրանց խիզախումն ու արարումը: Բայց, սիրելի՛ աշակերտներ, դուք, որ Արցախի ապագան եք, հուշամատյանի էջերը լավ սերտելուց բացի ավելի քան պետք է տիրապետեք մաքառումի՛ էջերին: Չէ՞ որ զոհված տղաների ոգին անցել է ձեզ, պետք է հուշամատյանը անընդհատ սերտել և չթողնել վայրկյան անգամ մոռացումի փոշի նստի երբե՛ք ու երբե՛ք: Բայց պետք է նաև միշտ հիշել, որ ապրելով ոգով՝ պետք է ուժեղանալ: Դա՛ են պահանջում այսօր կյանքի մարտահրավերները մեզանից: Ապրողներիս գործն այն է լինելու, որ այնպես անենք, որ այս դասասենյակներում, մեր բոլոր դպրոցներում սովորեն հայ երեխաները: Դրա համար մեր խոսքը դարձնենք գործ, մեր բառն ու բանը դարձնենք գործ, մեր քայլերը դարձնենք գործ, մեր միտքը, մեր գործը միմիայն հանուն հայրենքի՛ լինի, և պահե՛նք Արցախը:

Միջոցառման շարունակությունը հերոսների անուններով կոչված դասարաններում էր:

Աշոտ Վերդիյանի անունով կոչվում է 1-ին «գ» դասարանը: Փոքրիկները երդվեցին, որ հպարտորեն ոտք կդնեն, քաջի անունը կրող դասասենյակ, վառ կպահեն մեր արծիվ տղաների անմար հիշատակը, և կշարունակեն նրանց կիսատ թողած հայրենանվեր գործը:

Այդ հիշարժան օրը նրանք մտան աստղիկների շարքերը:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԴԱՍՂԵԿԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՆ Է ԴՊՐՈՑՈՒՄ

Ներդպրոցական վերահսկողության համակարգում անգնահատելի է դասարանի ղեկավարի դերն ու նշանակությունը: Այն նույնքան մասնագիտական գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ է ներառում, որքան որ առարկայի փորձառու ուսուցիչը: Լույս ու բարիք սերմանելը ուսուցիչ դառնալու կարևորագույն նախապայմանն է բոլոր ժամանակների համար: Եվ եթե ձեռք բերած կարողություններին ու հմտություններին գումարենք նաև մարդկային մեծ հմայքը, ապա նա կդառնա այն անձնավորությունը, որի շուրջը, անկասկած, կհամախմբվեն բոլոր աշակերտները: Սա առաջին հերթին հենց դասղեկի թերևս պարզ բնութագիրն է: Դասղեկը դպրոցի միջին օղակում ներդպրոցական վերահսկողությունն ապահովող սուբյեկտ է, որի իրականացրած գործառույթների գլխավոր նպատակն այն է, որ նպաստի ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ընտանիք առողջ փոխհարաբերությունների հաստատմանը, աշակերտի անձի ձևավորմանը, զարգացմանն ու դաստիարակմանը, որը պետք է դառնա ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարելավման գրավականը: Հանրակրթական դպրոցի գործունեության կարևորագույն նպատակը չի սահմանափակվում հասարակությանը առարկայական գիտելիքներով հարուստ շրջանավարտ տալով: Ցանկալի է, որ նա ունենա նաև մարդկային բարձր որակական հատկանիշներ՝ լինել հայրենասեր, ազգային մտածողություն ունեցող, ինքնուրույն մտածելակերպով օժտված անձնավորություն, որն ի վիճակի է տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվել, հարգել համամարդկային արժեքները, լինել իր ուժերին վստահ: Դասարանի ղեկավարը պետք է իր ամենօրյա աշխատանքում ներառի այս և նման շատ այլ դրույթներ: Դասարանի ղեկավարը, հանձն առնելով այդ պատասխանատու պարտականությունը, իր աշխատանքները պլանավորելիս պետք է հաշվի առնի մի շարք առանձնահատկություններ և անշեղորեն պայքարի դրանք կյանքի կոչելու համար: Նախ և առաջ պետք է ձևավորել միասնական նպատակներ հետապնդող դասարանական կոլեկտիվ: Այդ նպատակին հասնելու համար պետք է կարողանալ դասարանում ապահովել բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, որը կնպաստի աշակերտների համադասարանական ուսումնական գործունեությանը, ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Ուսումնական պրոցեսում նվաճումները կլինեն ավելի շոշափելի, երբ դասղեկը համագործակցի դասարանում աշխատող առարկայական ուսուցիչների հետ և համակարգի նրանց գործունեությունը: Դասղեկի ուշադրությունից չպիտի վրիպեն աշակերտների հաճախումները, նա պետք է հետևի օրագրերին, նրանց առաջադիմության մասին տեղյակ պահի ծնողներին: Դասղեկ լինելը պարտավորեցնում է համապարփակ աշխատանք տանել ինքնատիպ ընդունակություններ ունեցող աշակերտների հետ ինչպես նրանց մտահորիզոնը ավելի ընդարձակելու և հետաքրքրությունների շրջանակներն ընդլայնելու համար, այնպես էլ «դժվար» երեխաների ու նրանց ծնողների հետ՝ չբացառելով նաև հոգեբանի միջամտության անհրաժեշտությունը: Իսկ սա նշանակում է անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ, ինչը, բնականաբար, դասարանի ղեկավարի աշխատանքի կարևորագույն օղակն է: Դասարանում ծագած կոնֆլիկտներին անդրադառնալը դասղեկի աշխատանքի առաջնահերթություններից է, բայց այն արդարացի լուծելու և պատճառն արմատախիլ անելու համար կարևոր է աշակերտներին, նաև նրանց ծնողներին, նրանց ընտանեկան վիճակին քաջատեղյակ լինել: Աշակերտի՝ մասնագիտության մեջ կողմնորոշվելն ու այդ ուղղությամբ հետաքրքրություններ դրսևորելը շատ հաճախ բախվում են ծնողների կարծիքներին: Նման իրավիճակներում մեծ մասամբ հաղթող են ճանաչվում ծնողները: Այս պարագայում շատ կարևոր է դասղեկի հետևողական աշխատանքը, կարևորվելով և իհարկե, առաջնահերթությունը տրվելով աշակերտի նախընտրած մասնագիտությանը: Տեղն է հիշեցնել հայ մեծահարուստ Գ. Գյուլբեկյանի ասույթը. «Մարդ իրավունք չունի սխալվել երկու ընտրության մեջ՝ մասնագիտություն ընտրելիս և ամուսնանալիս. դրանք նրա կյանքի մշտական ուղեկիցներն են»: Մանուկ հասակից աշակերտները պետք է լավ իրազեկված լինեն ինչպես իրենց իրավունքների ու այդ իրավունքների պաշտպանության, այնպես էլ իրենց պարտականությունների ու դրանք անվերապահորեն կատարելու մասին: Դասղեկն իր աշխատանքները պլանավորելիս պետք է նաև այդ հարցերը ներառի ու հետևողական լինի ուստարվա ընթացքում: Պարբերաբար դասալսումներն առարկայական ուսուցիչների մոտ, նրանց հետ խորհրդակցելը, համատեղ ուժերով առկա հիմնահարցերին անդրադառնալը և դրանց ճիշտ լուծումներն ավելի դյուրին դարձնելը դասղեկի անբեկանելի աշխատանքի մասը պետք է լինեն: Դասղեկի ամենօրյա աշխատանքի մաս պետք է դառնա դասարանում, դպրոցից դուրս աշակերտի օրինակելի պահվածքի, արտաքին տեսքի, լավ արարքների խրախուսումը, դասարանի հերթապահությանը, դասարանի սանիտարական վիճակին հետևելը: Դասղեկն աշակերտների հետ շփումը հիմնականում իրականացնում է զրույցների, միջոցառումների կազմակերպման միջոցով, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել երեխաների ներաշխարհը, խթանել նրանց առաջընթացը: Լավ կլինի նաև այդ բոլորի մասին գրառումներ կատարել այդ նպատակի համար հատուկ մատյանում: Հարկ է, որ այդ մատյանում յուրաքանչյուր աշակերտի համար հատկացված լինեն հատուկ էջեր, որոնցում կլուսաբանվեն նրանց հետ անձնական շփումների արդյունքները, տվյալներ նրանց նախասիրությունների, հետաքրքրությունների, ընտանիքի, ծնողների, ընկերների մասին, հասարակական աշխատանքներում, կազմակերպվող միջոցառումներում աշակերտի ցուցաբերած ակտիվության մասին: Գրառումները կօգնեն դասղեկին աշխատանքի մասին հաշվետվություններ ներկայացնել դասղեկական մեթոդմիավորման (եթե կա) կամ մանկխորհի նիստերում:

Ներդպրոցական վերահսկողության համակարգում շատ կարևոր են դասղեկի դաստիարակչական գործունեության գործընթացի պլանավորումն ու կազմակերպումը՝ սովորողների հոգեբանական և անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ: Դասարանի աշխատանքները պլանավորելիս անհրաժեշտ է նախաձեռնել այնպիսի գործառույթներ, որոնք կերաշխավորեն դաստիարակության առջև դրված խնդիրների իրագործումը, և որ շատ կարևոր է, գործընթացը կդարձնեն առավել արդյունավետ ու նպատակասլաց: Պլանը, բնականաբար, պետք է հենված լինի գործնական միջոցառումների վրա: Օրինակ՝ մտավոր դաստիարակությունը խթանելու համար կարելի է կիրառել «Մրցենք լավ սովորելու համար», «Լավ ձեռագիրը բարի բնավորություն է հուշում», «Համացանցը՝ լրացուցիչ գիտելիքների աղբյուր» և նման միջոցառումները, որոնք, անշուշտ, կնպաստեն գործին: Բարոյական դաստիարակության համար կարելի է անդրադառնալ «Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը մեր բոլոր հաղթանակների գրավականն է», «Մեր լեզուն, մեր մշակույթը, մեր հավատքը՝ ամրակուռ վահան դարերի փորձություններին» և այլ թեմաների: Նման գործնական միջոցառումներ կարելի է նախաձեռնել գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական, հայրենասիրական դաստիարակության հիմնահարցերին անդրադառնալիս: Հայրենասիրական դաստիարակության առումով կարելի է շատ դրվագներ օգտագործել՝ հենվելով մեր բազմադարյա պատմության փառավոր էջերին, ներառյալ՝ Արցախյան գոյապայքարը: Մեր բազմադարյա պատմության փառավոր էջերը կերտած շատ հերոսների մասին կան գեղարվեստական հոյակապ ստեղծագործություններ, վավերագրական, գեղարվեստական կինոնկարներ, սակայն արցախյան շատ հերոսների նկարների վահանակն է միայն դպրոցներում, մինչդեռ նրանց անցած մարտական ուղու, սխրագործությունների մասին տեղեկությունները շատ համեստ են:

Դասղեկը շատ անելիքներ ունի դասարան-ընտանիք-ծնող հարաբերություններում՝ գիտակցելով, որ ինքը կարող է շատ հարցերում խորհրդատու լինել ծնողի համար: Ինչ խոսք, ծնողն էլ կարող է դառնալ դասղեկի լավ օգնականը: Այս փոխհարարբերությունները կհաստատեն, որ դասարանի ղեկավարը սովորողի ընտանիքի բարեկամն է: Այն միաժամանակ կնպաստի աշակերտի պահվածքին տանը, դպրոցում, իրեն շրջապատող միջավայրում:

Այս տողերը գրելիս ակամայից հիշեցի իմ դպրոցական տարիները, երբ դասղեկս քառորդը մեկ գալիս էր մեր տուն (մեր ընտանիքը բազմանդամ էր՝ հազար ու մի պակասություններով հանդերձ): Ճիշտ է, մենք՝ դպրոցականներս, կամ քաշվում էինք մի կողմ, կամ ջանում էինք դուրս գալ տնից: Իսկ նա բարի ժպիտով թե՝ «Ես ձեզ համար եմ եկել, ո՞ւր եք գնում»:

Ստուգում էր մեր դպրոցական անկյունը, ուրախ զրուցում մորս հետ, պատրաստակամություն հայտնում օգնել՝ ինչով կարող է: Մի առանձին երանությամբ եմ հիշում այն օրերը, երբ դասղեկը մեզ համոզում էր օգնել գյուղի տարեց մարդկանց: Գյուղի միակ աղբյուրից ջուր էինք բերում նրանց համար, ձմռան շեմին փայտ կտրտում, դասավորում ծածկի տակ, շատ անգամ փոքրիկ բանջարանոցի համար հող փխրեցնում և նման մանր-մունր աշխատանքներով օգնում շատ-շատերին: Հաճախ էր պատահում, որ բարի պառավները հնամաշ գոգնոցի գրպանից մի բուռ չիր, չամիչ կամ մի կոնֆետ ծածուկ (դասղեկը չնկատի) խոթում էին մեր փոքրիկ բռան մեջ: Կարմրում էինք, բայց ներքուստ ուրախանում «մեզ վարձատրելու» համար: Իսկ մեր բարի դասղեկն այս ամենը չնկատելուն էր տալիս...

Օ՜հ դուք երջանիկ, օ՛հ անհոգ օրեր՝

Ընդունակ միայն ուրախացնելու:

(Մ. Նալբանդյան, «Մանկության օրեր»)

Պլանավորելով աշխատանքները և առաջնորդվելով դրանով՝ դասղեկը մի առ ժամանակ հարկ է, որ անդրադառնա իրականացրած միջոցառումների բերած ներգործությանը: Ասել է թե՝ քննարկի աշակերտների մասնակցությամբ կատարած աշխատանքները: Դասղեկի դաստիարակչական աշխատանքների պլանը պետք է արտահայտի դասարանի առօրյան, հեռանկարները, զարգացման ընթացքը, ավելի կոնկրետ՝ այն նաև պետք է իրավունք տա որոշակի ժամանակամիջոցում ամփոփել դաստիարակչական աշխատանքի արդյունքները և նախատեսել նոր աշխատանքներ: Երբեք չպետք է սահմանափակվել միջոցառումների անցկացմամբ: Պետք է այնպես անել, որ դրանք օգնեն սովորողի անձի ձևավորմանն ու զարգացմանը: Դրանք պետք է հնարավորություն տան փոխել այս կամ այն միջոցառման բնույթն ու բովանդակությունը, մտցնել նոր պահանջներ, մատնանշել նրանց իրականացման ուղիները: Միաժամանակ ցանկացած միջոցառման կամ բովանդակային զրույցներից հետո (աշակերտներին հետաքրքրող հարցերի շուրջ) դասղեկը պետք է պարզի միջոցառումներից կամ զրույցներից ստացած տպավորությունները: Այդ ամենը կարելի է պարզել աշակերտներին ուղղված մի քանի հարցերի միջոցով, կամ աշակերտներն իրենք են պատմում կամ գրավոր ներկայացնում իրենց տպավորությունների մասին, որոնք միաժամանակ կլինեն հետևյալ հարցերի պատասխանները. «Ինչքանո՞վ էր հետաքրքիր միջոցառումը», «Ինչպիսի՞ն էր ընդհանուր տպավորությունը», «Կցանկանա՞ք նման նոր միջոցառումներ», «Ինչպիսի՞ միջոցառում կնախընտրեիք դուք»: Դասարանի ղեկավարի ընտրությունը չպետք է հիմնված լինի պատահականության սկզբունքի վրա կամ բխի ուսուցչի՝ ժամանակի անբավարար լինելու պահանջից (ինչը շատ հաճախակի կրկնվող սկզբունք է): Սխալված չեմ լինի, եթե պնդեմ, որ դասարանի կառավարման ղեկը հաճախ հանձնվում է այնպիսի ուսուցչի, որն առանձնապես չի փայլում ուշադրությամբ, համակողմանի գիտելիքներով, ազնվությամբ, համբերությամբ, անկեղծությամբ և բնավորության այլ դրական գծերով: Ճիշտ ընտրված դասղեկը, պարզ է, ճիշտ ընտրություն կանի դասարանի ավագի հարցում: Դասղեկը պարտավոր է ի նպաստ դասարանի օգտագործել ընդունակություններով աչքի ընկնող աշակերտների ներուժը, առանձին վերաբերմունք դրսևորել սոցիալապես ոչ բարվոք վիճակում գտնվող աշակերտների նկատմամբ, այնպես անել, որ նրանք ճնշված չլինեն «արտոնյալ» խավի երեխաների ազդեցությունից: Ես տակավին մնում եմ այն համոզման, որ բոլոր ուսուցիչները չէ, որ կարող են կրել դասարանի ղեկավարի ծանր բեռը: Անվիճելի է նաև այն, որ դասաժամերով ծանրաբեռնված ուսուցիչը դասարանի ղեկավարի պարտականությունները լիարժեք չի կարող կատարել պարզապես ժամանակի սղության պատճառով: Չպետք է մոռանալ մի կարևոր արձանագրում ևս. մանկավարժի, առավել ևս նաև դասղեկի աշխատանքը կաղապարներ չի հանդուրժում. այն մնում է որպես ստեղծագործական մոտեցումների, պրպտումների, նորի ու նորագույնի ձգտումի ասպարեզ, գումարած՝ նպատակ ու եռանդ, քրտնաջան աշխատանք՝ գիտակցելով, համոզվելով, որ որտեղ աշխատանք, այնտեղ և՝ հաջողություններ, այնտեղ՝ հաղթանակներ: Չեմ հիշում, թե երբևիցե դասղեկների դասընթացներ եղած լինեն: Լավ կլիներ կազմակերպվեին նման դասընթացներ հոգեբանների, սոցիոլոգների մասնակցությամբ: Դրանք կնպաստեին ավելի հեշտությամբ թափանցել աշակերտների ներաշխարհը, բացահայտել նրանց կարողությունները, ինչու չէ, պայքարել նաև բնավորությունների ոչ վայել գծերի դեմ:

Դասղեկի աշխատանքը շատ ավելին է պահանջում, քան ես փորձեցի ներկայացնել, և ոչ մի գործառույթ էլ սահմանափակումներ չունի: Պարզապես չպետք է անտարբեր լինել քեզ վստահված աշակերտների ապագայի նկատմամբ: Իսկ ապագայի արմատները ծլարձակում ու ամրանում են դպրոցում՝ ուսուցիչների, դասղեկների հովանու ներքո:

Լ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԼԵԶՎԱՐՎԵՍՏ

ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ, ՍԻՐԵԼԻ ԱՐԱՄԻ ՈՐԴԻ ՌՈԲԵ՛ՐՏ՝ ԱՐԱՄԱ ՑԵՂԻ ԴՊԻՐ

(«Արամորդու գիրը» գրքի շուրջ՝ 65-ամյակի կապակցությամբ)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳՈՒ ԿԵՆԱՐԱՐ ԼՈՒՅՍ Է (ՌԵ)

Արցախյան հանրահայտ բանաստեղծ, հրապարակախոս, թատերագետ, Արցախյան առաջին մեծ գոյապայքարին մասնակցած Ռոբերտ Արամի Եսայանը ծնվել է 1958թ., Ժդանովի Նորագյուղ (Թազաքենդ) գյուղում: Այնուհետև ընտանիքով տեղափոխվել են Ստեփանակերտ: Ապրել ու ստեղծագործել է Շուշիում: Նրա վերջին արցախյան գեղագիտական գիրքը բազմանշանակ «Արամորդու գիրն» է (Ստեփանակերտ, 2020թ., 256 էջ՝ բանաստեղծություններ, պոեմներ («Բառի ճանապարհը», «Դրախտի շեմը», «Եվ լույս է ելնում երակից ցավի», «Լռության ինքնագիրը», «Լուսայգի շիվերը»), չափածո թարգմանություններ, հարցազրույցներ, գրախոսություններ): Չափածոյի *լռություն* բառի վերնագրային գեղագիտական ոճավորումը՝ Հ.Շիրազի քառատողային գործածության նման, լայն ընդգրկում ունի գրավոր խոսքով շատ բան ասելու բնագավառում: Ենթավերնագրային այդ խոսքը խտացված է «Լռության ինքնագիրը» շարքի բնաբանում (էջ 104):

Գրում եմ տողերի միջև ծգվող տարածքում,
բացելով մտքերիս մի՜տքը,
բացելով հույզերիս հո՜ւյզը,
մինչև որ հանկարծ պարուրում են ինձ
ենթագրե՜ղը ճերմակ լռության:

(Հեղինակային գրավոր չասված՝ մեզ չմատուցված ներքին՝ մտային, գեղագիտական հրաշք դրսևորում: ***Գրում եմ տողերի միջև ծգվող տարածքում…*** ենթագրե՜ղը ճերմակ լռության խոսքը չափածոյի եսայանական ընդգրկուն ոճի յուրատիպ գեղեցիկ արտահայտություններից են):

Վեցերորդ տասնամյակն անցկացրած բանաստեղծն իր վարպետ գրչի հոգեբանական և ուժեղ վերացարկված, այլաբերված ոգեխույզ պատկերներով տվել է ժամանակի ընդհանրական դիմագիծը: *«Բանաստեղծի տեսողությունը հուշարձանվել է ոգու հայտնությամբ»*,- քննվող գրքի էջ 190-ում աներկբա հայտարարել է հեղինակը Սյուզանա Գրիգորյանի հետ ունեցած հարցազրույցում:

Երեսուն տարի առաջ հասուն զինվոր, հմուտ գրչի ծառա արցախցի բանաստեղծը եղել է ազատության համար պայքարի ելածների շարքում (Արցախը հիմա կորցրել է իր ձեռք բերած երազանքը՝ ինքնուրույնությունը): Մեծ հեղինակը, իր քաղցր տունը (Շուշի), աննման քաղաքը թշնամուն թողած, հիմա չի ուզում հայրենի հողում օտարահպատակ ապրել:

Ռ. Եսայանը ի սկզբանե լեզվարվեստի յուրատիպ գեղագետ է: Նրա կառուցած յուրաքանչյուր գեղագիտական պատկեր բառերի իմաստաբանական նորովի խտացում է՝ խիստ այլաբերված, վերացարկված ոճով: Մեզ ծանոթ այս վերջին գեղագիտական գրքի՝ «Արամորդու գրի» կապակցությամբ գրչակից-ընկերուհի Ժ. Բեգլարյանը հուզաթաթավ նշել է. *«Վերնագիրն անմիջականորեն կապ ունի Ռոբերտ Եսայանի կենսագրության հետ: Նա ի ծնե արամորդի է, բայց վերնագրի իմաստային ընդգրկումն ավելի խորն է: Բանաստեղծն իրեն* ***Արամա ցեղի դպիր*** *է հայտարարում: 60-ի շեմը հատած բանաստեղծն իր իմաստասիրական տարածքներից խոսք է բացում ընթերցողի հետ»* (քննարկվող գրքի էջ 247): Իսկ Ս. Խանյանը շեշտել էր մեծ հեղինակի *Նորագույն չափածոյի ծաղկադաշտի ճանաչված լինելը:* Նա Ռ. Եսայանին սովորական պոետ չի համարել: Այս գրքով ոչ թե բառարանային բառերի նոր ճանապարհ ցույց տվեց հանրահայտ հեղինակը, այլ «…մարդկային կյանքի տեսադաշտի վրա հառնած անհատականությունների, կերպարների պատկերասրահ… Գրքի հինգ բաժինների ստեղծագործությունների հենքը բառ-պատկերների հյուսվածքն է» (հեղինակի այս վերջին գրքի էջ 244):

Ահա մեծ հեղինակ Եսայանի նշված գրքից հինգտողանոց բանաստեղծություն «Լռության ինքնագիրը» շարքից.

Ես համբուրում եմ ծնունդն Անհունի:
Կաթիլն իմ արյան բո՛ւյն է կենսալի:
Ստվերիս քարերն համբուրող անձրևը
երգ է չգրված…
Եվ թևավորվո՛ւմ է Անհունն իմ շնչով (էջ 125):

Սա խիստ վերացարկված քնարական խոսք է՝ նվիրված անձրևին, որը յուրահատուկ է Ռ. Եսայանի գրչին ի սկզբանե: Ինքնության հոգեբանական զուգորդումը բնական երևույթին՝ անձրևին, խիստ վերացարկված է: Բանաստեղծի ստվերով երբևէ ծածկված քարերը երկնի անհունի *անձրևով են համբուրվում երկնքին* (ոչ մի գեղագետի կողմից այսպիսի կառույցներով ընդգրկված երազուն համբույր դեռ չի արձագանքված): *Հեղինակն էլ իր հերթին է համբուրում այդ երկնայինը* (Ես համբուրում եմ ծնունդն Անհունի:// *Կաթիլն իմ արյան բո՛ւյն է կենսալի):* Ինքնավիճակը մեղմ անձրևի ժամանակ՝ գեղագիտական պարզ հիշողություն է անդրադարձնում, ու կաթիլների մեղմ ձայնը յուրատիպ երգ-բանաստեղծություն է չգրված... Բնական այս ճշմարտությունը գեղագիտական խոսքի նորովի ոճով արժևորել է բառարվեստի հմուտ վարպետը, գնահատել տիեզերքի՝ օգոնով հարուստ օդի լավագույն պահը մարդու շնչառության համար: Արվեստագետը գեղագիտական *խոսքով* հաստատել է մարդկանց զգացածն այդ պահին, իբր նաև բնության արձագանքը մարդու էությամբ *(Եվ թևավորվո՛ւմ է Անհունն իմ շնչով):* Գեղագիտական երևակայական բառաշխարհով *Անհունի աննմանին տիրակալ դառած՝* մեզ է մատուցել խոսքարվեստի արցախյան արքան:

Սովորական երևույթի բառային ոճական գեղեցիկ նկարագրության պատառիկով ներկայացրինք եսայանական բանարվեստից (այս փոքր բացատրությամբ աղճատեցինք նաև ընտիր չափածոն):

Կամ ինքնազրույցն իր ստեղծած գեղագիտական հրաշքի՝ *բանաստեղծության* հետ (տքնանքի ավարտին՝ լուսաբացին)՝ սքանչանալով ու անէանալով բնական վեհին՝ դյուրին թվացող *լուսանալուն* և ընդհանրացրել՝ *այգն է տրոփում ոտքերիս տակ* սովորական պահը.

Բանաստեղծությո՛ւն,
Աստղային պահերդ
հրո՜ւմն են իմ արյան
դեպի շառավիղն անանձնապատկան:
Ինքնամաքրման հաճույքը ձգի՜ր
ակնթարթներով ոգևորության,
ձգի՜ր անհունդ երակիս միջով
նաև այն անեզր տքնանքից հետո,
երբ ես կանգնում եմ ցնորվածի պես,
և ա՜յգն է տրոփում ոտքերիս տակ…(ն. տ.):

Հայոց գեղագիտական խոսքում իմաստաբանորեն անհարիր թվացող բառերի կապակցման վարպետ Ռ. Եսայանը կարողացել է ինքնին զրուցել, ստեղծել իր գեղագիտական աշխարհը: Անհուն տիեզերքը՝ մութի ու լույսի փոխհաջորդման հրաշքով, միշտ էլ հիացրել ու հիացնում է բանական մարդ արարածին… Անգամ իր մարմնական զգացումներից հրաժարվելով՝ այն վեր է ածել տիեզերական վերացարկման… Սքանչացած պահի զգացումները տարրալուծվում են տիեզերքին՝ *Աստղային պահերդ// հրո՜ւմն են իմ արյան//* դեպի շառավիղն անանձնապատկան:

Կատարվել է թումանյանական զարմանալի նոր քայլ: Զգացականը զուգորդվել է գեղագիտականին՝ վերածվելով առարկայացված ճշմարտության.

խոսքս… ընդունեցեք,
որպես… *համբույր* (106, Հ. Թումանյանի իղձը):

Որոշ բառեր յուրահատուկ գեղագիտական ճանապարհորդություն են կատարել Ռ. Եսայանի բանարվեստում և կարծես իմաստաբանորեն կապակցվել մեզ անհարիր թվացող պատահականի, անսպասելի այլ բառի: Օրինակ՝ *ուռկանի հետքից արցունք* նկատող բանաստեղծը մեզ տվել է սովորականը, բնականը, մեր տեսանելին, բայց վերագրել մեզ համար անհարիր թվացողի, ինչպես՝ ուռկանից թափվող քիչ ջուրը՝ *ուռկանի հետքից արցունք* կոչելը: Այստեղ *ջուր* և *արցունք* համադրումը հեռու չէ ճշմարտությունից, բայց մենք չենք կապակցի մեր սովորական խոսքում այդ տիպի ընկալումը: Ցանկացած անհարիր թվացողը հենց հասկանում ենք, սովորական ու պարզ է դառնում մեզ համար: Կամ *հիշողությունը դառնում է ճանապարհի բիբ* գեղագիտական հրաշք կառույցը հեղինակի համար *ճշմարտացին հիշելը՝* հիշեցնելն է: Ոգին՝ մուսան, ներշնչանքը Ռ. Եսայանին պահել է գեղագիտական ընտիր աշխարհում, մղել յուրօրինակ խոսելուն, որը երբեմն մարդկանց թվում է անհասկանալի (անգամ IV կուրսի լավ սովորող ազնիվ բանասեր ուսանողուհին համարձակվել է հանձն առնել իսկույն չհասկանալը):

Հենց փորձ է արվում բացահայտելու խոսքի ընտրանին, ցավոք, աղճատվում է օրինակելի գեղագիտականը, ուստի երբեմն հրաժարվում են հրաշքի բառային փոխարկումներից՝ գեղագիտական ու պարզ գիտական բառերի փոխհաջորդումից:

Հասարակ մի բառ-հասկացություն (օրինակ՝ *հետք*) Ռ. Եսայանի «Հետագիծ» պոեմում գեղագիտորեն երեք կարճ տողի է վերածվել՝ արտահայտելով մի ամբողջ հոգեբանություն, չգրված յուրօրինակ աշխարհ է ստեղծել՝ տալով հեղինակային նորույթ պատկերը՝ հագեցած լեզվաբանական գիտաբառերով.

Մի բազմակետ է
հետգրությունը
իմ ճանապարհի (141):

Գեղագիտական խոսքի կենտրոն բառերը երբեմն մեծատառով են գրվել եսայանական ոճում՝ կարծես վերածվելով *հոգեաշխարհի քարտեզի մայրաքաղաքի,* ուշադրություն բևեռել տալով այդ կարևոր ընդհանրացման վրա, որի ձեռք բերածը հարևան բառերով իմաստաբանական հրաշք է թվում, ինչպես՝ Անդի՝ այն աշխարհը, անդրաշխարհը. Բառը լապտեր է,// որով լուսավորում եմ խաչմերուկը կյանքի:// Բառը երազ է,// որով տեսնում եմ տարածությունները// և ըմբռնում խորհուրդն *Անդիի* (արևմտահայերեն՝ *այն կողմի,* էջ 11): Ոգի և Կամք մեծատառերով բառերը հուշում են ստեղծագործելու պահին ունեցած տքնանքը (էջ 13, նաև վերնագիրն է օժանդակել ընկալելուն՝ «Ներշնչանքին դիմավորելը») և այսպես այլ մեծատառով բառեր՝ Անհայտ, Բան, Ելք, Մեծագույն (14), Ավետյաց (17), Անհայտ, Ոգի (18), Անհուն, Լույս, Հորիզոն (19) և այլն, որը նախորդ դարի Արևմտահայ չափածոում սովորական էր:

Բառը մի աշխարհ է թումանյանական անմահ բնութագրությունը յուրաքանչյուր բառի իմաստային նրբերանգներն է շոշափել, որը տքնանքով տեղադրել է ստեղծագործողը ու դարձրել իր սրբությունը: Այն միջարկված ընկալում է յուրաքանչյուր ընթերցողի համար: Ռ. Եսայանը, լավագույն գեղագետների նման աստվածացրել է բառը, նրան նվիրել շարահյուսական տարբեր կառույցներ՝ իր սրտաբուխ խոսքը, խոհափիլիսոփայական մտորումները, արցախյան գեղագիտական անմահությունը, հայ իրականության հազարամյակային հոգու հավերժ թարգմանությունը… միշտ յուրովի.

Բառե՜ր, բառե՜ր…

Մերթ քրտնում եք իմ շուրթերին,
Մերթ թպրտում թռչունի պես…
Մինչև որ դուք ձեզ գտնում եք:
Եվ առաջին անգամ բացվող
կրծքի նման
ճերմակ թուղթն է հևում
այնժամ
աստվածային ձեր հպումից…

և այլ աննման այրական կառույցներ (15):

Ես ընտրում եմ *բառը,*
որպեսզի հոգու դատարկությունը
կրճատվի քիչ-քիչ՝
լցվելով լույսի տաք շնչառությամբ:
Ընտրում եմ *բառի*
անհայտությունը,
ուր լռությունս հոգու պահո՜ւստ է:
Իմ ճանապարհին ինձ ուղեկցո՜ւմ են
Հիշողությունը
և շունչը *բառի:*
Ինձ աջակցո՜ւմ է ոգին դարերի (17):
Բառի ինքնանկարը,
Բառի ինքնանկա՜րն եմ որսում ընթացքից,
Քամու ժապավենին գրելով մի տող՝
մի ապսպրանք,
հասնում եմ սահմանին ոգու ու արյան:

Ամեն ճանապարհ պիտի՛ հաղթահարի ներքին փակուղին:

Գրում եմ մի բառ տարածքում լույսի,
և բարձրանո՜ւմ է լռության ոգին վիհից մոռացության,
և ցավի դուռը բացվում է դեպի հիշողությունը լեռնապարերի,
և փոթորկված երկինքը տարուբերվում է ճյուղերին ծառի:
Բառերի պատերազմով
ո՛չ թե խոցվում է բիբը ճանապարհի,
այլ ընդարձակվո՜ւմ է տեսադաշտը տողի (115):
Մի բառ.
Ինչքան իրար մեջ ենք,
Այնքան էլ, սե՛ր իմ,
Իրարից դո՜ւրս ենք:
Հիշողության գնդակով սպանվե՜լ է…
Հորիզոնը (65):

Բառի կենտրոնացումը բառ լեզվաբանական միավորով Ռ. Եսայանի գեղարվեստում շատ-շատ է:

Անհարիր բառերի կապակցումը նրա գեղագիտական ոճական առանձնահատկությունն է: Իրականում նրանք անկապ չեն: Բանաստեղծը կարողացել է նկատել մեզ անծանոթ թվացողը, հայտնագործել լեզվական արտահայտության նորույթը: Եթե կուտակումներ են լինում, ապա մի քիչ դժվար ենք հասկանում: Տքնող, հանրությանը պարզեցված, ընկալելի թվացող ընդհանուրը մատուցող է մեծ հեղինակը: Նախորդ գրքում՝ «Ինքնության դռներ» (Ստեփանակերտ, 2018թ.) այդ տիպի մեծ միավորները շատ էին:

Ահա քննվող գրքի շարահյուսական միավոր նորակապակցում կառույցը, որը մեր գեղագիտությունում երբեմն եզակի է *(անձրև, որոտ, կայծակ՝ գարուն).*

Աղջիկը
նվագում է ստեղներին հորիզոնի,
և երաժշտությունը կոհակ առ կոհակ
լցվում է գուռը,
որից ջո՜ւր են խմում ճանապարհները (էջ 40):

Գուռը (աղբյուրի ջուրը թափվելու քարե փոսը՝ պատրաստված մարդու կողմից) այստեղ ամենահեռացած բառն է, որին վերաբերում է մեր խոսքը: Երկրի վրա եղած ծորն ընդհանուր անձրևաջուրն ընդունող մեծ տարածքն է: Ճանապարհները կարելի է ուղղակի և այլաբերական հասկանալ՝ ջրի առու դառած հոսքը: Ահա սովորական խոսքային բացատրություն, որը մեր աչքերի և ունկերի համար գեղագիտական ընտիր ու հաճելի կառույցի է վերածվել մեծ հեղինակի կողմից: Բնականը խոսակցական ցածր ոճի արժեք ունի՝ անձրևաջուրը հոսում է ծորն ի վար:

Բանաստեղծության մնացած մասն արդեն ուղեղի լարում է պահանջում՝ հասկանալու գեղագիտականը:

☞14

ԳԵՂԱԳԻՏԱԿ

ՆՈՐԻՑ ՔԵԶ ՀԵՏ, ՍԻՐԵԼԻ ԱՐԱՄԻ ՈՐԴԻ ՌՈԲԵ՛ՐՏ՝ ԱՐԱՄԱ ՑԵՂԻ ԴՊԻՐ

13 Վերացարկումն ավելի մեծ միավոր է ու խիտ, ուստի միանգամից անընկալելի է պատկերը՝ հույժ գեղագիտական (թեև նույն գարնան պահերի նկարագրության շարունակություն՝ անգամ ավելացրած թռչունների վախը՝ *դուրս են ցայտում… բիբերը թռչունների).*

Այրվո՛ւմ են
շեղջերը երազի,
որոնցից դո՛ւրս են ցայտում մերթընդմերթ
բիբերը թռչունների:
Ճակատագրի ափի մեջ շողո՛ւմ է
Արցունքը հրեշտակի…
Լցվել է երկինքը
ճիչերո՛վ թևավոր…
Եվ գարնան հետքերի վրայով
անցնում է
հողմը կրակի:

Ամբողջ բանաստեղծությունը նաև կարելի է հասկանալ իբրև *գարնան հրաշք զարթոնքին՝ բնական այդ կախարդական երևույթին նվիրված երաժշտության կատարում:*

Քառատողյա նմուշների անդրադառնանք, որը դիտարկման, քննարկման ավելի մեծ ուժ ու կարողություն է պահանջում, թեկուզ ունի հազարամյակի փորձարկման պատմություն:

Եթե իմ ստվերից հոսում է աղբյուրը
և լվանում զոհասեղանը հիշողության,
ուրեմն իմ ձեռքերից ծլո՛ւմ է հորիզոնը,
իմ արյունից ելնում է կա՛նչը Ապագայի (12):

Գեղագիտական այս ընտիր պատառիկը հիշեցնում է *աղբյուրի մոտ կանգնած բանաստեղծին՝ ինչ-որ բան խորհելիս կամ գեղագիտական պատկեր հնարելիս:* Դա հեղինակային տվայտանքների ու տանջանքների պահ է, բայց կողքից նայողը երբեմն դա չի ընկալում, թվում է՝ հանգստացող մարդ: Նա չի ճանաչում, չի պատկերացնում գեղագետի հոգեաշխարհը, մտավոր դեգերումները.

Այլ պատկեր. Բառի մեկուսարանից ելնում եմ
և մտնում սրահն Անհայտի,
և ստվերիս վրա գալարվում է
արշալո՛ւյսը ծովի (12):

Բացարձակ նորույթ-պատկեր ստեղծագործողի գեղագիտական տքնանքի պահին, մտավոր տանջանքների արդյունք-տաղանդն է, որը մեզ թվում է սովորական մտաշխատանք: Պահի նախանձելի բնակլիմայական տեղանքների անցումներ կան, որոնք մեզ հրաշք ու երջանկություն են թվում՝ պարգևված Աստծո կողմից, որն ամենքս չունենք: Նկարագրվող երևույթը ստեղծագործության արդյունքն է՝ թղթի վրա գրվողը և լուսանալու պահի առատ շառագունումն անդրադարձներով (արշալույսը ծովի):

Գեղագիտական այլ ընտիր պատառիկներ հիշեցնում են ստեղծագործելիս կրած տարաբնույթ հուզաշխարհի նկարագրություններ, որոնք հավասար են պատրանքների: Հեղինակի նկարագրության օբյեկտը մեր շրջապատն է, իսկ արտահայտությունը՝ հեղինակային աննման կարողությունը, գեղագիտական մտածողության հրաշք արտահայտությունը, հոգեաշխարհի փոխանցումը:

Անհասկանալի՞ են, արդյոք, եսայանական չափածոյի որոշ նմուշներ: Ո՛չ, ուղղակի նրա էության մեջ մխրճվել է պետք, հայ գեղագիտական մտքի ոճական նրբերանգներին լավ ծանոթ լինել է պետք, բառակապակցական նորույթներին հմտանալ է պետք, հայ գեղագիտական մտքի զարգացման հետ քայլել է պետք, մեր դժնի պայմաններում նաև աշխատել է պետք, իրականի հետ նաև գեղագիտականին ժամանակ տրամադրել է պետք:

Մենք կարծես ճակատագրին հետևելով, գեղագետների նուրբ հոգիները երբեմն ջարդում ենք անտրամադրությամբ, անգթորեն մի կողմ ենք նետում գրությունը: Կարծես տաժանակրության՝ անուշադրության ենք մղում ցավալի մեր կյանքի նուրբ գեղագետ ծառաներին (վկա՝ որդեկորույս բանաստեղծուհի Ժ. Բեգլարյանի տևական հիվանդությունը (գրածների արձագանքների չգոյությունը), Ռ. Եսայանի հայրենաշխարհափախուստը և այլն, բայց դիմանալ է պետք, այս է մեզ բաժին հասած դառն ճակատագիրն ի սկզբանե, ու դրա դեմ գոնե գրչով հնարավորինս պայքարել է պետք): *Եվ ցավի բիբերում ծնվող արշալո՛ւյսն է հիշողությունը տառի* (69), որը պիտի բռնենք ու առաջ շարժվենք…

Երբ ես տխրում եմ,
Երակներիս միջով հոսում է
Արցունքի՞ մոխիր:
Եվ ես իմ շնչի կրակով արթնացնո՛ւմ եմ
Առեղծվածային ոգին,
Իսկ իմ հոգում բացվո՛ւմ են հայտնության ծաղիկները… (45):

Բառի մեկուսարանից (12) ելած բանաստեղծը *Անհայտի սրահ է մտնում, ծովի արշալույսի գլորվելը ստվերի վրա զգում* (12) և հասկանում, որ Ցավոտ շո՛ւրթս կարոտ է դեռ հպումներին… (46), և դա յուրաքանչյուր մարդ արարածի զգայական ապրումների ինքնին ու բնական պահանջ է:

Շուրթերիդ պահը այնպե՞ս է շարժվում,
Որ իմ հոգուց բխում է ցո՛ղը երկնքի… (45):

Գեղագիտական խոսքը կատարում է իր հրաշքը: Հասարակ կապակցությունը՝ քամի լինել, այլաբերվում մի այլի՝ *և փոթորկված երկինքը տարուբերվում է ճյուղերին ծառի* (115) կամ հենց գեղագիտական ասելիքն է դառնում՝ Բառերի պատերազմով// *ո՛չ թե խոցվում է բիբը ճանապարհի,// այլ ընդարձակվո՛ւմ է տեսադաշտը տողի* (115), *ենթագրերը ճերմակ լռության* (104) և այլն:

Ռ. Եսայանի գեղագիտական ոճում երբեմն տողը նախադասության գերադաս և ստորադաս անվանական անդամներով է կառուցվում: Անգամ մեծ տրոհում է ունենում շարահյուսական խստապահանջ *հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը*՝ վերածվելով *կեղծ թերի անդեմ նախադասության* (կարևորված խոսք դառնում): Քննվող գրքում այլ անդամներ հազվագյուտ են լինում, օրինակ՝ որոշիչ-որոշյալ.

Դիպվածի սյուներ և թռիչք ոգու,
վիհերի ծորացող առավո՛տ է
վերքը քաղաքի:
Բոսո՛ր մի վարդ:

Խղճի խորխորատից ելնում է *լուսինը կարմիր* (119):

Այստեղ տրոհված բառակապակցություն կեղծ թերի նախադասությունը կարևորող բացահայտիչի իմաստ ունի՝ բոսոր մի վարդ, որը հետո արտահայտված նախադասության ենթակայի իմաստաբանական բացահայտիչն է՝ լուսինը կարմիր, որը քերականական արտահայտությամբ տևական դադարով՝ վերջակետով տրոհված շարահյուսական միավոր է:

Ինչպես նշեցինք, տարածվածը *հատկացուցիչ-հատկացյալ* կառույցն է համեմատաբար շատ, որը գործածվել է կեղծ թերի նախադասություն բացահայտիչի դերով: Ահա օրինակներ.

Ստվերիս պատուհանին հպվում է
Մի ուրվական:
Գոյության առանցքը:
Մի բազմակետ է
հետգրությունը
իմ ճանապարհի (141):

Լուսաբացի ճիչ (63), Բևեռների արցունքը (142), Ունայնության փոսը (146), Տարերքի վա՛ղը (69) և այլն:

Արցախյան բանաստեղծ Ռ. Եսայանի գեղագիտական խոսքում տեղ ունեն նաև ղարաբաղյան բարբառի բառագանձերից սակավ օրինակներ, ինչպես՝ *անշառ*՝ կցված գիտաբառին. Մենք ի զորո՞ւ ենք անշառ լուծությունում// քննել հիմնովին Բանն աշխարհի (14), *քլթքլթալ*՝ քարից *քլթքլթացող* աղբյուր է (128, 137):

Հեղինակի վեցերորդ հատոր ճանաչվող գեղագիտական ընդհանրական ու քննարկվող գրքի վերնագիրը՝ «Արամորդու գիրը», կարծես հայրապաշտական ընտրանու արտահայտություն լինի (և դա խոր ընդգծել է Ժ.Բեգլարյանը, էջ 247): Արամորդին ինքը հեղինակն է՝… բազմանշանակ բանաստեղծը (***Արամա ցեղի դպիր*** և որդի. Ռ. Եսայանի հայրանունն ԱՐԱՄ է):

Բառի ճանապարհ է գիրը Արամորդու (69):

Հոր հիշատակումը նաև «Սեղմում եմ ձեռքը հուշի» բազմաբովանդակ հայրենիքի խտացված արտահայտությունում է.

Սեղմում եմ
ձեռքը հուշի և փաթաթվում
երկնքով *հորովելի:*
Հորս դեմքը
ծաղկած ծառի պես
բարձրանում է
երկինքն ի վեր… (71):

Հեղինակի բանաստեղծություններում տեղ ունեն հուշագրություն չափածոյի նոր արտահայտություններ՝ նվիրված բանաստեղծի հետ առնչված տարաբնույթ էական մարդկանց, հարազատներին. Արցախյան գոյապայքարի մասնակից՝ վիրավոր զինվորին փրկողին. «Ռազմական բժշկուհի Աղավնի Սահակյանին» (էջ 19), բանասիրականի դասախոս (լուսահոգի) Գուրգեն Բաղդասարյանին՝ «Լույսը» (էջ 102), հարազատին՝ եղբոր դստերը՝ սիրելի Անուշին. «Կանգառների շնչառությունը» (էջ 101) և այլն:

Այսպիսով, անսպառ են Ռ. Եսայանի գեղագիտական հմայքի սքանչելիքները, նորովի կապակցությունների կիրառության հարստությունները, Արցախի չափածոյի զարգացմանը տված հնարավորությունները:

Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Բ. գ. թ., դոցենտ

ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ ՆԱՄԱԿԸ ՔՐՈՋԸ

«Նա նման է հսկա սառցալեռան, որը 9/10 մասով ընկղմված է օվկիանոսում և երևում է ընդամենը 1/10 մասով: Բայց այն, ինչը երևում է, հզոր է և հրաշալի իր փայլի մեջ»:

Ուիլյամ դը Կունինգ



«Նա»-ն Արշիլ Գորկին է՝ աշխարհահռչակ հայ նկարիչը, որի անունով 20-րդ դարի 30-40-ական թվականների ամերիկյան արվեստի շրջափուլը հաճախ բնութագրվում է որպես «Գորկու շրջան», և որի մասին 1967 թվականին ֆրանսիական մամուլը գրեց. «Գորկին միակն է, որը կարողացավ ամերիկյան գեղանկարչությունը եվրոպական մակարդակի հասցնել»:

Արշիլ Գորկի, նույն ինքը՝ 1904 թվականի ապրիլի 15-ին Վանի նահանգի Խորգոմ գյուղում ծնված Ոստանիկ չքնաղ հայկական անունով տղան՝ Ոստանիկ Սեդրակի Ադոյանը: Նույն ինքը՝ անցած դարի մեծագույն նկարիչներից մեկը, որին գաղթի ճանապարհները հասցրին հեռավոր ԱՄՆ՝ աչքերում միշտ վառ թողնելով ծննդավայրի գույներն ու պատկերները և ամեն ինչի մեջ ամենավառը՝ մոր կերպարը:

Գորկին սիրում էր հետևել, թե ինչպես են նկարում երեխաները: Հաճախ էր քրոջը՝ Վարդուշին ասում. «Նրանք իսկական նկարիչներ են՝ հինավուրց ժամանակների նկարիչներ: Նրանք այնքան մաքուր են ու այդպես էլ նկարում են: Երբ մենք էլ ենք ցանկանում այդպես նկարել, չի ստացվում: Այն, ինչը մեզ համար այդքան բարդ է, նրանց համար բնական է»:

Աշխարհահռչակ ամերիկահայ նկարիչ Արշիլ Գորկին իր կյանքի որոշակի հատվածում նամակներ է գրել քրոջը՝ Վարդուշին և քրոջորդուն՝ Կառլենին: Դրանցից յուրաքանչյուրը գրական մի ստեղծագործություն է, արվեստաբանական լուրջ վերլուծություն, սիրո արտահայտում, հոգու մերկացում: Ձեզ ենք ներկայացնում այդ նամակներից մեկը, որ Գորկին գրել է քրոջը 1943 թվականի հուլիսին, Վիրջինիա նահանգից:

«Իմ շա՛տ սիրելիներ,

Վարդո՛ւշ, թանկագի՛նս, նկարների այն շարքը, որի մասին խոսում էի, պատկերում է Հայաստանում Խորգոմի մեր պարտեզները: Ես դրանք անվանել եմ «Պարտեզ Սոչիում», թեպետ իրականում պետք է անվանեի «Պարտեզ Խորգոմում» և, կարծում եմ, որ այդպես էլ կանեմ: Որովհետև դա այդպես էլ կա: Ավա՜ղ, ամերիկացիները ոչինչ չգիտեն Հայաստանի մասին և ինձ ասել են, որ նրանք գերադասում են առավել «հայտնի» վայրերի անունները: Կարծում եմ, որ դա սխալ է, և դեռ կանդրադառնամ դրան: Սակայն վերնագրերն այնքան էլ կարևոր չեն: Կարևորը Հայաստանի ոգեշնչումն է, որն առաջնորդում է իմ նկարչությունը, ինչը, սակայն, ամերիկացիները դժվարությամբ են հասկանում:

Մի՞թե ես պարզամիտների համար եմ նկարում: Երբե՛ք… Հուսով եմ, սա պատասխանում է քո հարցերին:

Վարդո՛ւշ, թանկագի՛նս, արդյոք պատկերացնո՞ւմ ես, թե ինչպես են քննադատները շաղակրատում. դիմակ, որը թաքցնում է նրանց դատարկությունը: Օրինակ, նկարների այդ շարքում ամենավառ

ԱՇԽԱՐՀԱՀՈՉԱԿ ՀԱՅԵՐ

ՀԱՅ ԱԶԳԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊԱՐԾԱՆՔԸ



«Այս տղան ձեր գերդաստանի պատիվը կդառնա, մեր ժողովրդի և ֆրանսիացի ժողովրդի պարծանքը»:

Միսաք ՄԱՆՈՒՇՅԱՆ

Մարգարեական դարձավ Մ. Մանուշյանի խոսքը. տասնամյակներ անց շանսոնի արքա Ազնավուրը պիտի դառնար Ֆրանսիայի խորհրդանիշներից մեկը՝ էյֆելյան աշտարակի և Մոնմարտրի կողքին, իսկ ֆրանսիացիներն էլ պիտի խոստովանեին, թե՝ «Ֆրանսիան երկու Շառլ ունի, մեծ՝ դը Գոլը և փոքր՝ Ազնավուրը»: Ազնավուրի լույս աշխարհ գալուց դեռ շատ առաջ երգիչ դառնալ երազող և դրա համար բոլոր տվյալներով՝ թավշյա բարիտոնով, արտահայտիչ աչքերով, հարուստ ներաշխարհով օժտված գեղեցկատես Մամիկոն Ազնավուրյանը 1917-ին օպերետային խմբի կազմում Թիֆլիսից պիտի մեկներ Կոստանդնուպոլիս՝ չորսամյա հյուրախաղերի, այնտեղ պիտի ծանոթանար տեղի թերթերից մեկի մշակույթի բաժնի աշխատակից, Ձմյուռնիայում թուրքերի վայրագությունների հետևանքով ընտանիքն ու հարազատներին կորցրած պարմանուհի Քնար Բաղդասարյանի հետ, իր համար անսպասելիորեն նրան ամուսնության առաջարկ աներ, թատերախմբի ղեկավարը Քնարին վերցներ խմբի կազմում՝ երկու տարով մեծացնելով նրա տարիքը: Վրացահայ Մամիկոնն ու տաճկահայ Քնարը պիտի ամուսնանային և հրաշքով հեռանային արյամբ ողողված Օսմանյան Թուրքիայից՝ հյուրախաղերը շարունակելով Բուլղարիայում, ապա՝ Հունաստանում: Եղեռնից փրկված շատ ու շատ հայերի պես Ազնավուրյաններն իրենց նորածին դստեր հետ պիտի ընտրեին Ֆրանսիա, սակայն անհնար էր երբևէ մոռանալ հայրենիքը, որը կոչվում է ՀԱՅԱՍՏԱՆ: «Ես ֆրանսիացի եմ՝ հայկական ծագումով,- հետագայում կգրի Ազնավուրը:- Ֆրանսիայում ինձ երբեք օտարազգի չեմ համարել, սակայն միևնույն ժամանակ չեմ մոռացել, որ ծնունդով հայ եմ: Ֆրանսիայում մենք մեր ուրույն տեղն ունենք՝ Գառզու, Թրուայա, Վերնոյ...»: Այո՛, Ֆրանսիան պիտի դառնար բազում հայորդիների երկրորդ հայրենիքը, այստեղ պիտի գործեին և ֆրանսիական հողում իրենց հավիտենական հանգիստը գտնեին ականավոր հայորդիներից շատերը՝ Արմենակ Շահմուրադյանն ու Հակոբ Գյուրջյանը, ֆրանսիական կրթօջախներում պիտի իրենց ստեղծագործական վարպետությունը հղկեին Փանոս Թերլեմեզյանն ու Հովհաննես Չեքիջյանը: Եվ տարիներ անց արդեն ականավոր երգիչ, կոմպոզիտոր, բանաստեղծ, դերասան, Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրը պիտի խոստովաներ. «Ֆրանսիան իմ երկիրն է, Հայաստանը՝ իմ հավատը»:

Ազնավուրն առաջին ֆրանսիացի կատարողն էր, որը Եվրոպայում ստացավ պլատինե ձայնասկավառակ: Նրա երգերը կատարել են ինչպես ինքը, այնպես էլ Ռեյ Չարլզը, Բոբ Դիլանը, Շիրլի Բեյսին, Լայզա Մինելլին, Հուլիո Իգլեսիսը, Ֆրեդ Աստերը, Բինգ Կրոսբին և շատ ու շատ այլ հանրահայտ արտիստներ: Ազնավուրը զուգերգերով հանդես է եկել Ֆրենկ Սինատրայի, Սելին Դիոնի, Լուչիանո Պավարոտտիի, Պլաչիդո Դոմինգոյի, Պատրիսիա Կասսի, Լայզա Մինելլիի, Միրեյ Մաթյեի և այլոց հետ: Ավելի քան 1000 երգ է հեղինակել Ազնավուրը, որոնցից շատերն արդեն մտել են ֆրանսիական էստրադայի գանձարանը, դարձել էստրադայի կլասիկա: Նրա գրչին են պատկանում «Monsieur Carnaval» (1965), «Douchka» (1973) և «Lotrek» (2004, նվիրված է ֆրանսիացի նկարիչ Անրի Թուլուզ-Լոտրեկին) մյուզիքլների, ինչպես նաև մի քանի ֆիլմերի երաժշտությունը: Ազնավուրի աշխարհահռչակ երգերի թվում են «Բոհեմ»-ը, «Սիրո թմբուկներ»-ը, «Մամա»-ն, «Սիրուց հետո», «Հավերժական սեր», «Ոչ մոդայիկ ուրախություններ», «Երիտասարդություն», «Դեռ երեկ», «Իզաբել», «Նա», «Ինչպես ասում են», «Ավե Մարիա», «Ոչ, ես ոչինչ չեմ մոռացել», «Ես արդեն ներկայացրի», «Քանի որ», «Սա է վերջը», «Ալելույա», «Երկու կիթառ», «Տար ինձ», «Եվ սակայն», «Քաղաքը», «Պետք է գիտնալ», «Մեռնել հանուն սիրո» և այլն: «Ես հարյուր տոկոսով հայ եմ և հարյուր տոկոսով՝ ֆրանսիացի: Շատ կապված եմ իմ արմատներին, ամբողջականորեն հայ եմ իմ կենցաղով ու սովորույթներով և ամբողջականորեն ֆրանսիացի՝ իմ արվեստի մեջ: Ու երկվություն չկա այդ երկու հանգամանքների միջև: Շատ բան եմ ժառանգել իմ ծնողներից: Ես գաղթականի զավակ եմ և այդ իսկ բնույթով ունեցել եմ նվաճելու ձգտում: Եվ այդպես է, որ հայը անուն նվաճեց Ֆրանսիայում, և ֆրանսիացին՝ աշխարհում: Ես հայրենասեր չեմ, ես հայրենամոլ եմ»,- կասի Ազնավուրը:

1975-ին Հայոց մեծ եղեռնի 60-րդ տարելիցի կապակցությամբ Ապարտեիդի զավակ Ազնավուրը, ում ամերիկացիները կկոչեն a survivor (վերապրող), իր մշտական համահեղինակ Ժորժ Կառվարենցի հետ հորինում է «Ils sont tombs» («Նրանք ընկան») բալլադը՝ յուրատեսակ ռեքվիեմ միլիոնավոր անմեղ զոհերի հիշատակին, որոնց թվում էին Ազնավուրի թուրքահպատակ մոր ծնողները, երկու եղբայրներն ու քույրը, ովքեր անհետացան Մեծ Եղեռնի տարիներին, և որոնց փնտրեց մայրն իր ողջ կյանքում ու մինչև կենաց վախճանն ապրեց նրանց գտնելու հավատով. «Նրանք ընկան ու այդպես էլ չհասկացան, թե ինչու, Տղամարդ, կին, թե երեխա, որ ապրել էին ուզում այնքա՜ն, Հարբածի պես մարմնակործան նրանք ընկան, Հոշոտված ու սրի քաշված, աչքերը բաց, սարսափազդու»... (թարգմ.՝ Սամվել Գասպարյանի): Երգը, որը ձայնագրվեց Լոնդոնի Nova Sound ստուդիայում 1975 թվականի ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը, հնչել է ոչ միայն ֆրանսերեն՝ Ազնավուրի կատարմամբ, այլև հայերեն, անգլերեն և ռուսերեն: Տարիներ անց իր ծնողներին և մանկությանը Ազնավուրը կնվիրի քնքշանքով, կարոտաբաղձությամբ և լիրիզմով ներծծված երգը, որն այդպես էլ կվերնագրի՝ «Ինքնակենսագրություն»: Հետաքրքրական է Ֆրանսիայով մեկ շատ արագ տարածված և ջերմ ընդունելություն գտած երգի ստեղծման պատմությունը: Այստեղ հեղինակը վերադառնում է իր մանկությանը, իր արմատներին. «Ես իմ ողջ կյանքում զգացել եմ իմ ազգային, ընտանեկան արմատները, ինչը չափազանց կարևոր է արտիստի համար: Իմ մեջ բնական ցանկություն առաջացավ գրել իմ հուշագրությունը: Ավարտելով այն՝ ես ինքս ինձ համար քննության պես մի բան սարքեցի, որոշեցի մի քանի րոպե տևողությամբ երգում տեղավորել հուշագրության մի քանի գլուխ»: Այդ քննությունը փայլուն հաջողություն ունեցավ:

Հայկական թեմատիկայի վրա են հյուսված նաև նրա «Ձան» և «Քնքուշ Հայաստան» երգերը: Դստեր՝ Սեդա Ազնավուրի հետ նա հայերեն երգել է Սայաթ-Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի» երգը: Ազնավուրը երբեք չմոռացավ իր պատմական հայրենիքը: 1988-ի Սպիտակի երկրաշարժից ընդամենը մի քանի օր անց նա այցելում է Հայաստան, տուժածներին օգնում թե՛ փողով, թե՛ առաջին անհրաժեշտության պարագաներով՝ հագուստ, սնունդ, դեղորայք: Հազարավոր մարդկային կյանքեր խլած աղետալի երկրաշարժից հետո Ազնավուրը հիմնում է «Aznavour pour l'Armenie» (Ազնավուրը՝ Հայաստանին) բարեգործական ասոցիացիան և տուժածներին օգնելու նպատակով կազմակերպում մի քանի ակցիաներ: Դրանցից մեկի համար նա հրավիրում է Անրի Վերնոյին ու փոփերաժշտության, թատրոնի և կինոյի 90 համաշխարհային աստղերի՝ նրանց հետ համագործակցելով. «Pour toi, Armnie» («Քեզ համար, Հայաստան») երգի հիման վրա, որի տեքստը գրել էր Ազնավուրը, իսկ մեկ օր անց Կառվարենցը հորինել էր մեղեդին, ստեղծվում է բարեգործական տեսահոլովակը, որը վաճառվեց ռեկորդային քանակով՝ 2 միլիոն օրինակ: Երգի կատարմանը մասնակցում են Ադամոն, Ռոզի Արմենը, Շառլ Ազնավուրը, Կատյա Ազնավուրը, Ժիլբեր Բեկոն, Ժյուլիեն Կլերքը, Ջոննի Հոլիդեյը, Պատրիսիա Կասսը, Միրեյ Մաթյեն, Վանեսսա Պարադին, Պիեռ Ռիշարը, Շուշաննան, Մարինա Վլադին և էլի շատ ու շատ ուրիշներ: Երգի ձայնասկավառակների և մագնիտոֆոնային ձայնագրությունների իրացման, ինչպես նաև տեսահոլովակի ցուցադրման ողջ հասույթը փոխանցվում է արհավիրքից տուժածների ֆոնդին: «Pour toi, Armenie» («Քեզ համար, Հայաստան») երգն այսօր էլ՝ իր ստեղծումից 33 տարի անց, շարունակում է ապրել: 2022թ. մարտի 31-ին՝ Ռոսսինիի «Ստաբատ Մատերի» հրաշալի կատարումից հետո, «Pour toi, Armenie»-ն ֆրանսերենով հնչեց որպես բիս՝ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ, Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի անզուգական ղեկավարությամբ: Այսօր էլ առավել քան արդիական է Ազնավուրի հեղինակած տեքստը, որով նա վերստին դիմում է հայոց պատմության դժվարագույն փուլերից մեկն ապրող իր հայրենակիցներին, ովքեր այսօր ևս, ինչպես դաժան երկրաշարժից հետո, կարիք ունեն կարեկցանքի ու վշտակցության, նաև՝ մխիթարության ու լուսավոր ապագայի հանդեպ հավատի նորոգման՝ «Ոսկյա արևը թող ժպտա մի բուռ քո հողին, Հար ցնծա՛, իմ Հայաստա՛ն աշխարհ: Արցունքը քո սրբիր, թող հույսը քեզ օգնի, Գոտեպնդվի՛ր, իմ ժողովո՛ւրդ....» (թարգմ.՝ Գևորգ Արմենյանի):

Անանա ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
«Գիտություն» թերթ

Խմբ. կողմից. 2009թ. աշխարհահռչակ շանսոնյեն և Մեծ հայը այցելել է Արցախ: Նա եղավ իր անունը կրող մշակույթի կենտրոնում և մասնակցեց նրա բացման արարողությանը: Այնուհետև այցելեց Ստեփանակերտի Վերածննդի հրապարակ, որտեղ այդ պահին համերգային ծրագրով հանդես էին գալիս նրա քույրն ու դուստրը: Հավաքվածներին նա իր ուրախությունն էր հայտնել, որ վերջապես եկել է Արցախ: 2021թ. մայիսի 22-ին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնի պուրակում բացվեց աշխարհահռչակ շանսոնյեի կիսանդրին:

ձևով պատկերել եմ հայկական այն գեղեցիկ հողաթափերը, որ ես ու հայրիկն էինք հագնում, այն հողաթափերը, որ գնել էինք Վանում հայ նկարիչներից, երբ ես ու հորեղբայր Գրիգորը ձիով այնտեղ էինք գնացել: Հիշո՞ւմ ես: Նրանք համառորեն դրանք անվանում են թուրքական կամ պարսկական հողաթափեր: Ճիշտ այնպես, ինչպես, որ արաբական սուրճը կոչում են թուրքական: Սիրելի՛ քույր, շատ կուրախանաս, երբ իմանաս, որ նկարների այդ շարքի մեջ է մտնում նաև մայրիկի հայկական խնոցին՝ մեր աշխատասեր գեղջուկ կանանց թագի գոհարը: Ինպե՜ս են այդ օրերը վառ կերպով դրոշմվել հոգուս մեջ...

Մայրիկի հայկական աչքերը նրանք անվանում են պիկասոյական, հայկական տխրությունը՝ բյուզանդական ու ռուսական: Եվ եթե ես ուղղում եմ նրանց ու ասում. «Ոչ, սիրելի՛ պարոններ, դուք սխալվում եք, դրանք հայկական աչքեր են», ապա տարօրինակ ձևով վրաս են նայում ու ասում, որ դա պարզապես «փոքր ազգի շովինիզմի» չափազանցություն է: Պատկերացնո՞ւմ ես, եթե ուղղես նրանց, ապա դատապարտվում ես:

Մեր աչքերը: Մեր հայկական աչքերն ավելի շուտ են խոսում, քան շուրթերը կշարժվեն ու դեռ շարունակում են խոսել, երբ շուրթերն արդեն դադարել են խոսել:

Աշխարհի առաջին քրիստոնեական երկրի զավակին նրանք մահմեդական են կարծում: Նրանք անընդհատ փորձում են ինձ ուսումնասիրել, բայց ոչ թե ինձ, այլ նրա՛նց պետք է զննել ու ստուգել՝ պարզելու, թե ինչն է նրանց հասցրել տգիտության աստիճանին: Միշտ էլ եղել են անկեղծության սահմանները թափանցող շառլատաններ, նորույթի ալքիմիկոսներ, որոնք միամիտ մարդկանցից ավելի խելոք լինելով, խաբում են նրանց փարիսեցի քննադատների հետ միասին: Բայց կապարը չի կարող ոսկի լինել: Կարելի է կարծել, թե Հայաստանը երբեք գոյություն չի ունեցել, մեր հին նախնիներին, որոնք այնքան բան են արել քաղաքակրթության ու արվեստի ստեղծման համար, այստեղ փաստորեն չեն ճանաչում: Ինձ վրդովեցնում են շովինիզմի նրանց մեղադրանքները, երբ ես փորձում եմ բացատրել իմ մտքերը:

Վարդո՛ւշ, սիրելի՛ս, իմ գործերում ես շատ կողմերով նման եմ մեր հին գրողներին, քանզի մտովի մշտապես վերարտադրում եմ դարավոր Հայաստանի նուրբ գեղեցկությունները, քանի որ մեր հայաստանյան երիտասարդական տարիները մերսում են միտքս և այրում ինձ մեզ համար թանկ զգացողությունները պատկերելու ցանկությամբ: Իրենց տգիտությամբ նրանք դա սահմանափակություն են անվանում՝ չգիտակցելով, որ իրականում դա միանգամայն համապարփակ մի բան է, և որ բազմաթիվ ժողովուրդներ շատ կշահեին, եթե հնարավորություն ունենային ծանոթանալու դրանց հետ: Արվեստը վեր է ազգայնականությունից և կոչված է ունիվերսալ մարդու հայացքով տեսնելու նուրբ գեղեցկությունը, իրեն ու իր շրջապատը, և ամեն բան գերազանցող սահմանափակությունը:

Ես փափագում եմ այն պահը, երբ իմ նկարը հանկարծ արձագանքում է ինձ, երբ թվում է, թե այն խեղդվում է օդի պահանջից ու շնչասպառ լինում հաղորդակցվելու բուռն ցանկությունից: Կյանքի տրոփյունի այդ տառապալից վայրկյանը ազդարարում է նրա ավարտվածությունը: Ես վայր եմ դնում վրձինս: Կատարելությո՛ւն:

Հետո ավելի շատ կգրեմ: Ավելի հաճա՛խ գրիր, սիրելի՛ քույրիկ: Վիրջինիա նահանգը հիշեցնում է Հայաստանի հարթավայրերից մեկը, հատկապես, երբ իջնում էինք Արարատ-Արաքս դաշտավայրով, թեև, իհարկե, այդքան փառահեղ չէ: Շուտով նորից կգրեմ, որպեսզի ձեզ հետ ավելի մանրամասն քննարկեմ արվեստը: Կարոտում եմ բոլորիդ: Շատ համբույրներով:

Քո միշտ սիրող եղբայր՝

Գորկի»:

ԱՅԼԱԶԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ՄԵՐ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

Մայիսյան հաղթանակներին նվիրված՝ Ստեփանակերտի հ. 5 մանկապարտեզում՝ «Մանուկների մոլորակ»-ում կազմակերպվեց միջոցառում՝ «Մշակութային խաչմերուկ» խորագրով: Ինչո՞ւ մշակութային խաչմերուկ. «Մայիսյան հաղթանակների շարքում նաև Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակն է, որը ձեռք է բերվել բազմաթիվ ժողովուրդների համատեղ պայքարի ջանքերով»,- ասում է մանկապարտեզի տնօրեն

Սուսաննա Ավշարյանը՝ նշելով նաև, որ մշակույթը սահմաններ չի ճանաչում: Բարձր մշակույթը համամարդկային արժեք է:

Ներկաները՝ ԱՀ ԿԳՄՍՆ-ից, քաղաքապետարանից, Արցախի ռուսական համայնքից հրավիրվածներ, ծնողներ, ականատես եղան փոքրիկների՝ հայերեն, ռուսերեն երգերի ու տարբեր ժողովուրդների պարային կատարումներին: Անշուշտ, առաջնահերթը ազգայինն է:

Միջոցառումն սկսվեց մանկապարտեզում գործող՝ 4 տարեկան երեխաներից կազմված «Դո, ռե, մի» երգչախմբի ելույթով: «Գարուն», «Արցախի բալիկներ» զվարթ երգերին հաջորդեցին Մեծն Թումանյանի և Կոմիտասի «Կաքավիկ»-ը և այլ մանկական երգեր, որոնք ուրախ տրամադրություն են ստեղծում ու ոգևորում: Ապա՝ ազգագրական երգեր, այդ շարքում՝ «Թագվորի մեր», «Կուժն առա», «Զըմփիկ, զըմփիկ Զարինա» և այլն:

Վրացական կինտոների, գնչուական, ռուսական պարերը գունեղ կոլորիտ են ստեղծում: «Մենք երեխաներին մանկուց ծանոթացնում ենք տարբեր ժողովուրդների մշակույթին: Նրանք հասկանում են, որ հայկականը մերն է, բայց գոյություն ունի նաև այլ մշակույթ, այլ պարեր ու երգեր»,- ներկայացնում է Ս. Ավշարյանը:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին ստեղծված մշակութային արժեքներից է «Կատյուշա»-ն, որը երեխաները պարեցին մեծ ոգևորությամբ:

«Մշակութային խաչմերուկ»-ը մեկ անգամ ևս հնարավորություն է տալիս դաստիարակներին, աշխատողներին, պարուսույցին, երաժշտական ղեկավարին՝ նորովի ծանոթանալ այլ ազգերի, ժողովուրդների մշակույթին, հասկանալ, որ բոլոր մարդիկ կարող են հաշտ ու խաղաղ ապրել իրար կողքի հավասար իրավունքներով, հավասար հնարավորություն ունենալով ներկայացնել սեփական մշակույթը, պատմությունը»,- պարզաբանում է մանկապարտեզի տնօրենը:

Վերջում ներկայացվեց դրոշներով պար, որը շատ խորհրդանշական էր. ծածանվեց ՀՀ դրոշը, ներս մտավ փոքրիկ դարաբաղցին՝ դրոշը ձեռքին և արտասանեց. «Սա Արցախն ա, մի հափուռ ա, բայց սրտումս ա»: Սրանով մեկ անգամ ևս շեշտվեց միասնության գաղափարը. մենք մեկ ժողովուրդ ենք, մեկ ազգ ու այդպես էլ պետք է լինենք դարերով:

Արցախի ռուսական համայնքի ներկայացուցիչները մեկ անգամ չէ, որ այցելում են

«Մանուկների մոլորակ»: Նրանք միշտ սիրով են արձագանքում մանկապարտեզի հրավերին և դատարկաձեռն չեն այցելում. քաղցրավենիք, գրքեր կամ խաղալիքներ են նվեր բերում երեխաներին: Այս անգամ էլ բացառություն չէր:

Սեփ. լրատվություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (Դատարան) 2023թ. մայիսի 4-ի վճռով պատասխանող «ՋՊԴ» ՓԲԸ (ՀՎՀՀ 90022762, պետական գրանցման համար՝ 443.120.11101, հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Հեքիմյան փ., շ. 6 «բ»), ճանաչվել է սնանկ: Վճիռն օրինական ուժի մեջ է մտել 04.05.2023թ.:

Դատարանի 04.05.2023թ. որոշմամբ՝ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ա/ձ Արմեն Խաչատրյանը:

Պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են Դատարան սնանկության մասին այս հայտարարությունից հետո մեկամսյա ժամկետում:

Պարտատերերի առաջին ժողովը նշանակված է 2023թ. հուլիսի 20-ին, ժամը 12:00-ին, Դատարանի շենքում (հասցե՝ ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42):

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սնանկության գործով կառավարիչ

ԼՈՒԾԱՐՎՈՒՄ Է
«ԱԳՐՈՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՓԱԿ-ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն Արցախի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 69-րդ հոդվածի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ԱՀ օրենքի 47-րդ հոդվածի՝ Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի ապրիլի 17-ի թիվ 50 որոշմամբ լուծարվում է «Ագրոսպասարկում» փակ-բաժնետիրական ընկերությունը՝ գրանցված ԱՀ իրավաբանական անձանց պետռեգիստրի կողմից 21.12.21թ. գրանցման համար՝ 443.120.1209669: Պարտատերերը պահանջներ կարող են ներկայացնել լուծարման հանձնաժողովին սույն հայտարարության հրապարակման օրվանից հետո երկամսյա ժամկետում: Հասցե՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 40:

ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ

Վահան ՀԱԿՈԲՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ



Սա արև է,
Սա տող է,
Սա էլ կանաչ
Մամուռ է:
Իսկ սա ժայռ է
Երկնաքեր,
Մի տես՝ ինչքա՜ն
Ամուր է…

Ժայռի ճեղքից
Անհամբեր
Ժայթքել է
Կանաչը,
Իսկ կանաչի
Շրթունքին
Օրորվում է
Կակաչը:

Սև ծիծառն է
Ծղրտում,
Շուրջս
Գարունը վառ է:
Սակայն ժայռը
Անտարբեր,
Աննկուն ու համառ է:

Սա արև է,
Սա ցող է,
Սա էլ կանաչ
Մամուռ է:
Իսկ սա ժայռ է
Երկնաքեր,
Մի տես՝ ինչքա՜ն
Ամուր է...

* * *

Լինեի ժայռ, ու
Խոհերս կապույտ
Անդորրի նման
Փարվեին երկունքիս:
Ու գարնանային
Արևը փարվեր
Ճաք տված քունքիս...
Անմեղ, անտարբեր
Ցիր ու ցանքսի,
Կանաչ, վարդաբույր
Դաշտերի վրա:
Եվ արծաթագույն
Առվի կարկաչը
Ծիկրակեր օդում:
Միայն զգայի,
Որ շուրջս զուլալ
Գարունն է շռայլ,
Ուր հենց իշխում եմ
Ինքս ինձ վրա
Եվ ո՛չ ուրիշի...

* * *

Իմ պատուհանի
Փեղկերից հեռու
Օդը գնալով
դառնում է երկինք:
Իսկ այդ երկինքը
Ափսոսանք կոչվող
Ամպի ծվենն է
ինքն իր մեջ
լուծում…
Որից ավելի կապույտանում է
անհունը նրա:
Իմ պատուհանի
Փեղկերից հեռու
համառ բացվում է
Օրը ինքնական,
Ուր գիշերն արդեն
անելիք չունի,
Ուր ամպերն անզոր
Կարմիր թախիծ են
Կամ կարմիր անդորր,
Ու բորբ արևի ճմրթված
լույսով
Արարվում է օր,
Ուր ծաղիկները
Քնից են զարթնում,
Ուր գարնան օրն իր
Թախիծն է հյուծում…

* * *

Մի թախիծ եկավ
Թեթև, տրտում, սև,
Մի գարնան ծաղկի
Շոյեց ու գնաց:
Ու գարնան ծաղկից
Մի թերթիկ պոկվեց,
Ու լուսաբացին
Ծաղկի սրտի մեջ
Մի ցողիկ մնաց…

* * *

Օրը տարածք է,
Գուցե օրն ինքը
Այդ չցանկանա:
Օրը տարածք է,
Լինի անամպ, պարզ
Կամ թե ամպամած:
Բայց չցանկության
Համառ տարածքում
Ճշմարտությունը
Արմատ է գցում:
Գիշերն ինքն իրեն
Փոխվում է լույսի,
Գարուն է գալիս,
Խառնվում մեր հույսին:
Ծառերն են ծաղկում,
Բույր են տարածում,
Կանաչ դաշտի մեջ
Կովն է արածում:
Միշտ զգում ենք, որ
Լույս է, լուսաբաց:
Հոգու նման բաց…
Միշտ էլ այդպես է.
Ճշմարտության դեմ
Պետք է մանկանաս՝
Մինչև հասկանաս…

ԿՈՐԵԼ Է

Աստղիկ Գեղամի Հովհաննիսյանի՝ «Քույրական գործ» մասնագիտությամբ որակավորում ստանալու մասին AK N135 452 դիպլոմը՝ տրված «Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից 2015 թվականին:

Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 19.05.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: